

ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ԶՈԼԵՉ

Հ ա ս մ ի կ Խ ա չ ա տ ը յ ա ն
Գ ո հ ա ը Խ ա չ ա տ ը յ ա ն

Հ Ա Շ Վ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն
Հ Ա Շ Վ Ա Ռ ՈՒ Մ Ը
Բ Ա Ն Կ Ե Ր ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ 2003

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն**

**Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26**

Հեռ. (3 741) 537788

Հեռ./ֆաքս (3 741) 537767

Web-site: <http://www.fbc-edu.am>

E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկխորհրդատվական ծառայություններ» կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քոլեջ, 2003

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

Հայաստանի

Հանրապետության

կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Առաջաբան

«Հաշվապահական հաշվառումը բանկերում» ուսումնական նյութը բաղկացած է 18 գլխից, որոնցում պարզ և մատչելի լեզվով շարադրված են արդի բանկային համակարգում առավել տարածված և կիրառելի գործառնությունների նկարագիրը, նրանց հաշվապահական հաշվառման մոտեցումները: Մասնավորապես, ներդրումների, վարկերի, դեպոզիտների, ֆինանսական լիզինգի, հետաձգված ակտիվների և հետաձգված պարտավորությունների, պայմանական ակտիվների և պարտավորությունների, դրամագիտական արժեքների, ճանապարհային չեկերի, պլաստիկ քարտեռով գործառնությունների նկարագրությունը, բերված գործնական օրինակներն իրենց հաշվապահական ձևակերպումներով նյութը դարձնում են առավել հետաքրքրական և կիրառելի:

Ուսումնական նյութում օգտագործված են տերմիններ, հասկացություններ, սահմանումներ, որոնք համահունչ են թե միջազգային հաշվառման, թե ազգային հաշվառման ստանդարտներին, հաշվապահական հաշվառումը կանոնակարգող նորմատիվ ակտերին:

Ընդհանուր առմամբ, կատարված աշխատանքը շատ արժեքավոր է և օգտակար: Հեղինակները ջանասիրաբար ձգտել են իրենց բազմամյա պրակտիկ փորձը, տեսական գիտելիքների հետ զուգակցելով, փոխանցել շարադրվող նյութին, այն դարձնելով առավել հասկանալի ու բովանդակալից:

Յուրաքանչյուր գլխի վերջում բերված ինքնաստուգման հարցերը ընթերցողին հնարավորություն են տալիս ի մի բերել ստացված գիտելիքները:

Ուսումնական նյութը հաջողությամբ կարող է օգտագործվել ոչ միայն ֆինանսաբանկային քոլեջի ուսանողների, այլ նաև բանկային համակարգի աշխատողների, բանկային հաշվապահություն ուսումնասիրողների, ինչպես նաև տնտեսագիտական ֆակուլտետների ունկնդիրների կողմից:

Գ. Թառումյան

Հայներարտքանկի ֆինանսական տնօրեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....8

1.1. Հաշվապահական հաշվառման իրավական հիմքը8

1.2. Տեղեկատվական ռիսկ8

Ինքնաստուգման հարցեր9

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ (ՀՀՀՀՄ) ՆՊՏԱՏԱԿԻ ՈՒ ՀԱՄԱՈՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....10

2.1. Ներածություն10

2.2. ՀՀՀՀՄ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում10

2.3. ՀՀՀՀՄ 4 Մաշվածության հաշվառում11

2.4. ՀՀՀՀՄ 7 Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին11

2.5. ՀՀՀՀՄ 8 Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ11

2.6. ՀՀՀՀՄ 10 Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր11

2.7. ՀՀՀՀՄ 12 Շահութահարկ11

2.8. ՀՀՀՀՄ 16 Հիմնական միջոցներ12

2.9. ՀՀՀՀՄ 17 Վարձակալություն12

2.10. ՀՀՀՀՄ 18 Հատույթ12

2.11. ՀՀՀՀՄ 21 Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները12

2.12. ՀՀՀՀՄ 30 Բանկերի և նմանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ12

2.13. ՀՀՀՀՄ 32 Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը16

2.14. ՀՀՀՀՄ 33 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ16

2.15. ՀՀՀՀՄ 34 Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ16

2.16. ՀՀՀՀՄ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ16

2.17. ՀՀՀՀՄ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը17

Ինքնաստուգման հարցեր17

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎՎՆԵՐԻ ՊԼԱՆԸ.....18

3.1. Ներածություն18

3.2. Հաշվային պլանի կազմման սկզբունքները18

3.3. Հաշվապահական հաշվառման հաշիվների բացման և հաշվառման գործընթացը19

Ինքնաստուգման հարցեր19

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....20

4.1. Ներածություն20

4.2. Հաշվապահական տեղեկատվության ձևավորման ցիկը20

4.3. Սկզբնական փաստաթղթեր, մատյաններ, գլխավոր գիրք20

Ինքնաստուգման հարցեր26

ԳԼՈՒԽ 5. ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.....27

5.1. Ներածություն27

5.2. Թղթադրամներ և մետաղադրամներ (Currency and Coin)27

5.3. Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր27

5.4. Ավտոմատ զանձման սարքեր (ԱԳՍ կամ բանկոմատներ, ATM)28

5.5. Պահանջների նկատմամբ28

5.6. Գրամական միջոցներով կատարվող գործառնություններ28

5.7. Կանխիկ ակտիվների ներկայացումը հաշվեկշռում30

5.8. Ներքին վերահսկողական միջոցառումներ կանխիկ ակտիվների վերաբերյալ30

Ինքնաստուգման հարցեր31

ԳԼՈՒԽ 6. ԳՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ.....32

6.1. Ներածություն32

6.2. Գրամագիտական արժեքների հաշվառումը32

Ինքնաստուգման հարցեր32

ԳԼՈՒԽ 7. ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....33

7.1. Ներածություն33

7.2. Արտարժույթով կատարվող գործարքների հաշվառման կարգը33

Ինքնաստուգման հարցեր37

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.....38

8.1. Ներածություն38

8.2. Արժեկտրոնային և շուկայական տոկոսադրույքների տարբերությունները38

8.3. Արժեթղթերի ձեռքբերում անվանական արժեքով40

8.4. Արժեթղթերի ձեռք բերում հավելավճարով40

8.5. Արժեթղթերի ձեռքբերում գեղատիպոսով և ամորտիզացիա ուղիղ գծային մեթոդով42

8.6. Տոկոսների վճարման միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված ներդրումային արժեթղթերի հաշվառումը43

8.7. Առանց տոկոսների պարբերական վճարումների, գեղատիպոսով ձեռք բերված արժեթղթերի հաշվառումը44

8.8. Մինչև մարման ժամկետը վաճառվող ներդրումային արժեթղթերի վաճառքի հաշվառումը44

8.9. Արժեթղթերի վերաբերյալ բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում45
Ինքնաստուգման հարցեր46

ԳԼՈՒԽ 9. ՌԵՊՈ (ՀԵՏԳՆՄԱՆ) ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....47

9.1. Ներածություն47
9.2. Ռեպո (հետգնման) համաձայնագրով վաճառված արժեթղթեր47
9.3. Ռեպո (հետգնման) համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր47
Հավելված48
Ինքնաստուգման հարցեր50

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԵՐԻ, ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.....51

10.1. Ներածություն51
10.2. Վարկերի բնութագիրը51
10.3. Վարկի տոկոսային եկամտի հաշվարկ և գրանցումներ մատյանում52
10.4. Ժամկետային վարկի գրանցում մատյանում52
10.5. Մասնակի մարումներով սպառողական վարկերի գրանցում (Consumer installment loans)52
10.6. Վարկերի հնարավոր կորուստների հաշվառումը.....53
10.7. Չաշխատող վարկերի հաշվառում55
10.8. Վերանայված պայմաններով վարկերի հաշվառումը.....56
10.9. Գրավի տնօրինման կամ այլ պահանջներից առաջացած գույքի հաշվառումը58
10.10. Ֆակտորինգ (ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց)59
10.11. Վարկերի վերաբերյալ բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում59
Ինքնաստուգման հարցեր59

ԳԼՈՒԽ 11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ (ԼԻԶԻՆԳ).....60

11.1. Ներածություն60
11.2. Ֆինանսական վարձակալություն60
11.3. Ֆինանսական լիզինգի արտացոլումը վարձակալի հաշվեկշռում61
11.4. Ֆինանսական լիզինգի արտացոլումը վարձատուի հաշվեկշռում61
11.5. Ֆինանսական լիզինգի հաշվառման տիպային օրինակ62
11.6. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում64
Ինքնաստուգման հարցեր64

ԳԼՈՒԽ 12. ԴԵՊՈԶԻՏՆԵՐ (ԱՎԱՆԴՆԵՐ).....65

12.1. Ներածություն65
12.2. Դեպոզիտների բնութագրերը65
12.3. Դեպոզիտների տոկոսավճարները65
12.4. Դեպոզիտների մատչելիությունը65
12.5. Դեպոզիտային հաշիվների դասակարգումները65
12.6. Ավանդների սպասարկման վճարներ66
12.7. Դեպոզիտների գծով պարտադիր պահուստավորման պահանջները66
12.8. Ավանդային գործառնությունների հաշվառումը67
12.9. Ավանդների համար վճարվելիք տոկոսներ69
12.10. Կուտակված և վճարված տոկոսների գրանցումները մատյանում70
12.11. Ավանդների ներկայացումը ֆինանսական հաշվետվություններում71
Ինքնաստուգման հարցեր72

ԳԼՈՒԽ 13. ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....73

13.1. Ներածություն73
13.2. Դեբետային քարտերի հաշվառումը73
13.3. Կրեդիտային քարտերի հաշվառումը.....73
13.4. Բանկումատով կատարված գործառնությունների հաշվառումը.....74
Ինքնաստուգման հարցեր75

ԳԼՈՒԽ 14. ՊԵՏԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ, ՊԱՆՈՒՄՆԵՐ.....76

14.1. Ներածություն76
14.2. Ակրեդիտիվներով գործառնությունների հաշվառումը76
14.3. Բանկային երաշխիքների հաշվառումը.....77
14.4. Ֆինանսական պարտավորագրեր78
14.5. Պահուստների հաշվառումը78
14.6. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում78
Ինքնաստուգման հարցեր79

ԳԼՈՒԽ 15. ԱՇԽԱՏԱՎԱՐՉԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.....80

15.1. Ներածություն80
15.2. Աշխատավարձից պահվող հարկերը և պարտադիր վճարները80
15.3. Աշխատավարձի և նրան հավասարեցված վճարների հաշվարկ և հաշվառում81
Ինքնաստուգման հարցեր84

ԳԼՈՒԽ 16. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....85

16.1. Ներածություն85
16.2. Հետաձգված հարկ85
16.3. Հետաձգված հարկային ակտիվ և հետաձգված հարկային պարտավորություն86
16.4. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում87

<i>Ինքնաստուգման հարցեր</i>	87
ԳԼՈՒԽ 17. ԿԱՊԻՏԱԼԻ	
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ	88
17.1. Ներածություն	88
17.2. Բաժնետիրական (կանոնադրական) կապիտալ.....	88
17.3. Մատյանի գրանցումներ կապիտալի առանձին տարրերի գործառնությունների համար	89
17.4. Կապիտալի բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում	90
<i>Ինքնաստուգման հարցեր</i>	90
ԳԼՈՒԽ 18. ԴՐԱՄԱԿԱՆ ՍԻՋՈՑՆԵՐԻ	
ՀՈՍՔԵՐ	91
18.1. Ներածություն	91
18.2. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կառուցվածքը	91
18.3. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության մոդելը	92
18.4. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կազմումը	92
<i>Ինքնաստուգման հարցեր</i>	96
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՑԱՆԿ	97
ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ	
ՑԱՆԿ	97
ՀԱՆԳՈՒՑԱՑԻՆ ԲԱՌԵՐԻ	
ՑՈՒՑԻՉ	98

ԳԼՈՒԽ 1. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են այն որակական պահանջները, որոնք ընկած են բանկի հաշվառման և հաշվետվական համակարգի հիմքում, առանձնակի կարևորվում է տեղեկատվական ռիսկ առաջացնող գործոնների նկարագրությունը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողը կկարողանա գնահատել հաշվառման և հաշվետվությունների դերը, կտիրապետի հաշվապահական հաշվառումը կարգավորող նորմերին և կհմանա տեղեկատվական ռիսկի ու նրանից խուսափելու կանոնների մասին:

1.1. Հաշվապահական հաշվառման իրավական հիմքը

Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է, որն իրականացվում է գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով: Հաշվապահական հաշվառում վարելը պարտադիր է բոլոր կազմակերպությունների համար:

Հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացվում է ՀՀ կառավարության լիազորած պետական մարմնի կողմից, իսկ բանկերում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ ՀՀ կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են.

- ա) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը
- բ) Հաշվապահական հաշվառման ստանդարտները
- գ) Հաշվապահական հաշվառման հաշվային պլանը
- դ) Ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման իրահանգները
- ե) Հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

1.2. Տեղեկատվական ռիսկ

Հաշվապահական հաշվառման գործընթացի կարևոր փուլերից մեկը բանկի գործառնությունների ֆինանսական ներկայացումն է կամ հաշվետվությունների կազմումը, քանի որ վերջինիս հիման վրա են կայացվում ֆինանսական և կառավարչական որոշումները:

Ֆինանսական հաշվետվությունները ներառում են [հաշվապահական հաշվեկշիռը](#), ֆինանսական արդյունքների, [կապիտալի](#) շարժի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ժանոթագրությունները (ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը) և աուդիտային եզրակացությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այն սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և ընթացակարգերի ամբողջությունն է, որն ընդունվում և կիրառվում է կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու համար:

Բանկային գործում շատ է կարևորվում ֆինանսական հաշվառման և հաշվետվությունների հետ կապված ռիսկը: Սա այն ռիսկն է, որը պայմանավորված է բանկի ողջ տեղեկատվական համակարգում ներառված և մշակված տվյալների ճշտությամբ և հուսալիությամբ:

Տեղեկատվական ռիսկն առաջանում է, երբ

1. տեղեկատվական համակարգ մուտքագրված չեն անհրաժեշտ տվյալներ
2. տեղեկատվական համակարգ մուտքագրված են ոչ ճիշտ տվյալներ
3. տեղեկատվությունն անհետանում է մշակման գործընթացում
4. տեղեկատվությունն աղավաղվում է ոչ ճիշտ վերլուծության հետևանքով
5. տեղեկատվությունը մշակող գործառնական համակարգի մշակման հիմքում հաշվի չեն առնվել (կամ մասամբ են հաշվի առնվել) հաշվապահական հաշվառումը կարգավորող նորմերը, ներքին կանոնակարգերի պահանջները:

Տեղեկատվական ռիսկից խուսափելու նպատակով խիստ անհրաժեշտ է տիրապետել հաշվապահական հաշվառման կանոններին, ընթացակարգերին և հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման ժամանակ պահպանել հետևյալ որակական պահանջները, որոնք ամրագրված են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում և ԹԻՎ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտում.

- *Ճշմարիտ ներկայացում*, այսինքն՝ ֆինանսական հաշվետվությունները պետք է ճշմարիտ ներկայացնեն կազմակերպության ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և ֆինանսական վիճակի փոփոխությունները: ՀՀՀՀՅ-ների պատշաճ կիրառումը՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ բացահայտումներով հանգեցնում է ճշմարիտ ներկայացմանը:
- *Համապատասխանություն ՀՀՀՀՅ-ներին*, որը ենթադրում է, որ պետք է կիրառվեն բոլոր ՀՀՀՀՅ-ների և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերի բոլոր պահանջները: ՀՀՀՀՅ-ների համապատասխանության փաստը պետք է բացահայտվի:
- *Անընդհատություն*. ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պետք է գնահատի կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը: Ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստվեն կազմակերպության գործունեության

անընդհատության հիման վրա, բացի այն դեպքերից, երբ ղեկավարությունը մտադիր կամ ստիպված է կազմակերպությունը լուծարել կամ նրա գործունեությունը դադարեցնել:

- **Արժանահավատության սկզբունք.** ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է ճշմարիտ ներկայացնի կազմակերպության ֆինանսական վիճակը, ինչպես նաև արտացոլի՝
 - ա) ոչ միայն իրավական կողմը, այլ նաև դեպքերի և գործառնությունների տնտեսական բովանդակությունը
 - բ) լինի չեզոք , զերծ մնա կանխակալությունից
 - գ) լինի հաշվենկատ
 - դ) լինի ամբողջական բոլոր էական դրսևորումներում:
- **Չափվեզրման սկզբունք.** կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվեզրման սկզբունքի հիման վրա, համաձայն որի դեպքերը և գործառնությունները ճանաչվում են դրանց տեղի ունենալու (կատարման) պահին, այլ ոչ թե դրանց դիմաց դրամական միջոցների կամ դրանց համարժեքների ստացման կամ վճարման պահին:
- **Ներկայացման հետևողականություն.** ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը պետք է պահպանվի, բացառությամբ այն դեպքերի, երբ.
 - ա) նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ նրա ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ փոփոխությունը հանգեցնելու է գործառնությունների և իրադարձությունների ավելի պատշաճ ներկայացմանը, կամ
 - բ) ներկայացման փոփոխությունը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով, կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերով:
- **Էականություն և միավորում.** ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր էական հոդված պետք է ներկայացվի առանձին: Ոչ էական հոդվածները պետք է միավորվեն համանման բնույթի հոդվածների հետ և չպետք է ներկայացվեն առանձին:
- **Չափանցում,** ենթադրում է, որ ակտիվներն ու պարտավորությունները չեն հաշվանցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ թույլատրվում է հաշվապահական հաշվառման մեկ այլ ստանդարտով: Եկամուտների և ծախսերի հոդվածները պետք է հաշվանցվեն միայն այն դեպքերում, երբ տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է հաշվանցումը, կամ շահույթները, վնասները և դրանց հետ կապված ծախսերը, որոնք առաջանում են նույն կամ համանման գործառնություններից կամ դեպքերից, էական չեն:
- **Չամադրելի տեղեկատվություն.** ենթադրում է, որ թվային ողջ տեղեկատվության գծով պետք է բացահայտվի նախորդ ժամանակաշրջանին վերաբերող համադրելի տեղեկատվությունը, եթե հաշվապահական հաշվառման այլ ստանդարտով չի պահանջվում կամ չի թույլատրվում այլ մոտեցում:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է հաշվապահական հաշվառումը:
2. Թվարկել հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական նորմերը:
3. Ի՞նչ է տեղեկատվական ռիսկը:
4. Ի՞նչ որակական պահանջներ են ընկած հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆՈՒԲՆԵՐԻ (ՀՀՀՀՍ) ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է ազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների ստեղծման անհրաժեշտությունը, համառոտակի մեջբերումներ են կատարվում բանկերի համար առավել կիրառելի ստանդարտներից:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ բացատրել ազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների ստեղծման անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը, ներկայացնել նրանց ցանկը, կիրառության ոլորտը:

2.1. Ներածություն

Սկսած 90-ական թվականներից, Հայաստանի Հանրապետությունում սկսեցին իրականացվել *բարեփոխումներ* հաշվապահական հաշվառման բնագավառում: Բարեփոխումների հիմնական նպատակն էր հաշվապահական հաշվառման գործող համակարգը համապատասխանեցնել շուկայական տնտեսության նոր պահանջներին:

Բանկերում բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնականում թելադրված էր հետևյալ 3 գործոններով.

- ա) համատեղ ձեռնարկությունների ստեղծում և զարգացում
- բ) թղթակցային հարաբերությունների հաստատում ինչպես ԱՊՀ, այնպես էլ միջազգային գործընկերների հետ
- գ) արժանահավատ և համադրելի ֆինանսական ցուցանիշների համակարգի ստեղծում միասնական տեղեկատվական հիմքի ձևավորման միջոցով:

Բարեփոխումների սկիզբը դրվեց «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ¹ (19.05.1998թ.), որից հետո նույն թվականին ընդունվեց ՀՀ կառավարության «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին» թիվ 740 ծրագրային որոշումը, որով կանոնակարգվեց հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների գործընթացը:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի (ստեղծված 1973թ.) կողմից ընդունված ստանդարտների հիմքի վրա սկսեցին մշակվել Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման *ստանդարտները (ՀՀՀՀՍ)*: 2003թ. հոկտեմբերի դրությամբ արդեն հաստատվել և գործում է թիվ 33 ստանդարտ:

Հաշվապահական հաշվառման ստանդարտներն ուղեցույցներ են, հաշվապահական հաշվառման մոտեցումների նկարագրություն, որոնք պարտադիր կերպով պետք է հաշվի առնվեն կազմակերպությունների կողմից՝ հաշվապահական հաշվառումը իրականացնելիս, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու հրապարակման ժամանակ:

Այս գլխում համառոտակի ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում գործող հաշվապահական հաշվառման առանձին ստանդարտների հիմնական նպատակը, կիրառության ոլորտները:

2.2. ՀՀՀՀՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Սույն ստանդարտի նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման հիմունքների սահմանումը՝ ապահովելու համար տվյալ կազմակերպության և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համադրելիությունը:

Այդ նպատակն իրագործելու համար ՀՀՀՀՍ 1-ով սահմանվում են.

- ա) ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր նկատառումները
- բ) դրանց կառուցվածքի վերաբերյալ ցուցումներ
- գ) դրանց բովանդակության նկատմամբ նվազագույն պահանջները:

ՀՀՀՀՍ 1-ը կիրառվում է ընդհանուր նշանակության բոլոր ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ, որոնք պատրաստվում և ներկայացվում են ՀՀՀՀՍ-ներից համապատասխան:

Ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններն այն հաշվետվություններն են, որոնց նպատակն է բավարարել օգտագործողների կարիքները, նրանց տրամադրելով կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակում փոփոխությունների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվություն:

Այս ստանդարտը կիրառվում է կազմակերպությունների բոլոր տեսակների նկատմամբ, ներառյալ բանկերը և ապահովագրական կազմակերպությունները:

Բանկերի և սնանատիպ ֆինանսական հաստատությունների համար լրացուցիչ պահանջները, որոնք համահունչ են սույն ստանդարտի պահանջներին, շարադրված են ՀՀՀՀՍ 30

¹ Իետազայում «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքն ենթարկվել է որոշ փոփոխությունների և նոր օրենքը ընդունվել է 26.12.2002թ.

«Բանկերի և նմանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվությունների բացահայտում» ստանդարտում:

2.3. ՀՀՀՀՄ 4 Մաշվածության հաշվառում

Այս ստանդարտը կիրառվում է մաշվածության հաշվառման ժամանակ, բոլոր մաշվող ակտիվների համար, բացառությամբ՝

- ա) հիմնական միջոցների
- բ) անտառների և նմանատիպ վերականգնվող բնական ռեսուրսների
- գ) հանքանյութերի, նավթի, բնական գազի և նման չվերականգնվող այլ ռեսուրսների հետազոտության և արդյունահանման ծախսումների
- դ) հետազոտության և զարգացման ծախսումների
- ե) գույքիլի:

2.4. ՀՀՀՀՄ 7 Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

Այս ստանդարտի նպատակն է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների փաստացի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության օգնությամբ, որտեղ դրամական հոսքերը դասակարգվում են ըստ գործառնական, ներդրումային (ինվեստիցիոն) և ֆինանսական գործունեության:

Այսպիսի տեղեկատվության ներկայացումը մյուս ֆինանսական հաշվետվությունների հետ միասին հնարավորություն է տալիս օգտագործողներին զննատել կազմակերպության՝

- ա) զուտ ակտիվներում տեղի ունեցող փոփոխությունները
- բ) ֆինանսական կառուցվածքի փոփոխությունները
- գ) վճարունակությունն ու իրացվելիությունը
- դ) դրամական միջոցների հոսքերի գումարների և ժամկետների վրա ազդելու ունակությունը

ե) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ստեղծելու կարողությունը:

Ստանդարտը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների մեջ ներառվող տարրերի կազմը, գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության նկարագրությունը, առանձնահատկությունները:

2.5. ՀՀՀՀՄ 8 Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Այս ստանդարտի նպատակն է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության որոշակի հողվածների դասակարգումը, բացահայտումը և հաշվառման մոտեցումների սահմանումը, որպեսզի կազմակերպությունները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը կազմեն և ներկայացնեն միասնական հիմունքներով: Այն ապահովում է ինչպես հաշվետու կազմակերպության տարբեր ժամանակաշրջանների, այնպես էլ հաշվետու կազմակերպության և տարբեր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համադրելիությունը:

Այդ իսկ նպատակով ՀՀՀՀՄ 8-ը պահանջում է արտասովոր (արտակարգ) հողվածների դասակարգում և բացահայտում, ինչպես նաև որոշակի հողվածների բացահայտում, որոնք վերաբերում են սովորական գործունեության շահույթին կամ վնասին:

Այս ստանդարտով սահմանվում է նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և էական սխալների ուղղման մոտեցումները:

Էական սխալները ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներն են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել՝ իրենց ներկայացման ամսաթվի դրությամբ:

2.6. ՀՀՀՀՄ 10 Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Այս ստանդարտի նպատակն է սահմանել, թե կազմակերպությունը երբ պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվությունները՝ կապված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի հետ, և այն բացահայտումները, որոնք կազմակերպությունը պետք է կատարի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար վավերացման (ստորագրման) ամսաթվի, ինչպես նաև հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ:

Ստանդարտը նաև պահանջում է, որ կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները չպետք է պատրաստի անընդհատության հիմունքով, եթե հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը ցույց են տալիս, որ անընդհատության սկզբունքի կիրառումը տեղին չէ:

Այս ստանդարտը կիրառվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի հաշվապահական հաշվառման և բացահայտման համար:

2.7. ՀՀՀՀՄ 12 Ծահուփահարկ

Այս ստանդարտի նպատակն է սահմանել շահութահարկի հաշվապահական հաշվառման մոտեցումները, ակտիվների (պարտավորությունների) հաշվեկշռային արժեքի ապագա

փոխհատուցման (մարման), ինչպես նաև կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ընթացիկ ժամանակաշրջանի գործարքների և այլ իրադարձությունների ընթացիկ և ապագա հարկային հետևանքները:

Ստանդարտն անդրադառնում է այն ժամանակավոր տարբերությունների հաշվառման հարցերին, որոնք ի հայտ են գալիս, երբ առանձին գործարքների ֆինանսական հաշվառումը տարբերվում է նրանց հարկային նպատակներով հաշվառումից:

Սույն ստանդարտով տրվում են շահութահարկի հաշվառման հետ կապված հարկային բազա, հետաձգված հարկային ակտիվներ, հետաձգված հարկային պարտավորություններ, ժամանակավոր տարբերություններ տերմինների սահմանումները:

2.8. ՀՀՀՀՄ 16 Հիմնական միջոցներ

Այս ստանդարտը սահմանում է հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման մոտեցումները: Հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են.

- ա) ճանաչման պահի որոշումը
- բ) հաշվեկշռային արժեքի որոշումը
- գ) մաշվածության հաշվարկումը
- դ) արժեզրկումից կորստի որոշումն ու հաշվառումը
- ե) բացահայտվող տեղեկատվության նկատմամբ պահանջները:

Այս ստանդարտը կիրառվում է հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման ժամանակ, բացի այն դեպքերից, երբ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման մեկ այլ ստանդարտ պահանջում կամ թույլ է տալիս հաշվապահական հաշվառման այլ մոտեցում:

Ստանդարտը ներկայացնում է հիմնական միջոցների առանձին դասերը, հիմնական միջոցների, մաշվածության սահմանումները, մաշվածության հաշվարկման մեթոդները, վերագնահատման հիմնական սկզբունքները, հիմնական և այլընտրանքային մոտեցումների նկարագրությունը, հաշվապահական մոտեցումները:

2.9. ՀՀՀՀՄ 17 Վարձակալություն

Այս ստանդարտի նպատակն է սահմանել վարձակալների և վարձատուների ֆինանսական և գործառնական վարձակալությունների հաշվապահական հաշվառման կարգը և դրանց գծով բացահայտումները:

ՀՀՀՀՄ 17-ը կիրառվում է բոլոր այն վարձակալությունների նկատմամբ, որոնց համաձայն ակտիվի օգտագործման իրավունքը վարձատուն որոշակի վճարի դիմաց փոխանցում է վարձակալին:

Ստանդարտում տրված են ֆինանսական և գործառնական վարձակալությունների պայմանագրերի հետ կապված բոլոր տերմինների սահմանումները: Նկարագրված են բոլոր այն առանձնահատկությունները և չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել վարձակալությունները դասակարգելու և հաշվառելու ժամանակ:

2.10. ՀՀՀՀՄ 18 Հասույթ

Այս ստանդարտի նպատակն է ներկայացնել գործարքների և իրադարձությունների որոշ տեսակներից առաջացող հասույթի հաշվապահական հաշվառման մոտեցումները: Հասույթի հաշվառման համար շատ կարևոր է նրա ճանաչման պահի որոշումը:

Հասույթը ճանաչվում է, երբ հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կիսուեն կազմակերպություն և այդ օգուտները կարելի է արժանահավատորեն չափել: Այս ստանդարտը սահմանում է այն հանգամանքները, որոնց դեպքում վերը նշված չափանիշների պահանջները կբավարարվեն, և հետևաբար՝ հասույթը կճանաչվի:

2.11. ՀՀՀՀՄ 21 Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

Արտարժույթով գործարքների և արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են՝ որոշել, թե ինչ փոխանակման փոխարժեք կիրառել և ֆինանսական հաշվետվություններում ինչպես ճանաչել փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ֆինանսական հետևանքները:

Այս ստանդարտը կիրառվում է.

- ա) արտարժույթով գործարքները հաշվառելիս և
- բ) արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունները վերահաշվարկելիս, որոնք ներառվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ համախմբման, համամասնական համախմբման կամ բաժնեմասնակցության մեթոդով:

Կազմակերպությունները հաշվապահական հաշվառումը վարում են և ֆինանսական հաշվետվությունները կազմում ու ներկայացնում են Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով, իսկ որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը:

2.12. ՀՀՀՀՄ 30 Բանկերի և մանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ

Այս ստանդարտն այն միակ ստանդարտն է, որը չի կիրառվում ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից. այն բացառապես կիրառվում է բանկերի և նմանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվությունների բացահայտման համար:

Բանկերը ներկայացնում են տնտեսության խոշոր և ազդեցիկ հատվածը: Կազմակերպությունների և քաղաքացիների մեծամասնությունն օգտվում է բանկերից՝ որպես ավանդատուներ կամ փոխառուներ, իսկ նրանք կարիք ունեն արժանահավատ և համադրելի տեղեկատվության, որը հնարավորություն կտա գնահատել տվյալ բանկի ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները և օգտակար կլինի տնտեսական որոշումներ կայացնելու համար:

Չետևաբար, բանկերի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների հաշվապահական հաշվառման ու ֆինանսական հաշվետվություններին ներկայացվող պահանջները էականորեն տարբերվում են այլ կազմակերպություններին ներկայացվող պահանջներից:

Ուստի, այս ստանդարտի հիմնական նպատակն է.

ա) սահմանել առանձնահատուկ պահանջներ բանկերի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ

բ) նպաստել, որ բանկի ղեկավարությունը ներկայացնի մեկնաբանություններ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որում ընդգրկվեն տեղեկություններ բանկի իրացվելիության, վճարունակության, ինչպես նաև բանկային առանձին գործառնությունների հետ կապված ռիսկերի կառավարման ու վերահսկման մեթոդների մասին:

Ստորև ներկայացվում են բանկերի հաշվետվական համակարգին ներկայացվող այն հիմնական պահանջները, որոնք ամրագրված են սույն ստանդարտում:

2.12.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Բանկերն իրենց ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող հոդվածների ճանաչման և չափման համար օգտագործում են տարբեր մեթոդներ: Չետևաբար, որպեսզի օգտագործողները հասկանան բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմունքները, անհրաժեշտ է, որ բանկը հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտի հետևյալ հոդվածները.

- եկամտի հիմնական տեսակների ճանաչումը
- ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատումը
- վարկերի և այլ փոխատվությունների գծով կորուստների որոշման և չհավաքագրվող վարկերի և այլ փոխատվությունների դուրսգրման հիմունքը
- ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը:

2.12.2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Բանկը ներկայացնում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, որում եկամուտները և ծախսերը պետք է խմբավորվեն ըստ բնույթի և բացահայտվեն դրանց հիմնական տեսակների գումարները:

Բանկի գործառնություններից առաջացող եկամուտների հիմնական տեսակներն են՝ տոկոսները, ծառայությունների դիմաց ստացված կոմիսիոն վճարները, դիվիդենդները, ներդրումային գործառնությունների արդյունքները:

Բանկի գործառնություններից առաջացող ծախսերի հիմնական տեսակներն են՝ տոկոսները, կոմիսիոն վճարները, վարկերից և այլ փոխատվություններից առաջացող կորուստները, ներդրումների հաշվեկշռային արժեքի նվազման հետ կապված հատկացումները և ընդհանուր վարչական ծախսերը:

Եկամտի և ծախսի յուրաքանչյուր տեսակ բացահայտվում է առանձնացված, որպեսզի օգտագործողները կարողանան գնահատել բանկի գործունեության արդյունավետությունը:

Ներքոհիշյալ գործառնություններից ստացվող շահույթներն ու կորուստները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ներկայացվում են զուտ հիմունքով.

ա) վերավաճառքի համար նախատեսված ներդրումների օտարումը և դրանց հաշվեկշռային արժեքի փոփոխությունները

բ) վաճառքի համար նախատեսված ներդրումների օտարումը և դրանց հաշվեկշռային արժեքի փոփոխությունները

գ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների օտարումը

դ) արտարժույթով գործառնությունները (առք ու վաճառք):

Եկամուտների և ծախսերի հոդվածները չեն կարող հաշվանցվել: Հաշվանցումները օգտագործողներին հնարավորություն չեն տալիս գնահատել բանկի գործունեության առանձին տեսակների արդյունավետությունը և ակտիվների որոշակի դասերից ստացվող արդյունքները:

2.12.3. Հաշվապահական հաշվեկշիռ

Բանկը ներկայացնում է հաշվապահական հաշվեկշիռ, որում ակտիվները և պարտավորությունները խմբավորվում են ըստ բնույթի և արտացոլվում ըստ հարաբերական իրացվելիության:

Ընթացիկ և ոչ ընթացիկ հոդվածները հաշվեկշռում առանձին-առանձին չեն ներկայացվում, քանի որ բանկի ակտիվների և պարտավորությունների մեծ մասը կարող է իրացվել կամ մարվել մոտակա ապագայում:

Հաշվապահական հաշվեկշիռը կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները պետք է ընդգրկեն, սակայն չպետք է սահմանափակվեն ակտիվների և պարտավորությունների հետևյալ հոդվածներով.

Աղյուսակ 1. Հրապարակվող հաշվեկշիռ Պարտավորություններ

Ակտիվներ	Պարտավորություններ
Ղրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	ՀՀ ԿԲ նկատմամբ պարտավորություններ,
Փանձապետական և այլ մուրհակներ ու պարտատոմսեր	Այլ բանկերից ստացված ավանդներ,
Վերավաճառքի համար նախատեսված ներդրումներ	Ղրամական շուկայից ստացված այլ ավանդներ,
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ, այլ բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ	Այլ ավանդատուների նկատմամբ պարտավորություններ,
Ղրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	Ավանդային սերտիֆիկատներ,
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ,	Թողարկված մուրհակներ, պարտատոմսեր և նմանատիպ այլ պարտավորություններ,
Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	Այլ փոխառու միջոցներ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	

Այլ բանկերի, զրամական շուկայի այլ մասնակիցների և այլ ավանդատուների հետ ունեցած մնացորդների առանձնացումը նշանակալի տեղեկատվություն է, քանի որ այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու բանկի և այլ բանկերի ու զրամական շուկայի այլ մասնակիցների փոխհարաբերությունների և դրանցից բանկի կախվածության վերաբերյալ: Այդ իսկ պատճառով հաշվեկշռում բանկն առանձին բացահայտում է.

- ա) մնացորդները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում
- բ) այլ բանկերում տեղաբաշխված միջոցները
- գ) զրամական շուկայում տեղաբաշխված այլ միջոցները
- դ) այլ բանկերից ստացված ավանդները
- ե) զրամական շուկայի այլ մասնակիցներից ստացված ավանդները
- զ) այլ ավանդները:

2.12.4. Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ

Շատ բանկեր ներգրավվում են այնպիսի գործարքներում, որոնք տվյալ պահին հաշվապահական հաշվեկշռում չեն ճանաչվում որպես ակտիվներ կամ պարտավորություններ, սակայն առաջացնում են պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ: Նմանատիպ արտահաշվեկշռային հոդվածները հաճախ ներկայացնում են բանկի գործունեության զգալի մասը և կարող են էական ազդեցություն ունենալ բանկի կողմից ստանձնած ռիսկերի աստիճանի վրա:

Հետևաբար, բանկի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք բացահայտվեն նաև պայմանական դեպքերը և չեղյալ չհամարվող պոտենցիալ պարտավորությունները:

2.12.5. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետները

Բանկը պետք է ներկայացնի ակտիվների և պարտավորությունների վերլուծություն՝ խմբավորելով դրանք ըստ մարման ժամկետների, ելնելով հաշվապահական հաշվեկշռի կազմման ամսաթվից մինչև նախատեսված մարման ամսաթիվը մնացած ժամկետներից:

Խմբավորումն ըստ մարման ժամկետների, որը կիրառվում է առանձին ակտիվների և պարտավորությունների համար, տարբեր բանկերում տարբեր է և պայմանավորված է տվյալ ակտիվների ու պարտավորությունների նկատմամբ բանկի կողմից ընդունված մոտեցմամբ: Ստորև բերվում են օգտագործվող ժամկետների օրինակներ.

- ա) մինչև մեկ ամիս
- բ) մեկ ամսից մինչև 3 ամիս
- գ) 3 ամսից մինչև 1 տարի
- դ) 1 տարուց մինչև 5 տարի
- ե) 5 տարի և ավելի:

Կարևոր է, որ ակտիվների և պարտավորությունների համար բանկի կողմից ընդունված մարման ժամկետները լինեն նույնը: Դա հստակեցնում է մարման ժամկետների համապատասխանության աստիճանը և բանկի՝ դրանից բխող կախվածությունն իրացվելիության այլ աղբյուրներից:

Մարման ժամկետները կարող են արտահայտվել.

- ա) մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանով
- բ) մինչև մարման ամսաթիվը ընկած սկզբնական ժամանակաշրջանով

զ) մինչև տոկոսադրույքի հաջորդ հնարավոր փոփոխության ամսաթիվը մնացած ժամանակաշրջանով:

2.12.6. Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների կենտրոնացում

Բանկը պետք է բացահայտի իր ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ցանկացած էական կենտրոնացում: Նման բացահայտումները պետք է կատարվեն ըստ աշխարհագրական տարածաշրջանների, հաճախորդների կամ ճյուղային խմբերի, կամ ռիսկի այլ կենտրոնացումների: Աշխարհագրական տարածաշրջանները կարող են ընդգրկել մեկ առանձին երկիր, երկրների խումբ կամ շրջաններ երկրի ներսում: Բացահայտումներն ըստ հաճախորդների խմբերի կարող են դիտարկվել ըստ հատվածների, ինչպիսիք են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները և առևտրային ու այլ կազմակերպությունները:

Բանկը պետք է բացահայտի նաև զուտ արտարժույթային դիրքի զգալի գումարները, որը կարևոր է արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով առաջացող կորուստների ռիսկի գնահատման համար:

2.12.7. Կորուստներ վարկերից և այլ փոխատվություններից

Վարկերի և այլ փոխատվությունների գծով բանկը պետք է բացահայտի հետևյալ տեղեկատվությունը.

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որը նկարագրում է այն հիմունքը, համաձայն որի չհավաքագրվող վարկերը և այլ փոխատվությունները ճանաչվում են որպես ծախս
 բ) տվյալ ժամանակաշրջանում վարկերի և այլ փոխատվությունների կորուստների պահուստներում փոփոխությունները առանձին բացահայտելով.

- տվյալ ժամանակաշրջանում պահուստավորված գումարները
- չհավաքագրվող դուրս գրված գումարները
- պահուստների վերականգնման նպատակով կրեդիտագրված գումարները

զ) հաշվեկշռի ամսաթվի դրությամբ վարկերի և այլ փոխատվությունների կորուստների պահուստի ընդհանուր մեծությունը

դ) հաշվապահական հաշվեկշռում արտացոլված վարկերի և այլ փոխատվությունների ընդհանուր գումարը, որոնց գծով տոկոսներ չեն հաշվեգրվում և այդպիսի վարկերի ու այլ փոխատվությունների հաշվեկշռային արժեքի որոշման հիմունքը:

Բանկի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները պետք է իմանան, թե ինչպիսի ազդեցություն են ունենում վարկերի և այլ փոխատվությունների կորուստները բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Դա օգնում է նրանց գնահատելու բանկի կողմից միջոցների կառավարման արդյունավետությունը: Պահուստում փոփոխությունները, ներառյալ նախկինում դուրս գրված գումարների վերականգնումը, ցույց է տրվում առանձին:

2.12.8. Ընդհանուր բանկային ռիսկեր

Ընդհանուր բանկային ռիսկերի, այդ թվում ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ պայմանական դեպքերի գծով առանձնացված ցանկացած գումար պետք է բացահայտվի առանձին որպես **չբաշխված շահույթի** բաշխում: Նշված միջոցների նվազեցումից առաջացող ցանկացած կրեդիտագրվող գումար ավելացվում է չբաշխված շահույթին և չի ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի որոշման հաշվարկում:

2.12.9. Գրավադրված ակտիվներ

Բանկերն իրենց գործունեության ընթացքում կարող են որոշակի պարտավորությունների դիմաց գրավադրել իրենց ակտիվները: Հաճախ այդպիսի պարտավորությունները շատ էական են լինում և կարող են ունենալ էական նշանակություն բանկի ֆինանսական վիճակի գնահատման ժամանակ:

Հետևաբար, բացահայտման ենթակա են ապահովված պարտավորությունների ընդհանուր գումարը և որոշակի պարտավորությունների դիմաց գրավադրված ակտիվների բնույթն ու հաշվեկշռային արժեքը:

2.12.10. Հավատարմագրային գործունեություն

Եթե բանկն իրականացնում է զգալի ծավալով հավատարմագրային գործունեություն, ապա նա իր ֆինանսական հաշվետվություններում պետք է բացահայտի այդ փաստն ու հավատարմագրված ակտիվների մասշտաբը:

2.12.11. Կապակցված (բանկի հետ կապակցված) կողմերի հետ գործարքներ

Հետևաբար, եթե բանկը գործարքի մեջ է մտնում կապակցված կողմերի հետ, նպատակահարմար է բացահայտել կապակցված կողմերի հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթը, գործարքների տեսակները և այն մանրամասները, որոնք անհրաժեշտ են բանկի ֆինանսական հաշվետվությունները հասկանալու համար:

2.13. ՀՀՀՀՄ 32 Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը

Այս ստանդարտի նպատակն է օգնել ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին ընկալելու հաշվեկշռային և արտահաշվեկշռային ֆինանսական գործիքների կարևորությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա ազդեցության տեսանկյունից:

Այս ստանդարտը սահմանում է որոշակի պահանջներ հաշվեկշռային ֆինանսական գործիքների ներկայացման համար և որոշակիացնում է այն տեղեկատվությունը, որը պետք է բացահայտվի թե՛ հաշվեկշռային (ճանաչված) և թե՛ արտահաշվեկշռային (չճանաչված) ֆինանսական գործիքների վերաբերյալ:

Ֆինանսական գործիքը ցանկացած պայմանագիր է, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալի գործիք:

2.14. ՀՀՀՀՄ 33 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Այս ստանդարտի նպատակն է սահմանել մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման և դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվության ներկայացման սկզբունքները: Ստանդարտը պահանջում է հրապարակել մեկ բաժնետոմսին բաժին ընկնող ինչպես բազային, այնպես էլ նոսրացված շահույթը:

Ստանդարտը ներկայացնում է սովորական բաժնետոմսերի, պոտենցիալ սովորական բաժնետոմսերի սահմանումը, ինչպես նաև մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի հաշվարկի մեթոդիկան և հաշվապահական մոտեցումները:

Կազմակերպությունը պետք է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացնի մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթը սովորական բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի համար, եթե դրանք ունեն տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթին մասնակցելու տարբեր իրավունքներ:

ՀՀՀՀՄ 33-ը պահանջում է, որ կազմակերպությունը ներկայացնի մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթները նույնիսկ այն դեպքում, երբ բացահայտվող գումարները բացասական են (մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս):

2.15. ՀՀՀՀՄ 34 Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

Այս ստանդարտը սահմանում է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների նվազագույն բովանդակությունը: Միջանկյալ ժամանակաշրջանը ֆինանսական հաշվետու ժամանակաշրջան է, որն ավելի կարճատև է, քան հաշվետու տարին:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվություններ են, որոնք պարունակում են ֆինանսական հաշվետվությունների կամ ամբողջական փաթեթը (ինչպես նկարագրված է ՀՀՀՀՄ 1 «**Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում**» ստանդարտում), կամ խտացված (համառոտ) փաթեթը (ինչպես նկարագրված է այս ստանդարտում)՝ միջանկյալ ժամանակաշրջանի համար:

Ըստ այս ստանդարտի պահանջների, միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները նվազագույնը պետք է ներառեն հետևյալ բաղկացուցիչները.

- ա) խտացված հաշվապահական հաշվեկշիռը
- բ) ֆինանսական արդյունքների մասին խտացված հաշվետվությունը
- գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին խտացված հաշվետվությունը
- դ) դրամական միջոցների հոսքերի մասին խտացված հաշվետվությունը և
- ե) ընտրված բացատրական ծանոթագրությունները:

Կազմակերպության միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանելու համար դրանք պետք է բավարարեն սույն ստանդարտի բոլոր պահանջներին:

Ժամանակին պատրաստված և արժանահավատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններն ավելի մեծ հնարավորություն են տալիս ներդրողներին, փոխատուներին և այլոց՝ հասկանալու կազմակերպության կողմից եկամուտներ (շահույթներ), դրամական հոսքեր ստեղծելու ունակությունը, ինչպես նաև նրա ֆինանսական վիճակը և իրացվելիությունը:

2.16. ՀՀՀՀՄ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Այս ստանդարտը սահմանում է պահուստների, պայմանական պարտավորությունների և պայմանական ակտիվների ճանաչման չափանիշներն ու չափման հիմունքները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում բավարար տեղեկատվության բացահայտման պահանջները, որպեսզի հնարավորություն ընձեռվի օգտագործողներին հասկանալու դրանց բնույթը, ժամկետները և գումարները:

ՀՀՀՀՄ 37-ը սահմանում է պայմաններ, որոնք պարտադիր են պահուստները ճանաչելու համար: Ընդհանուր առմամբ բոլոր պահուստները պայմանական են, քանի որ դրանք անորոշ են ժամկետների և գումարների առումով: Այնուամենայնիվ, ՀՀՀՀՄ 37-ում «պայմանական» տերմինը կիրառվում է այն պարտավորությունների և ակտիվների համար, որոնք չեն ճանաչվում, քանի որ

դրանց գոյությունը հաստատվելու է ապագա անորոշ դեպքի (դեպքերի) տեղի ունենալով կամ չուներենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից: Բացի այդ, «պայմանական պարտավորություն» տերմինը օգտագործվում է այն պարտավորությունների համար, որոնք չեն բավարարում ճանաչման չափանիշներին:

2.17. ՀՀՀՀՍ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը

Այս ստանդարտը սահմանում է ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տվյալների ճանաչման, չափման ու բացահայտման սկզբունքները:

Ստանդարտը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգումը, կատեգորիաները, նրանց հաշվառման առանձնահատկությունները:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչո՞վ էր պայմանավորված հաշվապահական հաշվառման ստանդարտների ստեղծման անհրաժեշտությունը:
2. Ո՞րն է ՀՀ այն ստանդարտը, որը տարածվում է բացառապես բանկերի և նմանատիպ ֆինանսական կազմակերպությունների հաշվետվությունների բացահայտման վրա:
3. Ո՞րն է ստանդարտների հիմնական նպատակը:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԵՐԻ ՀԱԾՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՀԱԾԻՎՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է բանկերի հաշվային պլանի ընդհանուր նշանակությունը, կառուցվածքը և կազմման սկզբունքները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ հասկանալ հաշվային պլանի կիրառության անհրաժեշտությունը, կազմման սկզբունքները, հաշիվների բացման և հաշվառման գործընթացը:

3.1. Ներածություն

Հաշվային պլանը բանկերի կողմից իրականացվող գործառնությունների՝ հաշվապահական հաշվառման մեջ գրանցման և խմբավորման սխեմա է:

Բանկերի հաշվային պլանը՝ մշակվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից և հաստատվում է ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ: Հաշվային պլանը միասնական է ՀՀ բոլոր բանկերի համար:

Հաշվային պլանը բաղկացած է հետևյալ երեք բաժիններից.

1-ին բաժին. Ընդհանուր դրույթներ, որը ներկայացնում է հաշվային պլանի ընդհանուր բնութագիրը, հաշիվների բացման կարգը, հաճախորդների դասակարգման սահմանումն ըստ ռեզիդենտության և ըստ պետականության:

2-րդ բաժին. Հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկը, որը ներկայացնում է սինթետիկ հաշիվների կառուցվածքը:

3-րդ բաժին. Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգը, որում ներկայացված են գործառնությունների նկարագիրը, մեկնաբանությունները և հաշվապահական թղթակցությունների տիպային ձևակերպումները:

3.2. Հաշվային պլանի կազմման սկզբունքները

ՀՀ բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը բաղկացած է հետևյալ կարգերից.

- Կարգ 1 - 2 Ակտիվներ
- Կարգ 3 - 4 Պարտավորություններ
- Կարգ 5 Կապիտալ
- Կարգ 6 Եկամուտներ
- Կարգ 7 Ծախսեր
- Կարգ 8 Հետհաշվեկշռային հաշիվներ

Կարգերը բաժանված են երկնիշ բաժինների, բաժինները՝ եռանիշ ենթաբաժինների, ենթաբաժինները՝ քառանիշ հաշիվների:

- Օրինակ, 1011 հաշվի կառուցվածքում
- 1-ը կարգի միանիշ համարն է
- 10-ը ցույց է տալիս բաժնի համարը
- 101-ը ենթաբաժինն է
- 1011-ը ցույց է տալիս հաշիվը:

Հաշվային պլանում ակտիվները և պարտավորությունները խմբավորված են ըստ գործառնությունների բնույթի (օրինակ, վարկեր, արժեթղթեր, ֆակտորինգ, ավանդներ և այլն) և դասակարգված են ըստ իրացվելիության նվազման աստիճանի: Այսպես.

Ակտիվների թվարկումը սկսվում է դրամական միջոցներով ու ավարտվում ֆիքսված և այլ ակտիվներով:

Պարտավորությունների թվարկումը սկսվում է ցպահանջ բնույթի հաշիվներով և ավարտվում երկարաժամկետ ու այլ պարտավորություններով, որոնց հաջորդում է Կապիտալ բաժինը:

Ի տարբերություն կազմակերպությունների համար սահմանված հաշվային պլանի, Բանկերի հաշվային պլանում Կապիտալ բաժինը հաջորդում է պարտավորություններին: Այս հերթականությունը պայմանավորված է նրանով, որ Կապիտալը հանդիսանում է յուրօրինակ հենարան, բազա պարտավորությունների համար, կապիտալով է պայմանավորված բանկի վճարունակությունը և ի վերջո բանկի սնանկացման դեպքում միջոցների վերադարձման համար սահմանված հերթում բանկի բաժնետերերի ներդրումներն ունեն ստորին հերթ մյուս պարտատերերի միջոցների նկատմամբ, այսինքն սեփական միջոցները ավենավերջում են վերադարձվում, երբ կատարված են լինում բոլոր պարտավորությունները:

Հաշվային պլանի 8 կարգում հաշվառվում են արտահաշվեկշռային (հետհաշվեկշռային) հաշիվները: Այս կարգում հաշվառվում են այն արժեքները կամ գործառնությունները, որոնք՝

- ա) չեն հաշվառվում բանկի հաշվեկշռում, սակայն կարող են առաջացնել չնախատեսված (պայմանական) դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ

¹2003թ. հոկտեմբերի դրությամբ գործող հաշվային պլանն ընդունվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2002թ. օգոստոսի 6-ի թիվ 258-Ն որոշմամբ (իրապարակվել է 2002թ. հոկտեմբերի 15-ին՝ ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի թիվ 25 տեղեկագրում)

բ) չեն հաշվառվում բանկի հաշվեկշռում, սակայն գտնվում են (ժամանակավորապես կամ սահմանված ժամկետով) դրամապահոցում և (կամ) պատասխանատու անձի մոտ

գ) նաև հաշվառվում են բանկի հաշվեկշռում, սակայն լրացուցիչ տեղեկատվություն են պարունակում բանկի գործունեության վերաբերյալ՝ ապահովելով հաշվեկշռային տվյալների հասկանալիությունն ու արժանահավատությունը, օրինակ գրավադրված ակտիվները:

3.3. Հաշվապահական հաշվառման հաշիվների բացման և հաշվառման գործընթացը

3.3.1. Սինթետիկ հաշվառում

ՀՀ բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանում սինթետիկ հաշիվները բացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատված հաշվային պլանի համաձայն:

Համաձայն հաշվային պլանի կիրառման հրահանգի, բանկերը հաշվային պլանում կարող են ինքնուրույն բացել հաշիվներ, սակայն բանկերի կողմից ինքնուրույն բացված հաշիվները չեն արտացոլվում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում:

3.3.2. Անալիտիկ հաշվառում

Անալիտիկ հաշիվները բացում են հաշվապահական գործարք կատարող ստորաբաժանումների ղեկավարները և հաշվապահական գործարք կատարող ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցները:

Անալիտիկ հաշվառում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ սինթետիկ հաշիվների մակարդակով պարունակվող տեղեկատվությունից բացի, անալիտիկ հաշիվները պետք է տրամադրեն լրացուցիչ տեղեկատվություն՝ ապահովելով հաշվետվությունների ստացումն ըստ հաճախորդների կողերի, հաշիվների արժույթի:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է հաշվային պլանը:
2. Ի՞նչ բաժիններից է բաղկացած հաշվային պլանը:
3. Ի՞նչ սկզբունքներով են կառուցված հաշվային պլանի ակտիվներն ու պարտավորությունները:
4. Ի տարբերություն կազմակերպությունների հաշվային պլանի, ի՞նչ առանձնահատկություններ ունի բանկերի հաշվային պլանի կառուցվածքը:
5. Ինչպիսի՞ կողավորում է դրված հաշվային պլանի հաշիվների կառուցվածքում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են հաշվապահական գրքերում ֆինանսական տեղեկատվության գրանցման, վերլուծության, ընդհանրացման և ներկայացման գործընթացները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա տարբերակել սկզբնական հաշվառման փաստաթղթերը, նրանց հիման վրա կատարել տնտեսական գործառնությունների գրանցում հաշվապահական գրքերում, կհասկանա կուտակման և կանխիկի սկզբունքով իրականացվող հաշվապահությունների հիմնական բնութագրերը, կկարողանա կազմել հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների, կապիտալի փոփոխության հաշվետվություններ:

4.1. Ներածություն

Այս գլխում կներկայացվի, թե վերջնական արդյունքների՝ ֆինանսական հաշվետվությունների ստացման համար ինչպես են կիրառվում հաշվապահական համակարգ մուտքագրվող տվյալները: Անհրաժեշտ է տնտեսական գործունեության արդյունքում առաջացող փաստացի տվյալները վերլուծել, գրանցել, դասակարգել, ընդհանրացնել և ներկայացնել եկամուտների հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունների միջոցով:

4.2. Հաշվապահական տեղեկատվության ձևավորման ցիկլը

Հաշվապահական տեղեկատվության ձևավորման ցիկլը ներառում է հաշվետու ժամանակահատվածի ընթացքում անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվության վերլուծության, գրանցման, դասակարգման, ընդհանրացման և ներկայացման գործընթացները:

Հաշվապահական ցիկլի քայլերը հետևյալներն են.

Սկզբնական փաստաթղթերի հիման վրա գործառնությունների վերլուծություն

1. գործառնությունների գրանցում մատյանում
2. մատյանից տվյալների տեղափոխում **գլխավոր գրքի** հաշիվներ
3. հաշիվների չճշգրտված փորձնական հաշվեկշռի կազմում
4. ճշգրտող գրանցումների կազմում և գրառում
5. հաշիվների ճշգրտված փորձնական հաշվեկշռի կազմում
6. շահույթի մասին հաշվետվության կազմում
7. փակող գրանցումների գրառում
8. հաշիվների ճշգրտված փակված գրառումներով հաշվեկշռի կազմում
9. հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների, կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունների կազմում. դրամական հոսքերի հաշվետվության կազմումը ներկայացվում է գլուխ 18-ում:

Առաջին երեք քայլերն իրականացվում են հաշվառման ընթացքում: Մնացած քայլերն իրականացվում են հաշվառման ժամանակաշրջանի ավարտից հետո: Նշված փուլերն անվանում են ցիկլ, որովհետև դրանք կրկնվում են հաշվառման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար՝ օգտագործելով նոր տնտեսական տվյալներ:

4.3. Սկզբնական փաստաթղթեր, մատյաններ, գլխավոր գիրք

Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են *սկզբնական հաշվառման փաստաթղթերի* հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարման փաստը: Սկզբնական փաստաթուղթը դա գործարքի վերաբերյալ վկայությունն է, որը նկարագրում է գործարքի իրական փաստը: Չեկերը, դեպոզիտային ձևակերպումները, մուրհակները, դեբետային կամ կրեդիտային քարտերը դրանք սկզբնական փաստաթղթերի օրինակներ են:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր *վավերապայմանները* (ռեկվիզիտները).

- ա) փաստաթղթի անվանումը
- բ) հերթական համարը
- գ) կազմելու ամսաթիվը
- դ) գործառնության մասնակիցների անվանումը
- ե) տնտեսական գործառնության բովանդակությունը
- զ) տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և բնաիրային արտահայտությամբ
- է) պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո: Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք: Սկզբնական հաշվառման փաստաթղթերում սխալի ուղղումը համաձայնեցվում է տնտեսական գործառնության մասնակիցների հետ և հաստատվում տվյալ փաստաթուղթն ստորագրելու իրավունք ունեցող

անձանց ստորագրություններով՝ նշելով ուղղման ամսաթիվը: *Դրամարկղային և բանկային փաստաթղթերում սխալների ուղղում չի թույլատրվում:*

Յուրաքանչյուր սկզբնական փաստաթուղթ գործարքների գրանցման գործընթացի սկիզբն է: Գլխավորապես, գործարքները սկզբից գրանցվում են *մատյաններում*, որը գործարքների խրոմիկական թերթիկն է:

Մատյաններում մուտքագրվում է հետևյալ կերպ.

ամսաթիվ		
հաշվի համարը (դեբետ)	xx	
հաշվի համարը (կրեդիտ)		xx

գործարքի նկարագիրը

Մատյաններում գրանցումը ավարտելուց հետո գումարը փոխանցվում է յուրաքանչյուր հաշվին՝ ելնելով գործարքի տեսակից: Այս գործողությունը կոչվում է *գրանցում մայր մատյանում*:

Գրեմք գրանցման մեկ օրինակ. Անճան բանկ է մուտքագրում 10,000 դրամի դեպոզիտ: Դեբետային փաստաթուղթը, որը ենթարկվել է ստուգման օրվա վերջին, ամբողջացնում է **դեբետային քարտը**, որը դրամական միջոցները 10,000 դրամով ավելացնելու վերաբերյալ սկզբնական փաստաթուղթն է:

Գործարքը հաստատող վարչությունից դեբետային փաստաթուղթը և հաճախորդի դեպոզիտը հաստատող փաստաթուղթը հաջորդ սկզբնական փաստաթուղթն է: Այդ սկզբնական փաստաթղթերը հաշվառման վարչությունում որպես գործարք գրանցվում են.


30 հունիսի 2000թ.	դեբետ	կրեդիտ
Դրամական միջոցներ	10,000 դրամ	10,000 դրամ
	ժամկետային դեպոզիտներ	10,000 դրամ

Արամ Պետրոսյանի դեպոզիտային հաշիվ

Գործարքը մատյանում գրանցելուց հետո դեպոզիտային և կրեդիտային գումարները գրանցվում են *գլխավոր գրքում*, որտեղ իրականանում են բոլոր հաշվառումները: Գլխավոր գրքի հաշվառումը հենց բանկի հաշվային պլանով հաշվառումն է:

Շատ կարևոր է իմանալ, որ այդ ժամկետային դեպոզիտը 10,000 դրամով գրանցվում է երկու հաշվառմամբ՝ *անալիտիկ հաշվառում և ստուգիչ հաստատող հաշվառում*:

Տվյալ դեպքում նշված գործարքի անալիտիկ գրանցումը (Ա.Պետրոսյանի) ժամկետային դեպոզիտն է, իսկ հաշվի հսկիչ հաշվառման գլխավոր գիրքը ցույց է տալիս, որ ընդհանուր հաշվեկշիռը կապված է նախնական գրանցման հետ: Օրինակ՝



Նկարագրված սխեման ցույց է տալիս, որ սինթետիկ հաշվառման (ենթահաշվառում) գումարը պետք է հավասար լինի հաշվեկշռային հսկիչ մնացորդին:

Քայլ 1. Գործառնությունների վերլուծություն սկզբնական փաստաթղթերի հիման վրա

Իրականացված յուրաքանչյուր գործառնություն պետք է վերլուծվի, որպեսզի պարզվի հաշվապահական բանաձևի (*Ակտիվներ = Պարտավորություններ + Կասիտալ*) վրա նրանց ունեցած ազդեցությունը, ընդ որում այդ հավասարումը պետք է միշտ *հաշվեկշռված մնա*:

Դիտարկենք «Ա բանկի» հետևյալ գործառնությունները 20xx թվականի համար.

- Գործառնություն 1. 20 սեպտեմբերի, «Ա բանկը» թողարկել է 20,000 բաժնետոմս, յուրաքանչյուրը \$1 անվանական արժեքով, որն իրացվել է \$25,000 կանխիկով
- Գործառնություն 2. 25 սեպտեմբերի, ներգրավվել է \$125,000 կանխիկով ցպահանջ ավանդներ
- Գործառնություն 3. 30 սեպտեմբերի, վճարվել է \$5,000 կանխիկով գրախոսության կառույցի համար
- Գործառնություն 4. 30 սեպտեմբերի, վճարվել է \$10,000 կանխիկով ներդրումային արժեթղթերի համար
- Գործառնություն 5. 30 սեպտեմբերի, վճարվել է \$500 վաճառքի համար մատչելի արժեթղթերի համար
- Գործառնություն 6. 31 հոկտեմբերի, ներգրավվել է \$60,000 կանխիկով ժամկետային դեպոզիտներ
- Գործառնություն 7. 15 նոյեմբերի, տրամադրվել է \$140,000 վարկ
- Գործառնություն 8. 30 նոյեմբերի, վճարվել է \$400 ժամկետային ավանդների տոկոսավճար

Գործառնություն 9. 15 դեկտեմբերի, ստացվել է \$1,400 տոկոսավճար վարկերի դիմաց
Գործառնություն 10. 31 դեկտեմբերի, վճարվել է \$400 ժամկետային ավանդների տոկոսավճար
Վերլուծությունն իրականացված է 1-ին աղյուսակում:

Քայլ 2. Գործառնությունների գրանցում մատյանում

Գործառնությունների վերլուծությունից հետո նրանցից յուրաքանչյուրի արդյունքները գրանցվում են մատյանում: Գրանցումն իրականացվում է նշելով անաթիվը, դեբետը, կրեդիտը, հաշիվը և մնացորդը: Քանի որ մատյանում գրանցվում են սկզբնական գործառնությունները, այն կոչվում է բնօրինակ գրառումների գիրք:

Մատյանը կապում է յուրաքանչյուր գործառնության երկու արդյունքները՝ դեբետը և կրեդիտը: «Ա բանկի» մատյանի գրանցումները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Քայլ 3. Մատյանից տվյալների տեղափոխում գլխավոր գրքի հաշիվներ

Եթե մատյանում ներկայացվում են յուրաքանչյուր գործառնության երկու կողմերը մեկ տեղում, ապա գլխավոր գրքում յուրաքանչյուր գործառնության դեբետը և կրեդիտը գրանցվում են առանձին առանձին երկու կամ ավելի հաշիվներում: Հաշիվների այս բաժանումը կարևոր է, քանի որ գլխավոր գիրքը տվյալները դասակարգում է ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, եկամտի և ծախսերի: Տվյալների այս վերադասակարգումը հնարավորություն է տալիս իրականացնել ֆինանսական հաշվետվությունների կազմումը:

«Ա բանկի» գլխավոր գիրքը ներկայացված է աղյուսակ 3-ում T հաշիվների ձևով: Անհրաժեշտ է հիշել, որ դեբետը գրվում է միշտ ծախ, իսկ կրեդիտը՝ աջ կողմում:

Քայլ 4. Հաշիվների չճշգրտված փորձնական հաշվեկշռի կազմում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ անմիջապես գլխավոր գրքի հաշիվների հիման վրա կազմվում է չճշգրտված փորձնական հաշվեկշռը: Փորձնական հաշվեկշռն առանձին հաշիվների և նրանց դեբետային կամ կրեդիտային մնացորդների ցուցակն է՝ գլխավոր գրքի հերթականությամբ: Հաշվի մնացորդը դա նրա ընդհանուր դեբետների և կրեդիտների տարբերությունն է: Հաշիվների մնացորդները ցույց են տրված աղյուսակ 3-ում: Աղյուսակ 4-ում ներկայացված է «Ա բանկի» փորձնական հաշվեկշռը 20xx դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Փորձնական հաշվեկշռը ծառայում է երկու նպատակների.

- (1) ապահովում է դեբետների և կրեդիտների հավասարակշռվածության ստուգումը
- (2) ֆինանսական տվյալները ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար հարմար տեսքով:

Քայլ 5. Ճշգրտող գրանցումների կազմում և գրառում

Կուտակման (հաշվեգրման) սկզբունքով հաշվապահություն. Կուտակման սկզբունքով հաշվապահությունը պահանջում է, որ գործառնությունները գրանցվեն այն ժամանակ, երբ նրանք տեղի են ունենում (ծագում են), այլ ոչ թե այն ժամանակ, երբ որպես գործարքի արդյունք ստացվում կամ վճարվում է կանխիկը: Կանխիկի սկզբունքով հաշվապահության ժամանակ գործառնությունը գրանցվում է, երբ տեղի է ունենում դրան համապատասխան դրամական վճարումը կամ ստացումը:

Կուտակման սկզբունքով հաշվապահությանը բնորոշ է եկամուտների ճանաչման և համապատասխանեցման մեթոդների կիրառումը:

Եկամուտների ճանաչման սկզբունքը ենթադրում է, որ եկամուտը ճանաչվում է այն ժամանակ, երբ այն վաստակվել է, այսինքն բանկը իրականացրել է այն քայլերը, որոնք պետք է ապահովեն այդ եկամուտների ստացումը: Օրինակ, վարկերից ստացվող տոկոսավճարները համարվում են վաստակված վարկի տրամադրման պահից սկսած: Հետևաբար, տոկոսային եկամուտները գրանցվում են և կուտակվում վարկի գոյության ամբողջ ընթացքում, չնայած կանխիկի հավաքագրումը լինում է ժամանակի որոշակի պահերին:

Համապատասխանեցման սկզբունքը պահանջում է, որ ծախսերը համապատասխանեն հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նրանց ստեղծած եկամուտներին: Օրինակ, բանկերը համապատասխանեցնում են վարկային կորուստները ստացվող տոկոսային եկամուտներին: Բանկերը պահպանում են համապատասխանեցման սկզբունքը մինչև վարկերի կոնկրետ անհուսալի ճանաչումը՝ առանձին հատկացումներով հնարավոր կորուստների ծածկման պահուստ ձևավորելու միջոցով:

Կուտակային հաշվապահությունը և ժամանակաշրջանի պայմանը: Համաձայն ժամանակաշրջանի (հաշվետու ժամանակաշրջան) պայմանի, տնտեսավարողը պետք է իր գործունեության ամբողջ ընթացքը բաժանի հատվածների՝ հաշվետվությունների ներկայացման նպատակով: Այս մեթոդի կիրառումը հանգեցնում է հաշվառման որոշ դժվարությունների, քանի որ որոշ գործառնություններ կարող են սկսվել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և ավարտվել մեկ այլ հաշվետու ժամանակաշրջանում: Օրինակ, սարքավորումների մաշվածքը գրանցվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Առանց ժամանակաշրջանի պայմանի բանկը կարող է ունենալ միայն մեկ ժամանակաշրջան՝ իր հիմնադրման օրից մինչև լուծարման օրը: Հաշվետու ժամանակաշրջանի պայմանի ներմուծումը անհրաժեշտություն է առաջացնում ճշգրտող հաշիվների ներդրման:

Ճշգրտող հաշիվները հաշվետու ժամանակահատվածի վերջի համար ստեղծված մատյանի հաշիվներ են՝ եկամուտները և ծախսերը համապատասխանեցնելու համար: Այս հատուկ հաշիվները նախատեսված են համապատասխան ժամանակի դրությամբ ճշգրիտ ֆինանսական

հաշվետվություններ կազմելու համար: Ճշգրտող հաշիվները խմբավորվում են հետևյալ երկու խմբերում:

- **Կանխավճարվող տարրեր**
Կանխավճարված եկամուտ (գրանցվում է որպես պարտավորություն)
- **Կուտակվող (հաշվեգրվող) տարրեր**
Կուտակվող ակտիվներ
Կուտակվող պարտավորություններ և կոնտրակտիվներ (հակահաշիվներ):
Կանխավճարված եկամուտները ստացվում են նախապես (դեռևս չվաստակված): Չնայած վճարը ստացվել է, սակայն այն եկամուտ չի կարող ճանաչվել, քանի դեռ չի վաստակվել: Հետևաբար, այդ եկամուտը գրանցվում է որպես պարտավորություն: Օրինակ, եթե պահախցիկի վարձակալության համար վճարը ստացվել է նախապես՝ մինչև ծառայության մատուցումը, բանկը պարտավորություն ունի հաճախորդի նկատմամբ: Ստացված գումարը գրանցվում է որպես պարտավորություն՝ «պահախցիկի վարձակալության կանխավճարներ» հաշվում: Երբ եկամուտը վաստակվի, ճշգրտող հաշվի օգնությամբ պարտավորության հաշվում գրանցված գումարը կփոխանցվի համապատասխան եկամտային հաշվին:
Օրինակ, բանկը պահախցիկի 12 ամիսների վարձակալության համար ստացել է \$1,200: Բանկը ֆինանսական հաշվետվություններ է ներկայացնում յուրաքանչյուր ամիս, ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր ամսվա վերջում եկամուտ ճանաչել մեկ ամսվա վճարը: Ստույանի համապատասխան հաշիվների օրինակը բերված է ստորև.
Սովորական գրանցում.

Կանխիկ	1,200	
Պահախցիկի վարձակալության կանխավճար		1,200

Կանխավճարի գրանցման համար
Ճշգրտող գրանցում.
Առաջին ամիս

Պահախցիկի վարձակալության կանխավճար	100	
Պահախցիկի վարձակալություն		100

Վաստակված եկամտի գրանցման համար
Նմանատիպ ճշգրտող հաշիվներ բացվում են յուրաքանչյուր ամսվա վերջում: 12 ամսից հետո կանխավճարներ հաշվի \$1,200 կճանաչվի որպես եկամուտ՝ «պահախցիկի վարձավճարներ» հաշվում:
Կանխավճարված ծախսերը նախապես վճարված ծախսերն են: Չնայած փաստացի կատարվել է որևէ վճարում, այն ծախս չի ճանաչվում, քանի դեռ այդ ծախսը չի իրականացվել, հետևաբար այս ծախսերը գրանցվում են որպես ակտիվ: Օրինակ, ապահովագրական վճարի նախապես վճարման դեպքում՝ բանկը գումարը գրանցում է որպես ակտիվ՝ «կանխավճարված ապահովագրական վճարներ» հաշվում: Երբ ծախսը տեղի ունենա, այդ ժամանակ ճշգրտող գրանցման օգնությամբ ակտիվում գրանցված գումարը կփոխանցվի համապատասխան ծախսային հաշվին:
Ենթադրենք, բանկը \$1,200 կանխավճար է տվել ապահովագրական վճարի համար 12 ամիսների դիմաց: Բանկը պետք է առաջին ամսվա վերջում ծախս ճանաչի մեկ ամսվա վճարը:
Սովորական գրանցում.

Կանխավճարված ապահովագրություն	1,200	
Կանխիկ		1,200

Կանխավճարված ծախսի գրանցման համար
Ճշգրտող գրանցում.
Առաջին ամիս

Ապահովագրական ծախսեր	100	
Կանխավճարված ապահովագրություն		100

Տեղի ունեցած ծախսի գրանցման համար
Նմանատիպ ճշգրտող գրանցումներ են կատարվում յուրաքանչյուր ամսվա ավարտին: 12 ամսից \$1,200 գումարը պետք է ճանաչվի որպես ծախս:
Կուտակված (հաշվեգրված) ակտիվները դեռևս չհավաքագրված եկամուտներն են, որոնք ճանաչվել են եկամուտ (վաստակվել են): Այս եկամուտը գրանցվում է կուտակվող ակտիվների հաշիվներում՝ ապագայում հավաքագրվելիք եկամուտներն արտացոլելու համար: Օրինակ, եթե վարկի տոկոսավճարը վաստակվել է, սակայն դեռևս չի հավաքագրվել, բանկը գրանցում է տոկոսային եկամուտ և համապատասխանաբար մեծացնում է «հաշվարկված (ստացվելիք) տոկոսներ» ակտիվային հաշիվը:
Ենթադրենք բանկը տրամադրել է \$10,000 վարկ, տարեկան 12% տոկոսադրույքով, որի տոկոսավճարներն իրականացվում են տարեկան: Ամսվա վերջին, բանկն իր հաշվետվությունների

ներկայացման ժամանակ վարկի մեկամսյա տոկոսավճարի գումարը, որը վաստակվել է, սակայն դեռևս չի հավաքագրվել, գրանցում է «հաշվարկված (ստացվելիք) տոկոսներ» ակտիվային հաշվին: Ծճգրտող գրանցում:

Առաջին ամիս

Հաշվարկված (ստացվելիք) տոկոսներ	100	
Տոկոսային եկամուտ		100

Վաստակված, բայց չվճարված եկամտի գրանցման համար

Նմանատիպ ճճգրտող գրանցումներ իրականացվում են յուրաքանչյուր ամիս և 12 ամիսներից հետո \$1,200 պետք է ճանաչված լինի որպես եկամուտ: Երբ հաճախորդը կվճարի տոկոսագումարը, գրանցումը կլինի հետևյալը:

Տասներկուերորդ ամիս		
Կանխիկ	1,200	
Հաշվարկված (ստացվելիք) տոկոսներ		1,200

Տոկոսավճարների ստացումը գրանցելու համար

Կուտակված (հաշվեգրված) պարտավորությունները տեղի ունեցած, սակայն չվճարված ծախսերի պարտավորություններ են: Այն պահից, երբ ծախսը տեղի է ունենում, այն պետք է ճանաչվի: Այդ ծախսերը գրանցվում են և կուտակված պարտավորությունները աճում ապագայում վճարվելիք գումարներն արտացոլելու համար: Օրինակ, եթե ավանդի տոկոսը վճարելու պարտավորությունն առաջացել է, սակայն դեռ չի վճարվել, այն բանկի կողմից ճանաչվում է որպես տոկոսային ծախս և ավելացվում են «հաշվարկված (վճարվելիք) տոկոսներ» հաշվի գծով պարտավորությունները:

Ենթադրենք, բանկը ներգրավել է \$10,000 ավանդ, տարեկան 12% տոկոսադրույքով, տոկոսագումարի տարեկան վճարման պայմանով: Ամսվա ավարտին բանկը կրում է \$100 տոկոսային ծախսը և կատարում հետևյալ գրանցումը:

Ամսվա ավարտին		
Տոկոսային ծախս	100	
Հաշվարկված (վճարվելիք) տոկոսներ		100

Տեղի ունեցած, բայց դեռևս չվճարած ծախսը գրանցելու համար

Նմանատիպ ճճգրտող գրանցումներ կատարվում են յուրաքանչյուր ամիս և 12 ամսից հետո բանկը պետք է ծախս ճանաչի \$1200 տոկոսային ծախսը: Հաճախորդին տոկոսների վճարումն իրականացնելու համար կատարվում է հետևյալ գրանցումը:

Տասներկուերորդ ամիս		
Հաշվարկված (վճարվելիք) տոկոսներ	1,200	
Կանխիկ		1,200

Տոկոսավճարի կատարումը գրանցելու համար

Կոնտրիաշիվները (հակահաշիվները) նվազեցնում են փոխկապված ակտիվները՝ (1) սպասվող հավաքագրվելիք գումարը (վարկերի դեպքում) կամ (2) ակտիվային հաշիվների գուտ արժեքը (սարքավորումների դեպքում) արտացոլելու համար: Հակահաշիվներ կիրառվում են տեղի ունեցած, սակայն չճանաչված ծախսերի գրանցման համար: Օրինակներ են վարկերի հնարավոր կորուստների ծածկման պահուստը և մաշվածքը (ամորտիզացիան):

Մատյանում հակահաշիվների գրանցման օրինակներ.

Ծճգրտող գրանցում.

Ամսաթիվ		
Հատկացումներ վարկերի կորստի պահուստին	100	

Վարկերի կորստի պահուստ	100
------------------------	-----

Վարկերի տեղի ունեցած, բայց դեռևս չճանաչված կորուստը գրանցելու համար

Ծճգրտող գրանցում.

Ամսաթիվ

Մաշվածքի ծախսեր	100	
Կուտակված մաշվածք		100

Մաշվածքի տեղի ունեցած, բայց դեռևս չճանաչված ծախսը գրանցելու համար

Ծճգրտող գրանցումները ամփոփված են աղյուսակ 5-ում:

Հինգերորդ քայլը ճճգրտող հաշիվների գրանցումը և գրառումն է: «Ա բանկի» 20xx տարեվերջյան ճճգրտումները հետևյալներն են.

Գործառնություն 11. 31 դեկտեմբերի, կուտակված տոկոսային եկամուտ \$700

Գործառնություն 12. 31 դեկտեմբերի, վարկերի կորստի ծախս \$280

Գործառնություն 13. 31 դեկտեմբերի, մաշվածքի ծախսեր \$500

Տրված երեք գործառնությունների ճճգրտող գրանցումները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6-ի ճճգրտող գրանցումները գլխավոր գրքում գրառելուց հետո գլխավոր գիրքը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Քայլ 6. Հաշիվների ճճգրտված փորձնական հաշվեկշռի կազմում

Գլխավոր գրքում ճշգրտող գրանցումների գրառումից հետո պետք է պատրաստվի ճշգրտված փորձնական հաշվեկշիռը՝ դեբետի և կրեդիտի հաշվեկշռվածությունը ստուգելու համար: «Ա բանկի» ճշգրտված փորձնական հաշվեկշիռը ներկայացված է աղյուսակ 8-ում: Ուշադրություն դարձրեք, որ ճշգրտված փորձնական հաշվեկշռում ցույց են տրված աղյուսակ 7-ի T հաշիվների մնացորդները:

Քայլ 7. Շահույթի մասին հաշվետվության կազմում

Հաշվապահական տեղեկատվության մշակման յոթերորդ քայլը եկամուտների հաշվետվության կազմումն է՝ օգտագործելով գլխավոր գրքի հաշիվները: Եկամուտների հաշվեկշռի կազմման ժամանակ **զուտ եկամուտը** (շահույթը) հաշվարկում են եկամուտների և ծախսերի տարբերության միջոցով: Բանկի շահույթի հիմնական տարր են հանդիսանում զուտ տոկոսային եկամուտները (ստացված տոկոսներ – վճարված տոկոսներ): Զուտ տոկոսային եկամուտներից վարկերի հնարավոր կորուստների պահուստի հատկացումների նվազեցումը բանկերի շահույթի մասին հաշվետվությունը դարձնում է ավելի ինֆորմատիվ: Բանկի շահույթի մասին հաշվետվությունը ներկայացված է աղյուսակ 9-ում:

Քայլ 8. Փակող գրանցումների գրառում

Փակող գրանցումների նպատակը չբաշխված շահույթի եկամուտների և ծախսերի հաշիվների փակումն է հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի համար եկամուտների և ծախսերի հաշիվների գրոյական մնացորդ ունենալու համար: Քանի որ եկամուտների և ծախսերի հաշիվները փակվում են, հաշիվների փակման գործընթացը սկսվում է շահույթի մասին հաշվետվությունը կազմելուց հետո:

Եկամուտների և ծախսերի հաշիվները *ժամանակավոր* կամ նոմինալ հաշիվներ են, քանի որ նրանք նախատեսված են միայն հաշվետու ժամանակաշրջանի տվյալների կուտակման համար: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո փակող գրանցումների միջոցով եկամուտների և ծախսերի մնացորդները գրառվում են հաշվեկշռի «չբաշխված շահույթ» հաշվին: Այս գործընթացը նշված երկու հաշվետվությունները կապում է իրար:

Փակման ժամանակ կրեդիտային մնացորդով հաշիվը փակվում է դեբետագրման և մեկ այլ հաշվի կրեդիտագրման միջոցով, հետևաբար կրեդիտային մնացորդը փոխանցվում է մեկ այլ հաշվի կրեդիտ: Դեբետային մնացորդով հաշիվը փակվում է կրեդիտագրման և մեկ այլ հաշվի դեբետագրման միջոցով, հետևաբար հաշվի դեբետային մնացորդը դուրս է գրվում մեկ այլ հաշվի դեբետ: Այսպես կոչված «մեկ այլ հաշիվ» կարող է լինել «չբաշխված շահույթ» հաշիվը կամ «եկամտի ամփոփում» կոչվող հատուկ հաշիվը: Եթե կիրառվում է «եկամտի ամփոփում» հաշիվը, ապա այն ծառայում է եկամուտների և ծախսերի հաշիվների մնացորդների գրառման համար, որից հետո այն փակվում է «չբաշխված շահույթ» հաշվին եկամուտների և ծախսերի զուտ մնացորդի գրառումով: Նույն արդյունքին կարելի է հասնել «չբաշխված շահույթ» հաշվի կիրառման միջոցով:

Մեր օրինակում «Ա բանկի» փորձնական հաշվեկշռում եկամուտներ են ստացվել միայն տոկոսային եկամուտների գծով՝

Տոկոսային եկամուտ	2,100	կրեդիտ
Փորձնական հաշվեկշռի ծախսային հաշիվներ են ներկայացված.		
Տոկոսային ծախսեր	800	դեբետ
Մաշվածության ծախսեր	500	դեբետ
Հատկացումներ վարկերի պահուստին	280	դեբետ

Որպեսզի վերոհիշյալ հաշիվների մնացորդները գրառվեն «եկամտի ամփոփում» հաշվում, հետևյալ փակող գրանցումներն են կատարվում.

Դեկտեմբեր 31, 20xx

Տոկոսային եկամուտ	2,100	
Տոկոսային ծախսեր	800	
Մաշվածության ծախսեր	500	
Հատկացումներ վարկերի պահուստին	280	

Եկամտի ամփոփում հաշվում գրառելու համար

Քանի որ եկամուտները գերազանցում են ծախսերին, «եկամտի ամփոփումը» կրեդիտագրվում է մնացորդի չափով: Եկամուտների ամփոփման հաշիվը փակվում է հետևյալ գրանցումով.

Դեկտեմբեր 31, 20xx

Եկամուտների ամփոփում	520	
Չբաշխված շահույթ		520

Չբաշխված շահույթ հաշիվը մշտական կամ իրական հաշիվ է: Մշտական հաշիվները հաշվապահական հաշվեկշռի հաշիվներն են, որոնք յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո չեն փակվում: Չբաշխված շահույթ հաշվում կուտակային գրանցվում են կազմակերպության հիմնադրման օրվանից ստացված զուտ եկամուտները՝ հանած բաժնետերերին վճարված շահաբաժինները:

Աղյուսակ 10-ում ներկայացված է փակող գրանցումների գրառումը գլխավոր գրքի հաշիվներում:

Քայլ 9. Հաշիվների ճշգրտված փակված գրառումներով հաշվեկշռի կազմում

Փակող գրանցումների տեղադրումից հետո կազմվում է փորձնական հաշվեկշիռը, որը ներկայացված է աղյուսակ 11-ում: Այժմ, երբ բոլոր եկամտային և ծախսային հաշիվները փակված են, մնացորդ ունեցող գլխավոր գրքի հաշիվները մշտական կամ հաշվեկշռային հաշիվներ են:

Քայլ 10. Հաշվապահական հաշվեկշռի, կապիտալի փոփոխության և շահույթի վերաբերյալ հաշվետվությունների կազմում

Օգտագործելով փակող հաշիվներից հետո կազմված փորձնական հաշվեկշռի հաշիվները, կարելի է կազմել *հաշվապահական հաշվեկշիռը*, որը ներկայացված է աղյուսակ 12-ում, կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունը, որը ներկայացված է աղյուսակ 13-ում և շահույթի (ֆինանսական արդյունքների) վերաբերյալ հաշվետվությունը՝ աղյուսակ 9-ում:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է սկզբնական հաշվառման փաստաթուղթը:
2. Որո՞նք են տեղեկատվության ձևավորման ցիկլերը:
3. Ո՞րն է մատյանի և գլխավոր գրքի կապը:
4. Ի՞նչ նպատակների է ծառայում փորձնական հաշվեկշռի կազմումը:
5. Թվարկել կամխիկի և կուտակային սկզբունքներով վարվող հաշվապահության տարբերակիչ կողմերը:
6. Ե՞րբ են կատարվում փակող գրանցումներ և ո՞ր հաշիվների միջոցով:

ԳԼՈՒԽ 5. ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են հաշվեկշռի «Դրամական միջոցներ» հոդվածի տարրերը, նրանցով պայմանավորված գործառնությունների նկարագրությունը, ինչպես նաև ներքին հսկողության ընթացակարգը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը. Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ ներկայացնել հաշվեկշռում «Դրամական միջոցներ» հոդվածի տարրերը, տարբերակել թղթակցային նոստրո և լրոտ հաշիվները, տիրապետել ներքին հսկողական միջոցառումներին, կատարել գործառնություններ կանխիկով, ճանապարհային չեկերով, թղթակցային հաշիվներով, օգտագործել դրամական միջոցների հետ կապված տերմինոլոգիա:

5.1. Ներածություն

Բանկերի հաշվեկշռի «Ակտիվներ» բաժինը սկսվում է «Դրամական միջոցներ» հոդվածի ներկայացումից: Այս հոդվածում ընդգրկված են հետևյալ 2 հիմնական խմբերը.

1. **դրամական միջոցներ դրամարկղում (Cash on Hand)**
 - կանխիկ դրամ և արտարժույթ
 - կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր:
2. **դրամական միջոցներ բանկերում կամ պահանջներ բանկերի նկատմամբ (Due from Banks)**
 - **ցպահանջ դեպոզիտային (ներառյալ նոստրո հաշիվներ) միջոցներ թղթակից և այլ բանկերում**
 - **ցպահանջ պահուստավորված միջոցներ ԳՂ կենտրոնական բանկում:**
Քանի որ ակտիվների այս խումբը հիմնականում եկամտաբեր չէ, հետևաբար բանկերն այս հաշիվներում պահում են սահմանափակ քանակությամբ միջոցներ՝ իրացվելիության անհրաժեշտ մակարդակ ապահովելու և հաճախորդների դրամական միջոցների նկատմամբ պահանջները ժամանակին բավարարելու նպատակով:

5.2. Թղթադրամներ և մետաղադրամներ (Currency and Coin)

Կանխիկ փողը բանկում պահվում է գանձապահների հսկողության ներքո այդ նպատակի համար առանձնացված համապատասխան տարածքում՝ բունկերում: Կանխիկի նկատմամբ հաճախորդների ամենօրյա պահանջումներին բավարարման նպատակով բանկերը ստեղծում են ման փոքր (Petty Cash) դրամարկղեր, որտեղ առանձնացված են համապատասխան պահարաններ (սեյֆեր, պահախցիկներ) փողը պահելու նպատակով:

5.3. Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր

Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերի տեսակներ են ճանապարհային չեկերը (Traveler's Check): Այս չեկերը հիմնականում օգտագործվում են միջազգային ոչ առևտրային բնույթի հաշվարկներում և ունեն հետևյալ առանձնահատկությունները.

- անվտանգ են
- հարմարավետ են
- կորստի դեպքում ունեն փոխհատուցման հնարավորություն
- անժամկետ են:

Ճանապարհային չեկերն ապահովում են ճանապարհորդների հարմարավետությունը. կախված մեկնելու վայրից, նրանք կարող են գնել տվյալ երկրի արտարժույթով արտահայտված ճանապարհային չեկեր, որը հնարավորություն է տալիս խուսափել ավելորդ փոխարկումներից: Որպես ճանապարհային չեկեր թողարկողներ հանդես են գալիս բանկերը, ֆինանսական ընկերությունները, տուրիստական ֆիրմաները: Ներկայումս աշխարհում հայտնի են VISA, THOMAS COOK/MASTER CARD, AMERICAN EXPRESS, CITICORP ճանապարհային չեկերը:

Ճանապարհային չեկերն ունեն անվանական արժեք (տեղակայված նրանց դիմերեսին) և կախված չեկի տեսակից կամ թողարկող կազմակերպությունից, թողարկվում են աշխարհի տարբեր արտարժույթներով: Ճանապարհային չեկերը վճարվում են անբողջությամբ. մասնակի վճարում չի թույլատրվում: Ինչպես կանխիկ դրամը կամ ցանկացած կանխիկ արտարժույթ, ճանապարհային չեկերը նույնպես թողարկվում են հատուկ պաշտպանական հատկանիշներով, որոնց առկայությունը ապահովում է նրանց վճարունակությունը:

Ճանապարհային չեկերի սպասարկումը բանկերի կողմից ներառում է 3 տեսակի ծառայություններ.

- չեկերի գնում
- չեկերի վաճառք
- փոխհատուցում կորցրած չեկերի դիմաց:

5.4. Ավտոմատ զանձման սարքեր (ԱԳՄ կամ բանկոմատներ, ATM)

Բանկոմատները ավտոմատ սարքեր են, որոնց միջոցով հաճախորդները պլաստիկ քարտերով կանխիկ և անկանխիկ գործառնություններ են կատարում: Բանկոմատների համալրումը կանխիկ միջոցներով կատարվում է բանկի դրամարկղից: Բանկոմատները՝ յուրօրինակ դրամարկղեր են, որոնք ի տարբերություն բանկի ընթացիկ, գործառնական դրամարկղի, սպասարկում են նաև բանկի գործառնական օրվա ավարտից հետո, օրվա ցանկացած ժամին, շուրջօրյա: Բանկոմատների հաշվառումը հաշվեկշռում տարվում է բանկի դրամարկղի հաշիվներից առանձին՝ հաշվային պլանում այդ նպատակով առանձնացված սինթետիկ հաշիվներով:

5.5. Պահանջներ բանկերի նկատմամբ

Հաշիվների այս խումբն իրենցից ներկայացնում են ցպահանջ միջոցները *թղթակից բանկերում (նոստրո հաշիվներ)* և *ՀՀ կենտրոնական բանկում*: Բանկերի թղթակցային ցանցը միջբանկային փոխհարաբերությունների համակարգ է, որի միջոցով բանկերն իրականացնում են հաճախորդների անկանխիկ փոխանցումները, թե՛ ՀՀ տարածքում, թե՛ նրանից դուրս:

Թղթակցային հարաբերությունները ներառում են նաև բանկերի *լորո (wostro) հաշիվները*, որոնք հաշվառվում են բանկի պարտավորություններում:

5.6. Դրամական միջոցներով կատարվող գործառնություններ

Այս բաժնում քննարկվում են հաշվապահական այն հիմնական գրանցումները, որոնք կիրառվում են դրամական միջոցներով գործառնություններ իրականացնելիս:


Գործառնություն 1. Հաճախորդը բացում է չեկային հաշիվ բանկում և վճարում \$500 կանխիկով:

Մատյանում կատարվող գրանցումները կլինեն հետևյալը.

<i>Ամսաթիվ</i>	
Կանխիկ դրամական միջոցներ	500
Ցպահանջ դեպոզիտային հաշիվ	500

Հաճախորդի չեկային հաշվում \$500 մուտքագրում

Դրամական միջոցների հանրագումարն աճեց 500 ԱՄՆ դոլարի չափով՝ ի հաշիվ դրամարկղում կանխիկ 500 ԱՄՆ դոլարի մուտքագրման: Ցպահանջ դեպոզիտային պարտավորությունները նույնպես ավելացան այդ գումարի չափով: Ցպահանջ դեպոզիտը գլխավոր գրքի հսկիչ հաշիվն է, որը ցույց է տալիս հաշվեկշռային բոլոր օժանդակ հաշիվների հանրագումարը:




Գործառնություն 2. Հաճախորդը բացում է չեկային հաշիվ B բանկում և հանձնարարում նրան \$500 ներդնել A բանկում:

Մատյանում կատարվող գրանցումները կլինեն հետևյալը.

<i>Ամսաթիվ</i>	
Պահանջ A բանկի նկատմամբ	500
Ցպահանջ դեպոզիտ	500

Հաճախորդի \$500 դեպոզիտի ակցեպտի գրանցում չեկային հաշվում



Գործառնություն 3. Հաճախորդը \$100 չեկ է ներկայացնում բանկ՝ կանխիկացման համար:

Մատյանում կատարվող գրանցումները կլինեն հետևյալը.

<i>Ամսաթիվ</i>	
Ցպահանջ դեպոզիտ	100
Կանխիկ դրամական միջոցներ	100

Հաճախորդի \$100 չեկի վճարում դեպոզիտային հաշվից

¹ Բանկոմատներով կատարվող գործառնությունների նկարագրությունը և հաշվառումը մանրամասն ներկայացված է «Պլաստիկ քարտերով գործառնություններ» գլուխ 13-ում:

<i>Պարտավորություն</i>	<i>Ակտիվ</i>
Ցլաահանք դեպոզիտ	Կանխիկ դրամական միջոցներ
100	100

Գործառնություն 4. A Բանկը այլ C բանկի թղթակցային հաշվից դուրս է գրում կանխիկ գումար՝ 5,000 դոլարի չափով:

<i>Ամսաթիվ</i>	
Կանխիկ դրամական միջոցներ	5,000
Թղթակցային հաշիվ C բանկում	5,000
<i>C բանկի դեպոզիտային հաշվից կանխիկի դուրս գրում</i>	
Այս գործարքը ազդեցություն չի ունենում դրամական ակտիվների հանրագումարի վրա, քանի որ դրամական միջոցների ակտիվային մի հաշիվը ավելանում է, մյուսը՝ նվազում:	
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Դրամարկդ	Թղթակցային հաշիվ C բանկում
5,000	5,000

Գործառնություն 5. Բանկը գլխամասային գրասենյակի դրամարկդից 60,000 ԱՄՆ դոլար է փոխանցում մասնաճյուղի դրամարկդ: Մատյանում ոչ մի գրանցում չի կատարվում և բանկի կոնսոլիդացված հաշվեկշռում դրամարկդի մնացորդը չի փոխվում:

Գործառնություն 6. Հաճախորդը բանկին վճարում է կանխիկ գումար՝ \$520՝ \$500 վարկի և \$20 տոկոսների մարման նպատակով: Նախկինում տոկոսները չեն հաշվեգրվել:

<i>Ամսաթիվ</i>	
Կանխիկ դրամական միջոցներ	520
Վարկ	500
Տոկոսային եկամուտ	20
<i>Վարկի և տոկոսների մարման համար</i>	

Դրամական ակտիվներն աճեցին 520 ԱՄՆ դոլարի չափով, որովհետև դրամարկդն ավելացավ նույն գումարի չափով: Վարկերը նվազեցին 500 ԱՄՆ դոլարի չափով, իսկ կապիտալն աճեց 20 ԱՄՆ դոլարի չափով: Այսպիսով, ակտիվների (վարկ և կանխիկ) զուտ հանրագումարն աճեց 20 ԱՄՆ դոլարի չափով:

<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>	<i>Կապիտալ</i>
Կանխիկ	Վարկ	Տոկոսային եկամուտ
520	500	20

Գործառնություն 7. Բանկը հաճախորդից գնում է 100 ԱՄՆ դոլարի ճանապարհային չեկ և կանխիկացնում:

Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.	
<i>Ամսաթիվ</i>	
7.1. Չեկի կանխիկացում	
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	100
Կանխիկ	100

<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	Կանխիկ
100	100

7.2. Բանկը թողարկող կազմակերպությունից ստանում է վճարված չեկի փոխհատուցման գումարը.

Թղթակցային նոստրո հաշիվ	100
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	100

<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Թղթակցային նոստրո հաշիվ	Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր

100	100
<p>Գործառնություն 8. Բանկը հաճախորդին վաճառում է 100 ԱՄՆ դոլարի ճանապարհային չեկ: Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.</p>	
<p><i>Ամսաթիվ</i></p>	
Կանխիկ	100
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	100
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	Կանխիկ
100	100
<p>Գործառնություն 9. Բանկը ճանապարհային չեկեր թողարկող կազմակերպությանը (եմիտենտին) վճարել է 1,000 ԱՄՆ դոլար, հետագայում վաճառելու նպատակով չեկեր գնելու համար: Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.</p>	
<p><i>Ամսաթիվ</i></p>	
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	1,000
Թղթակցային նոստրո հաշիվ	1,000
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Թղթակցային նոստրո հաշիվ	Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր
1,000	1,000
<p>Գործառնություն 10. Բանկը բանկոմատը համալրում է 100,000 դրամի կանխիկով: Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.</p>	
<p><i>Ամսաթիվ</i></p>	
Բանկոմատ	100,000
Դրամարկղ	100,000
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>
Դրամարկղի հաշիվ	Բանկոմատի հաշիվ
100,000	100,000

5.7. Կանխիկ ակտիվների ներկայացումը հաշվեկշռում

Ինչպես նշվեց վերևում, հաշվեկշռի առաջին բաժինը ներկայացնում է «Դրամական միջոցներ» հաշիվների խումբը: Այն դրամական միջոցները, որոնց օգտագործման վրա կա սահմանափակում օրենքով, իրավական կամ այլ պատճառներով, ֆինանսական հաշվետվություններում պետք է պարտադիր բացահայտվեն:

5.8. Ներքին վերահսկողական միջոցառումներ կանխիկ ակտիվների վերաբերյալ

Դրամական միջոցների նկատմամբ հատուկ հսկողական միջոցառումները կարևորվում են նրանով, որ նրանք հանդիսանում են շրջանառության միջոց և նրանցով են պայմանավորված բանկային բազմաթիվ գործառնություններ: Դրամական միջոցների ներքին հսկողության խնդիրը հիմնականում կապված է ոչ այնքան հաշվառման գործընթացի, ինչքան կառավարչական գործընթացի հստակ կազմակերպման հետ: Վերջինս ներառում է.

1. հսկողության կազմակերպում դրամական միջոցների օգտագործման և պահպանման նկատմամբ
 2. պարտականությունների այնպիսի բաշխում, որը բացառի կանխիկի գողությունը
 3. կանխիկ միջոցների մուտքերի և ելքերի պլանավորված գործընթաց
 4. դրամական միջոցների համեմատազրման գործընթացի հստակ կանոնակարգում, քաղվածքների, մնացորդների պարբերաբար ստուգում, համեմատազրում:
 - Թվարկեք մի շարք հարցադրումներ, որոնց ապահովմամբ և կիրառմամբ են հիմնականում պայմանավորված դրամական միջոցների անվտանգությունը և ներքին հսկողությունը:
1. Արդյո՞ք գանձապահներն ունեն բացառիկ իրավասություններ դրամական արժեքների անվտանգության պահպանման համար:
 2. Արդյո՞ք պահպանները զինված են և ունեն համապատասխան միջոցներ դրամապահոցների հնարավոր գողությունները կանխելու համար:
 3. Արդյո՞ք դրամապահոցներն ապահովված են համապատասխան ազդանշանային համակարգերով:

4. Սահմանված է արդյո՞ք հատուկ հսկողություն գլխավոր դրամապահոցի՝ բունների նկատմամբ:
5. Արդյո՞ք դրամարկղի գրքի տվյալները համեմատագրվում են գլխավոր գրքի ստուգիչ հաշիվներին ամենօրյա կտրվածքով:
6. Արդյո՞ք թղթակցային բանկերից ստացված քաղվածքները և հաստատումները համեմատագրվում են իրար հետ:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ տարրեր են ընդգրկվում «Դրամական միջոցներ» ակտիվների խմբի մեջ:
2. Ինչու՞ բանկերն իրենց բոլոր միջոցները չեն պահում դրամական միջոցների տեսքով:
3. Ի՞նչ առավելություններ ունեն ճանապարհային չեկերը կանխիկ արտարժույթի նկատմամբ:
4. Նկարագրել այն ներքին հսկողական միջոցառումները, որոնք անհրաժեշտ են դրամական միջոցների անվտանգության ապահովման համար:
5. Ի՞նչ հիմնական բացահայտումներ են տրվում կանխիկ միջոցների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում:

ԳԼՈՒԽ 6. ԴՐԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են դրամագիտական արժեքների տեսակները, նրանց հաշվառման առանձնահատկությունները:

Ուսանողներին և հնտություններին նկարագիրը: Թեմայի ուսուննասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ ներկայացնել հաշվեկշռում հուշադրամները և հուշամեդալները, հասկանալ դրամագիտական արժեքների հաշվառման առանձնահատկությունները, տարբերակել հուշամեդալը հուշադրամից:

6.1. Ներածություն

Այս գլխում կներկայացվեն դրամագիտական արժեքների տեսակները, նրանց հաշվառման առանձնահատկությունները: Դրամագիտական արժեքներ են համարվում հուշադրամները և հուշամեդալները: Հուշադրամների և հուշամեդալների պատրաստման համար օգտագործվում են թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներ:

Հուշադրամները թողարկվում են միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Դրանք ՀՀ արժույթ հանդիսացող հատուկ հատված մետաղադրամներ են:

6.2. Դրամագիտական արժեքների հաշվառումը

Հուշադրամները շրջանառության մեջ հանդես են գալիս.

- որպես օրինական վճարամիջոց՝ անվանական արժեքով
- որպես հավաքածուի, նվիրատվության առարկա:
- Ի տարբերություն հուշադրամների, հուշամեդալները *չունեն*
- անվանական արժեք
- օրինական վճարամիջոց չեն:

Դրամագիտական արժեք ներկայացնող հուշադրամները պահվում են դրամապահոցում մյուս մետաղադրամներից և արժեքներից առանձին:

Հուշադրամները և հուշամեդալները հաշվեկշռում հաշվառվում են ձեռքբերման գնով, անալիտիկ հաշվառումը տարվում է թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված արժեքների համար առանձնացված կերպով:

Ստորև ներկայացված է դրամագիտական արժեքների հաշվառման 2 տիպային գործառնություն.

Գործառնություն 1. Բանկը ՀՀ կենտրոնական բանկից ձեռք է բերում «Տիգրան Մեծ» 2 ոսկե հուշադրամ, յուրաքանչյուրը՝ 67,000 դրամով: Հուշադրամի անվանական արժեքը 50,000 դրամ է:

Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.		
<i>Ամսաթիվ</i>		
Հուշադրամներ	134,000	
Թղթակցային հաշիվ ՀՀ կենտրոնական բանկում		134,000
2 հուշադրամի հաշվառում ձեռքբերման գնով. (67,000 x 2 = 134,000 դրամ)		
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>	
Հուշադրամ	Թղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ-ում	
134,000	134,000	

Գործառնություն 2. Բանկը վաճառեց «Տիգրան Մեծ» 1 հուշադրամ՝ 67,500 դրամով:

Մատյանում գրանցումը կտրվի հետևյալ կերպ.		
<i>Ամսաթիվ</i>		
Կանխիկ	67,500	
Հուշադրամներ		67,000
Օգուտ հուշադրամների վաճառքից		500
1 հուշադրամի վաճառք ձեռքբերման գնից բարձր. (67,500 – 67,000 = 500 դրամ)		
<i>Ակտիվ</i>	<i>Ակտիվ</i>	<i>Կապիտալ</i>
Հուշադրամներ	Կանխիկ	Օգուտ
67,000	67,500	հուշադրամների վաճառքից 500

Ինքնաստուգման հարցեր

1. Սահմանել հուշադրամները:
2. Սահմանել հուշամեդալները:
3. Ինչպե՞ս են հաշվառվում դրամագիտական արժեքները:

ԳԼՈՒԽ 7. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են արտարժույթային գործառնությունների ճանաչման, հաշվառման առանձնահատկությունները:

Ուսանողությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսուննասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ ներկայացնել հաշվեկշռում արտարժույթային հոդվածները, կատարել արտարժույթի առքի, վաճառքի, փոխանակման գրանցումներ մատյանում, հաշվառել վերագնահատման արդյունքները:

7.1. Ներածություն

Արտարժույթով գործարքներն այն գործառնություններն են, որոնք արտահայտված են արտարժույթով կամ պահանջում են այդ արժույթով կատարում: Բանկը, որն իրականացնում է արտարժույթով գործարքներ, կարող է առնչվել արտարժույթային ռիսկի հետ՝ կապված փոխանակման կուրսերի հնարավոր փոփոխությունների հետ: Արդյունքում այդ ռիսկի հետևանքով առաջանում են շահույթներ կամ վնասներ, որոնք ընդգրկվում են բանկի շահույթի կամ վնասի հաշվետվության մեջ:

Հայաստանի Հանրապետության տարածքում *արգելվում է* արտարժույթը որպես ապրանքների իրացման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) դիմաց վճարանիջող օգտագործելը ռեզիդենտների միջև: Իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ապրանքների իրացման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) դիմաց *կանխիկ եղանակով վճարումները* իրականացվում են միայն ՀՀ դրամով:

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը կարգավորող իրավական նորմ է հանդիսանում ՀՀՀՀ թիվ 21 ստանդարտը, որն առաջարկում է հաշվառման մոտեցումներ և տալիս առանձին հասկացությունների սահմանումներ: Սեջբերենք մի շարք սահմանումներ, որոնք նաև կկիրառվեն սույն նյութի մեկնաբանման ընթացքում:

- **Հաշվետվական արժույթ** - այն արժույթն է, որն օգտագործվում է ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելիս:
- **Արտարժույթ** – կազմակերպության հաշվետվական արժույթից տարբեր արժույթ:
- **Փոխանակման փոխարժեք** - երկու արժույթների փոխանակման հարաբերակցություն:

Որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը¹:

- **Փոխարժեքային տարբերություններ** – տարբերություն, որն առաջանում է ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով հաշվարկված տվյալ արտարժույթի և առքի (վաճառքի) կուրսի միջև:
- **Արտարժույթի փոխակերպում** – որևէ արտարժույթով արտահայտված ակտիվի կամ պարտավորության փոխանակումն այլ արտարժույթով, կողմերի կողմից համաձայնեցված կուրսով:
- **Կրոս - կուրս** - երկու արտարժույթների հարաբերակցություն՝ հաշվարկված այդ արտարժույթների փոխարժեքները՝ 3-րդ արտարժույթի նկատմամբ:²
- **Վերագնահատում** – որն առաջանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում արտարժույթով արտահայտված հաշիվների մնացորդներից:

7.2. Արտարժույթով կատարվող գործարքների հաշվառման կարգը

Ինչպես գիտեք, հաշվառման վարման կանոններից մեկը սինթետիկ և անալիտիկ հաշիվների համապատասխանեցումն է: Արտարժույթով գործարքների սինթետիկ հաշվառումը տարվում է հայկական դրամով, իսկ անալիտիկ հաշվառումը՝ կրկնակի գնահատմամբ, այսինքն և արտարժույթով և տվյալ արտարժույթի դրամային համարժեքով, ըստ արտարժույթի առանձին տեսակների, անվանումների և ըստ հաշվետերերի:

7.2.1. Արտարժույթային հաշիվների մնացորդների վերագնահատում

Արտարժույթով արտահայտված բոլոր հաշիվների մնացորդները ենթակա են վերագնահատման ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

Երբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը նվազում է, արտարժույթային մնացորդների դրամով արտահայտված համարժեքը նույնպես նվազում է, իսկ վերագնահատման արդյունքը մատյանում արտացոլվում է հետևյալ գրանցմամբ:

¹ Կենտրոնական բանկը հայտարարում է արտարժույթի ամենօրյա առք ու վաճառքի փոխարժեքները նախորդ օրը ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա, որոնց միջնակետը (միջին մեծությունը) համարվում է հաշվարկային փոխարժեք: Հաշվարկային փոխարժեքը բանկերի և այլ սուբյեկտների կողմից օգտագործվում է հաշվապահական հաշվառման և վերագնահատման նպատակներով:

² Կրոս - կուրսի հաշվարկման ժամանակ սովորաբար որպես 3-րդ արտարժույթ դիտարկվում է ԱՄՆ դոլարը:

Արտարժույթի վերագնահատումից կորուստներ		
Ակտիվներ բաժնի հաշիվներ		
և		
Պարտավորություններ բաժնի հաշիվներ		
Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ		
Երբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքն աճում է, արտարժույթային մնացորդների դրամով արտահայտված համարժեքը նույնպես աճում է, իսկ վերագնահատման արդյունքը մատյանում արտացոլվում է հետևյալ գրանցմամբ.		
Ակտիվներ բաժնի հաշիվներ		
Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ		
և		
Արտարժույթի վերագնահատումից կորուստներ		
Պարտավորություններ բաժնի հաշիվներ		
Արտահաշվեկշռային հաշիվների արտարժույթով մնացորդները չեն վերագնահատվում, այլ հաշվետվությունների կազմման ժամանակ հաշվարկվում են տվյալ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:		
Դիտարկենք հետևյալ օրինակը.		
2000թ. դեկտեմբերի 1-ին, A բանկը B բանկից ձեռք է բերում 10,000 ԱՄՆ դոլարի չափով ավանդային սերտիֆիկատ, տարեկան 10% տոկոսադրույքով, 60 օր ժամկետով:		
Հաշվարկային փոխարժեքը սահմանված է՝		
01.12.2000թ. 500 դրամ		
31.12.2000թ. 510 դրամ		
30.01.2001թ. 490 դրամ		
Ա բանկի կողմից մատյանում կատարվում են հետևյալ գրանցումները.		
01.12.2000թ.		
Ավանդային սերտիֆիկատ	5,000,000 դրամ	
Կանխիկ դրամական միջոցներ		5,000,000 դրամ
<i>Ավանդային սերտիֆիկատի ձեռքբերում (\$10,000 x 500 դրամ)</i>		
31.12.00թ.		
Ավանդային սերտիֆիկատ	100,000 դրամ	
Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ		100,000 դրամ
<i>Վերագնահատման գրանցում (510դրամ - 500դրամ) x \$10,000 = 100,000</i>		
31.12.00թ.		
Հաշվեգրված ստացվելիք տոկոս	41,917 դրամ	
Տոկոսային եկամուտ		41,917 դրամ
<i>Մեկ ամսվա տոկոսագումարի հաշվեգրում (\$10,000 x 0.1/365 x 30 օր = 82.19 x 510 դրամ)</i>		
30.01.01թ.		
Արտարժույթի վերագնահատումից կորուստներ	200,000 դրամ	
Ավանդային սերտիֆիկատ		200,000 դրամ
<i>Վերագնահատում (510 - 490 x \$10,000)</i>		
30.01.01թ.		
Արտարժույթի վերագնահատման բացասական արդյունք	1,644 դրամ	
Հաշվեգրված տոկոս		1,644 դրամ
<i>Տոկոսագումարի վերագնահատում (510 - 490 = 20 x \$82.19)</i>		
30.01.01թ.		
Կանխիկ	4,900,000 դրամ	
Ավանդային սերտիֆիկատ		4,900,000 դրամ
<i>Ավանդի վերադարձի գրանցում (490դրամ x \$10,000)</i>		
30.01.01թ.		
Կանխիկ	80,546 դրամ	
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		40,273 դրամ
Տոկոսային եկամուտ		40,273 դրամ
<i>Ավանդի տոկոսի վերադարձ (490 դրամ x (\$10,000 x 10% x 60/365))</i>		

7.2.2. Արտարժույթային գործառնություններից եկամուտների և ծախսերի գրանցումը

Բանկերի կողմից իրականացվող արտարժույթային գործառնությունները ներառում են արտարժույթի առք ու վաճառք, մեկ արտարժույթի փոխանակում մեկ այլ արտարժույթով, կանխիկ արտարժույթի փոխարկում անկանխիկ արտարժույթի կամ հակառակը և այլն: Եթե արտարժույթը վաճառվում է հաշվարկային փոխարժեքից բարձր, ապա գործարքից գրանցվում է օգուտ, իսկ հաշվարկային փոխարժեքից ցածր վաճառելու դեպքում գրանցվում է կորուստ: Այսինքն, արտարժույթի առքի կամ վաճառքի փոխարժեքը համեմատվում է հաշվարկային փոխարժեքի հետ և փոխարժեքային տարբերությունները գրանցվում են, համապատասխանաբար, կամ եկամուտ, կամ ծախս:

Դիտարկենք արտարժույթով գործարքների մի շարք օրինակներ.

Օրինակ 1. Բանկի կողմից կանխիկ արտարժույթի գնում անկանխիկ դրամով այլ բանկից:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

Կանխիկ արտարժույթ (ծեռք բերված արտարժույթի գումար, համարժեքը հաշվարկային փոխարժեքով) Թղթակցային հաշիվ այլ բանկում ազգային արժույթով (ծեռք բերված արտարժույթի համարժեքը գործարքի փոխարժեքով)

Կորուստ արտարժույթի առքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը բարձր է հաշվարկային փոխարժեքից)

և / կամ

Օգուտ արտարժույթի առքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը ցածր է հաշվարկային փոխարժեքից)

Դիտարկենք թվային օրինակ.

Ենթադրենք, 01.04.2000թ. A բանկը B բանկի հետ կնքել է \$50,000 կանխիկ արտարժույթի գնման համաձայնագիր, գործարքի փոխարժեքը սահմանված է 500 դրամ, հաշվարկային փոխարժեքը 510 դրամ:

Մատյանում արվում է հետևյալ գրանցումը.

01.04.2000թ.

Կանխիկ արտարժույթ դրամարկղում \$50,000 (համարժեքը՝ 25,500,000 դրամ, ըստ հաշվարկային փոխարժեքի)

Նոստրո հաշիվ այլ բանկում դրամով

25,000,000 դրամ

Օգուտ արտարժույթի առքի գործարքից

500,000 դրամ

Օրինակ 2. Բանկի կողմից անկանխիկ արտարժույթի գնում անկանխիկ դրամով այլ բանկից:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

Թղթակցային Նոստրո հաշիվ այլ բանկում արտարժույթով (ծեռք բերված արտարժույթի գումար, համարժեքը հաշվարկային փոխարժեքով)

Թղթակցային Նոստրո հաշիվ այլ բանկում ազգային արժույթով (ծեռք բերված արտարժույթի համարժեքը գործարքի փոխարժեքով)

Կորուստ արտարժույթի առքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը բարձր է հաշվարկային փոխարժեքից)

և / կամ

Օգուտ արտարժույթի առքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը ցածր է հաշվարկային փոխարժեքից)

Օրինակ 3. Բանկի կողմից կանխիկ արտարժույթի վաճառք անկանխիկ դրամով այլ բանկին:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

Թղթակցային Նոստրո հաշիվ այլ բանկում ազգային արժույթով (արտարժույթի համարժեքը գործարքի փոխարժեքով)

Կանխիկ արտարժույթ (վաճառվող արտարժույթի գումարը, համարժեքը հաշվարկային փոխարժեքով)

Կորուստ արտարժույթի վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը ցածր է հաշվարկային փոխարժեքից)

և / կամ

Օգուտ արտարժույթի վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը բարձր է հաշվարկային փոխարժեքից)

Օրինակ 4. Բանկի կողմից անկանխիկ արտարժույթի վաճառք անկանխիկ դրամով այլ բանկին:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

Թղթակցային Նոստրո հաշիվ այլ բանկում ազգային արժույթով համարժեքը գործարքի փոխարժեքով)

Թղթակցային Նոստրո հաշիվ այլ բանկում արտարժույթով (վաճառվող արտարժույթի գումարը; համարժեքը հաշվարկային փոխարժեքով)

Կորուստ արտարժույթի վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը ցածր է հաշվարկային փոխարժեքից)
և / կամ
Օգուտ արտարժույթի վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը բարձր է հաշվարկային փոխարժեքից)

Օրինակ 5. Բանկի կողմից կանխիկ արտարժույթի դուրսգրում այլ բանկում ունեցած նոստրո հաշվից:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.
Կանխիկ արտարժույթ (արտարժույթի գումարը; համարժեքը հաշվարկային փոխարժեքով)
Թղթակցային հաշիվ այլ բանկում արտարժույթով
Եթե Նոստրո հաշվից դուրս գրված արտարժույթը դեռ գտնվում է ճանապարհին, ապա տրվում են հետևյալ ձևակերպումները.
Կանխիկ արտարժույթ ճանապարհին
Նոստրո հաշիվ

Արտարժույթը դրամարկղ մուտքագրելիս

Արտարժույթ դրամարկղում
Կանխիկ արտարժույթ ճանապարհին
Այլ բանկից Նոստրո հաշվի քաղվածքը ստանալուց հետո կատարվում է դրամարկղ մուտքագրված արտարժույթի մնացորդի ստուգումը քաղվածքի հետ:

Օրինակ 6. Բանկի կողմից Նոստրո հաշվի համալրում կանխիկ արտարժույթով:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.
Թղթակցային Նոստրո հաշիվ արտարժույթով (համարժեքը հաշվարկային փոխարժեքով)
Կանխիկ արտարժույթ դրամարկղում

Օրինակ 7. Հաճախորդից կանխիկ արտարժույթի ընդունում:

Կանխիկ արտարժույթ դրամարկղում
Հաճախորդի հաշիվ արտարժույթով
Գումարը հաշվեկշռում վերածվում է դրամի տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքով:

Օրինակ 8. Մի տեսակի արտարժույթի անկանխիկ փոխակերպում մեկ այլ արտարժույթով

Նոստրո հաշիվ այլ բանկում գնվող արտարժույթով (համարժեքը գործարքի փոխարժեքով)
Նոստրո հաշիվ այլ բանկում վաճառվող արտարժույթով (համարժեքը հաշվարկային փոխարժեքով)
Կորուստ արտարժույթի առք ու վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը ցածր է հաշվարկային փոխարժեքից)
և / կամ
Օգուտ արտարժույթի առք ու վաճառքից (կուրսային տարբերության գումարը, եթե գործարքի փոխարժեքը բարձր է հաշվարկային փոխարժեքից)

7.2.3. Արտարժույթով հաշվարկներ բանկի և նրա մասնաճյուղերի միջև

Օրինակ 1. Մասնաճյուղի հաճախորդի օգտին արտարժույթի մուտք

Հաշվառում գլխամասի կողմից
Նոստրո հաշիվ արտարժույթով
Հաշվարկներ մասնաճյուղերի հետ արտարժույթով

Հաշվառում մասնաճյուղի կողմից
Հաշվարկներ գլխամասի հետ արտարժույթով
Հաճախորդի հաշիվ

Օրինակ 2. Մասնաճյուղի հաճախորդի հաշվից վճարումների իրականացում

Հաշվառում մասնաճյուղում
Հաճախորդի արտարժույթային հաշիվ
Հաշվարկներ գլխամասի հետ արտարժույթով

Հաշվառում գլխամասում
Հաշվարկներ մասնաճյուղերի հետ արտարժույթով
Նոստրո հաշիվ այլ բանկում արտարժույթով

7.2.4. Արտարժույթի առք ու վաճառքի ժամկետային գործառնություններ

Բանկերը կարող են իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի գործարքներ, որոնք պետք է կատարվեն ապագայում: Այս տիպի ժամկետային անավարտ գործարքները (արժույթային ածանցյալ գործիքներ) պայմանագրի կնքման պահին հաշվառվում են որպես բանկի պարտավորություններ՝ արտահաշվեկշռի համապատասխան հաշիվներում, գործարքի կնքման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանած հաշվարկային փոխարժեքով:

Անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ գործարքի բնույթի, տարանջատելով որպես սվոպ, ֆորվարդ, ֆյուչերս և օպցիոն պայմանագրեր: Սփոթ գործարքը անմիջապես գրանցվում է հաշվեկշռում:

Այս տիպի գործառնություններից կորուստները կամ օգուտները գրանցվում են գործարքի կատարման օրը, որպես գործարքի փոխարժեքի և տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքի տարբերություն: Արտարժույթի նմանատիպ գործարքները բանկի համար կարող են լինել շատ ռիսկային, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով. օրինակ, փոխարժեքի սահմանման ձևով. ֆիքսված, թե փոփոխական, տնտեսության իրավիճակով և այլն: Նմանատիպ գործարքներից բանկերը կարող են կրել չնախատեսված կորուստներ:

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Ա բանկը 2000թ. հունվարի 10-ին Բ բանկի հետ կնքում է ֆորվարդային գործարք՝ կանխիկ 1,000 ԱՄՆ դոլարի գնում անկանխիկ դրամով մեկ ամիս հետո. 1\$ ԱՄՆ դոլարը՝ 550 դրամ փոխարժեքով.

Գործարքի կնքման օրը հաշվարկային փոխարժեքը կազմում է 560 դրամ:

Ա բանկը գործարքի կնքման օրը արտահաշվեկշռի ֆորվարդ գործարքների համար նախատեսված բաժնում Բ բանկի ամուլում բացում է հաշիվ, որտեղ մուտքագրում է ապագայում գնվելիք ԱՄՆ դոլարը՝ 560,000 (\$1,000 x 560 դրամ):

Մեկ ամիս հետո Ա բանկի կողմից կատարվում են հետևյալ գործառնությունները (ենթադրենք այդ օրը հաշվարկային փոխարժեքը կազմում էր 540 դրամ).

1. Մեկ ամիս հետո (10.02.2000թ.) արտահաշվեկշռի ֆորվարդային հաշվից ելքագրվում է 540,000 դրամ (\$1,000-ը հաշվարկված այդ օրվա փոխարժեքով)
2. Միաժամանակ մատյանում կատարվում են հետևյալ գրանցումները.

10.02.2000թ.	
Կանխիկ արտարժույթի դրամարկղ	540,000
Կորուստ ֆորվարդային գործարքից	10,000
Նոստրո հաշիվ դրամով այլ բանկում	550,000
Ֆորվարդային գործարքի գրանցում	

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է հաշվարկային փոխարժեքը:
2. Ինչպե՞ս են գրանցվում արտարժույթի վերագնահատման արդյունքները մատյանում:
3. Ինչպե՞ս են որոշվում և գրանցվում արտարժույթի առք ու վաճառքից օգուտները և կորուստները:
4. Որո՞նք են արտարժույթի ժանկետային գործարքները և ինչպես են հաշվառվում:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ

Թեմայի նպատակը ներկայացվում են ներդրումային արժեթղթերի տեսակները, հաշվառման, ճանաչման առանձնահատկությունները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ ներկայացնել հաշվեկշռում ներդրումային արժեթղթերը, կատարել արժեթղթերով գրանցումներ մատյանում, **գեղջատուկոսի**, հավելվածարի ամորտիզացիա, տալ բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում արժեթղթերի վերաբերյալ, օգտագործել ներդրումների հետ կապված տերմինոլոգիա:

8.1. Ներածություն

Ծիշտ է, բանկերի գլխավոր գործառնություններից մեկը վարկերի տրամադրումն է՝ բնակչության սպառողական կարիքների բավարարման, ինչպես նաև տնտեսության, փոքր և միջին բիզնեսի զարգացման նպատակով, սակայն բանկային ազատ միջոցները հնարավոր չէ ամբողջությամբ տեղաբաշխել վարկերի տեսքով: Վարկերի մեծ մասը լիկվիդային (իրացվելի) չեն, արագ չեն կարող վաճառվել այն ժամանակ, երբ բանկը կարիք ունի կանխիկ դրամական միջոցների: Միևնույն ժամանակ, վարկերն իրենց մեջ պարունակում են միջոցների չվերադարձման մեծ հավանականություն (ռիսկ) և հանդիսանում են բանկային ակտիվների ամենառիսկային ու ծավալուն մասը:

Վերոհիշյալ հանգամանքներից ելնելով՝ բանկերը սկսեցին իրենց ակտիվային պորտֆելի զգալի մասը (մոտ 1/3-ից 1/5 մասը) տեղաբաշխել եկամտաբեր ակտիվների մեկ այլ տեսակի՝ արժեթղթերի մեջ: Արժեթղթերն իրականացնում են մի շարք կարևոր ֆունկցիաներ՝ ապահովելով բանկերին կայուն եկամտաբերություն, իրացվելիություն և դիվերսիֆիկացիա՝ ռիսկի նվազեցման նպատակով:

Այսպիսով, վարկերից հետո բանկային ակտիվների 2-րդ կարևոր խումբը *արժեթղթերում ներդրումներն են*: Ըստ նպատակայնության, արժեթղթերը բաժանվում են հետևյալ 3 խմբի.

- առևտրական նպատակներով պահվող արժեթղթեր
- վաճառքի համար մատչելի արժեթղթեր
- մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր (ներդրումային):

Սույն գլխում քննարկվում են միայն մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հաշվառման առանձնահատկությունները:

Ներդրումային արժեթղթերի մեջ ներառվում են կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները (Equity) և պարտքային արժեթղթերը (Debt securities): Առաջինները ներդրումներն են կանոնադրական արժեթղթերում, որոնց հետ կապված գործառնությունները չեն քննարկվի այս բաժնում, քանի որ բանկերի կողմից հիմնականում իրականացվում են պարտքային արժեթղթերով գործառնություններ: Վերջիններս ներառում են գանձապետական պարտատոմսերը, մուրիակները:

Պարտքային արժեթղթերը թողարկվում են դրամական միջոցների ներգրավման նպատակով և փոխատուին տալիս են իրավունք որոշակի ժամկետից հետո ստանալ *անվանական (face value, par value, maturity value, principal amount)* արժեքը, որը նշված է պարտատոմսում, ինչպես նաև, տոկոսագումարներ պարտատոմսի տևողության ընթացքում: Այդ տոկոսագումարները հաշվարկվում են պարտատոմսի վրա նշված տոկոսադրույքներով՝ (stated, coupon, nominal rate)՝ անվանական արժեքի նկատմամբ:

Այսպիսով, վարկերի տրամադրումը և ներդրումային արժեթղթերում ներդրումները կարելի է համարել նույնատիպ գործարքներ.

- բանկը վարկավորում է հաճախորդին
- բանկը ստանում է եկամուտ
- վարկառուն վճարում է գումարը ժամկետի ավարտին:

Ի տարբերություն ներդրումային արժեթղթերի, վաճառքի համար մատչելի և առևտրական նպատակներով պահվող արժեթղթերը ձեռք են բերվում միայն մոտ ապագայում վաճառելու և գների տատանումներից շահույթ ստանալու նպատակով, իսկ գրանցումը կատարվում է սկզբնական, հետագայում շուկայական արժեքով, ճշտման հաշիվների միջոցով:

8.2. Արժեկտրոնային և շուկայական տոկոսադրույքների տարբերությունները

Արժեկտրոնային (Coupon Interest Rate) տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը վճարվում է անվանական արժեքի նկատմամբ: Օրինակ, 10 տարի ժամկետով 100,000 դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսն ունի 9% արժեկտրոնային տոկոսադրույք: Դա նշանակում է, որ այս արժեթղթի դիմաց պետք է վճարվի տարեկան 9,000 դրամի տոկոսագումար (100,000 X 0.09): Այս անվանական տոկոսադրույքը մնում է անփոփոխ արժեթղթի ողջ տևողության ընթացքում:

Շուկայական տոկոսադրույքը, որն անվանվում է նաև էֆեկտիվ (արդյունավետ) տոկոսադրույք կամ եկամտաբերություն (Market Interest Rate or Yield), այն տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է ներդրման շուկայական արժեքի նկատմամբ: Շուկայական արժեքը փոփոխական է, քանի որ այն սահմանվում է ելնելով առաջարկից և պահանջարկից, կախված ռիսկերից և տնտեսական իրավիճակից:

Եթե շուկայական արժեքը փոքր է անվանական արժեքից (ինչը նաև նշանակում է, որ էֆեկտիվ տոկոսադրույքը բարձր է անվանականից, արժեկտրոնայինից), ապա դա նշանակում է, որ արժեթղթերը ձեռք են բերվել *զեղչատոկոսով (Discount)*:

Երբ արժեթղթի շուկայական արժեքը ավելին է, քան նրա անվանական արժեքը (ինչը նաև նշանակում է, որ էֆեկտիվ տոկոսադրույքը ցածր է անվանականից), ապա նշանակում է, ձեռք է բերվել *հավելավճարով (Premium)*:

Շուկայական արժեքն իրենից ներկայացնում է *ներկա արժեքը (Present value)*, որը հաշվարկվում է, ելնելով շուկայական տոկոսադրույքից և տոկոսների վճարման պարբերականությունից:

Դիտարկենք ընթացիկ արժեքի հաշվարկման օրինակ՝ էֆեկտիվ տոկոսադրույքի և տոկոսավճարների վճարման քանակի հիման վրա:

Օրինակ, բանկը գնում է 100,000 անվանական արժեքով, տարեկան 10% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 12% էֆեկտիվ եկամտաբերությամբ պարտատոմս, 5 տարի մարման ժամկետով, տոկոսները վճարվելու են տարին 2 անգամ: Քանի որ էֆեկտիվը մեծ է անվանականի տոկոսադրույքից, հետևաբար առկա է զեղչատոկոս, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Տոկոսավճարների ներկա արժեքի հաշվարկ.

Նախ հաշվարկվում է անվանական արժեքի նկատմամբ արժեկտրոնի տարեկան տոկոսավճարը, ապա այն բաժանվում է 2-ի՝ կիսամյակային տոկոսավճարի մեծությունը ստանալու համար: Այս օրինակում կիսամյակային վճարը կազմում է 5,000 (100,000 x 10% x 1/2): Այնուհետև, կիրառելով սույն բանաձևը, ստանում ենք տոկոսավճարի ներկա արժեքը՝ 6% տոկոսադրույքով, 10 պարբերական վճարումների համար (Discount factor for an annuity, 6 percent, 10 interest periods):

$$PVIFA = IM [1 / i - [1 / i (1 + i)^n]$$

որտեղ՝

I - տոկոսադրույքն է

n - տոկոսների վճարման քանակը

IM - պարբերական տոկոսավճարի մեծությունը:

IM-ը՝ հաշվարկված 10% տոկոսադրույքով, կես տարվա համար հավասար է 5,000-ի:

Այստեղից $PVIFA = 5,000 \times (1/0.06) - 1/[0.06 \times (1 + 0.06)^{10}] = 36,800.45$:

Այս օրինակում *n*-ը հավասար է 10-ի (5տարի x 2), *i* –ն հավասար է 6%-ի (կես տարվա համար՝ 12%/2)

Այնուհետև հաշվարկվում է 100,000 անվանական արժեքի ներկա արժեքը՝ ելնելով էֆեկտիվ եկամտաբերությունից և կիրառելով հետևյալ բանաձևը.

$$PV = M \times [1 / (1 + i)^n]$$

Այսպիսով, *PV*-ն՝ 100,000-ի ներկա արժեքը հավասար է $100,000 \times [1 / (1 + 0.06)^{10}] = 100,000 \times 0.55839 = 55,839$ (Discount factor for a single sum, 6 percent, 10 interest periods):

Այսպիսով, այս պարտատոմսի ներկա արժեքը կկազմի 92,639.45 (36,800.45 + 55,839), այսինքն՝ պարտատոմսը ձեռք է բերվել զեղչատոկոսով, որը հավասար է 7,360.55-ի (100,000 - 92,639.45):

Եթե նույն օրինակում էֆեկտիվ տոկոսադրույքը սահմանենք 8%, ապա բանկը կվճարի անվանական արժեքից բարձր գումար: Հաշվարկը կկատարվի նույն ձևով.

Մենք քննարկեցինք եկամտաբերությունն ըստ շուկայական արժեքի, որի մեկ այլ տեսակ է *ընթացիկ եկամտաբերությունը*: Ընթացիկ եկամտաբերությունը տարեկան եկամտաբերություն է, որը

Անվանականի ներկա արժեք: $100,000 \times (1 / (1 + 0.04)^{10}) = 100,000 \times 0.67556 = 67.556$ Տոկոսային վճարների ներկա արժեք: $5,000 \times 8.11090 = 40,554.50$ Պարտատոմսի ներկա արժեք՝ 108,110.50 (67,556 + 40,554.50), հավելավճարը կազմեց՝ 8,110.50

հաշվարկվում է արժեկտրոնային տոկոսավճարները հարաբերած ձեռք բերված գնին: Մեր օրինակում գնման գինը կազմել էր 92,639, իսկ արժեկտրոնային տոկոսավճարների մեծությունը՝ 10,000, հետևաբար ընթացիկ եկամտաբերությունը կկազմի 10.79% (10,000/ 92,639 x 100):

Այստեղից էֆեկտիվ տոկոսադրույքը կարելի է ստանալ հետևյալ կերպ.

Տոկոսը վճարվում է փողի օգտագործման համար և վաստակվում է ժամանակի ընթացքում:

Տարեկան տոկոսավճար՝ 10,000 Տարեկան եկամուտը զեղչատոկոսից՝ 1,472.11 (7,360.55/5 տարիների) Ընդհանուր եկամուտը՝ 11,472.11 (10,000 + 1,472.11) Էֆեկտիվ տոկոսադրույքը կլինի՝ $11,472.11 / 92,639.45 = 12\%$

Այդ իսկ պատճառով, կուտակային հաշիվներում տոկոսային եկամուտը գրանցվում է այն ժամանակի ընթացքում, երբ բանկը ձեռք է բերում արժեթղթերը: Տոկոսային եկամուտը կուտակվում

է արժեթղթերի դիմաց այն քանակությամբ, որը հավասար է արժեթղթի տարեկան տոկոսադրույթին հաշվարկված անվանական արժեքի նկատմամբ:

Համապատասխանեցման սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից ելնելով, հավելավճարը կամ զեղչատոկոսը պետք է ամորտիզացվեն ներդրումային արժեթղթերի ձեռքբերման օրվանից մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածում: Հավելավճարի կամ զեղչատոկոսի նվազումը մինչև զրոյանալը կոչվում է **արժեթղթերի տոկոսադրույթի կարգավորում**:

Հավելավճարի կրճատումը մինչև 0 կոչվում է «մաշվածք կամ ամորտիզացիա», զեղչատոկոսինը՝ «կուտակում»: Այնուամենայնիվ, «մաշվածքը» հաճախ կիրառվում է և՛ զեղչատոկոսի և՛ հավելավճարի դեպքում: Ձեղչատոկոսը մշտապես ունի *կրեդիտային մնացորդ*, իսկ հավելավճարը *դեբետային մնացորդ*:

Գոյություն ունի ամորտիզացման 2 մեթոդ.

- **Համասանական կամ գծային մեթոդ (Straight-line Method):**
- **Շուկայական կամ էֆեկտիվ տոկոսադրույթի մեթոդ (Effective Interest Method):**
1-ին մեթոդը, սովորաբար, կիրառվում է այն դեպքում, երբ այդ մեթոդով ստացված արդյունքները էականորեն չեն տարբերվում 2-րդ մեթոդով ստացված արդյունքներից: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ներդրումներից ստացվող եկամուտը ձևավորվում է հետևյալ կերպ. զեղչատոկոս + արժեկտրոնի տոկոսային եկամուտ - հավելավճար: Տոկոսային եկամտի ստացման տեսանկյունից արժեթղթերի հաշվառումը բաժանվում է 3 խմբի՝
 - արժեթղթեր պարբերական տոկոսների վճարումով, որոնք ձեռք են բերվում անվանական արժեքով
 - արժեթղթեր պարբերական տոկոսների վճարումով, որոնք ձեռք են բերվում զեղչատոկոսով կամ հավելավճարով
 - արժեթղթեր առանց պարբերական տոկոսների վճարման, որոնք ձեռք են բերվում տոկոսների վճարման միջև ընկած ժամանակահատվածում:

8.3. Արժեթղթերի ձեռքբերում անվանական արժեքով

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Մատյանում ձեռքբերման պահին տրվում է հետևյալ ձևակերպումը.

Բանկի կողմից 2000թ. փետրվարի 1-ին ձեռք է բերվել 100,000 դրամ անվանական արժեքով, 15 ամիս մարման ժամկետով, 12% արժեկտրոնային եկամտաբերությամբ պետական պարտատոմս: Արժեկտրոնի եկամուտը վճարվում է յուրաքանչյուր եռամսյակ:

Փետրվարի 1. 2000թ.

Պետական արժեթղթեր 100,000
Դրամական միջոցներ 100,000

Արժեթղթերի անվանական արժեքով գրանցում

Բանկը ձեռքբերման օրվանից սկսած, յուրաքանչյուր ամիս հաշվեգրման սկզբունքի համաձայն, հաշվարկում է 1/12 մասով ամսական տոկոս հետևյալ կերպ. $100,000 \times 12\%/12 = 1,000$ Տոկոսագումարի գրանցումը մատյանում.

Փետրվարի 28. 2000թ.

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 1,000
Տոկոսային եկամուտ 1,000

100,000 դրամ արժեթղթերի դիմաց ամսական տոկոսադրույթի հաշվեգրում

Արժեկտրոնի առաջին վճարման ժամանակ՝ հուլիսի 1-ին տրվում է հետևյալ ձևակերպումը.

Դրամական միջոցներ 6,000
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 6,000

Հաշվեգրված տոկոսների գրանցում արժեթղթերի դիմաց

8.4. Արժեթղթերի ձեռք բերում հավելավճարով

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Քանի որ բանկը 5% արժեկտրոնային արժեթուղթը ձեռք է բերել 4% եկամտաբերությամբ, ապա պետք է վճարի հավելավճար, որը կազմում է 9,787 դրամ: Ձեռքբերման գինը կկազմի

2000թ. նոյեմբերի 1-ին բանկը գնել է 1,000,000 դրամ անվանական արժեքով պարտատոմս, 5% արժեկտրոնի վճարմամբ, 4% եկամտաբերության դիմաց: Մարման ժամկետ է սահմանված 2001 թվականի հոկտեմբերի 31-ը:

1,009,787 դրամ:

Այն հաշվապահորեն կձևակերպվի այսպես.

01.11.2000թ.

Արժեթղթեր 1,000,000

Արժեթղթերի հավելավճար 9,787

1,009,787

Արժեթղթերի ձեռքբերում հավելավճարով

Հաշվեկշռում գործարքը կգրանցվի այսպես.

Ակտիվներ

Արժեթղթերի անվանական արժեք 1,000,000

Հավելավճար 9,787

Հավելավճարով արժեթղթի մաշվածքը էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 2. Հավելավճարով գնված արժեթղթի մաշվածք

Ամսաթիվ	Արժեկտրոնային եկամտաբեր.	Տոկոսային եկամուտ	Հավելավճար	Ձեռքբերման արժեք	Չամորտիզացված հավելավճար
1	a	b	c	d	e
01.11.00				1,009,787	9,787
30.11.00	4,167	3,366	801	1,008,986	8,986
31.12.00	4,167	3,363	803	1,008,183	8,183
31.01.01	4,167	3,361	806	1,007,377	7,377
28.02.01	4,167	3,358	809	1,006,568	6,568
31.03.01	4,167	3,355	811	1,005,757	5,757
30.04.01	4,167	3,353	814	1,004,943	4,943
31.05.01	4,167	3,350	817	1,004,126	4,126
30.06.01	4,167	3,347	820	1,003,306	3,306
31.07.01	4,167	3,344	822	1,002,484	2,484
31.08.01	4,167	3,342	825	1,001,659	1,659
30.09.01	4,167	3,339	828	1,000,831	831
31.10.01	4,167	3,336	831	1,000,000	0
Ընդամենը			9,787		

- a (1,000,000 x 0.05)/12
- b (5-րդի նախկին սյուն x 0.04)/12
- c 2-3
- d 5 - 4
- e նախորդ 6 սյունակ – 4-րդ սյունակ

Առաջին ամսվա վերջին մատյանում ամորտիզացիան և տոկոսային եկամուտը գրանցվում են այսպես.

30.11.2000թ. 1-ին գրանցում

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 4,167

Տոկոսային եկամուտ 4,167

Տոկոսային եկամտի ձևակերպում

30.11.2000թ. 2-րդ գրանցում

Տոկոսային եկամուտ 801

Հավելավճար 801

Ամորտիզացիայի ձևակերպում

Հաշվեկշռում գործարքը կգրանցվի այսպես.

Ակտիվներ

Արժեթղթերի անվանական արժեք 1,000,000

Հավելավճար 8,986

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 4,167

Կապիտալ

Տոկոսային եկամուտ 3,366

8.5. Արժեթղթերի ձեռքբերում գեղատոկոսով և ամորտիզացիա ուղիղ գծային մեթոդով

Դիտարկենք հետևյալ օրինակը.
Մատյանում ձեռք բերման ժամանակ տրվում է հետևյալ գրանցումը.
01.03.1998թ.

Բանկը 1998թ. մարտի 1-ին 97,600 դրամով ձեռք է բերում 100,000 անվանական արժեքով արժեթուղթ:
Մարման ժամկետ է սահմանված 1998թ. հոկտեմբերի 31-ը:

Արժեթղթերի անվանական արժեք	100,000	
Չեղջատոկոս		2,400
Դրամական միջոցներ		97,600

Չեղջատոկոսով արժեթղթի գրանցում

Արժեթղթի ձեռք բերումից մինչև նրա ներդրման տևողության ժամկետի ավարտը յուրաքանչյուր ամիս համամասնական մեթոդով կատարվում է գեղջատոկոսի ամորտիզացիա (2,400/8 = 300):
31.03.1998թ. մատյանում կտրվի հետևյալ գրանցումը.

Չեղջատոկոս	300	
Տոկոսային եկամուտ արժեթղթերից		300

Չեղջատոկոսի ամորտիզացիա

31.10.1998թ. մատյանում կտրվի հետևյալ գրանցումը.

Դրամական միջոցներ	100,000	
Արժեթղթերի անվանական արժեք		100,000

Արժեթղթի մարման գրանցում

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Քանի որ շուկայական տոկոսադրույքը բարձր է արժեկտրոնայինից, նշանակում է առկա է

01.11.2000թ. բանկը գնել է 1,000,000 դրամ անվանական արժեքով արժեթղթեր՝ 5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, որը պետք է վճարվի ապրիլի 30-ին և հոկտեմբերի 31-ին, 6% եկամտաբերությամբ (էֆեկտիվ): Արժեթղթերի մարման ժամկետը 2001թ. հոկտեմբերի 31-ին է:

գեղջատոկոս, որը կազմում է 9,682 դրամ, հետևաբար ձեռք բերման գինը կկազմի 990,318 դրամ:

Մատյանում կատարվում է հետևյալ ձևակերպումը.

01.11.2000թ.		
Արժեթղթեր	1,000,000	
Դրամական միջոցներ		990,318
Չամորտիզացված գեղջատոկոս		9,682

1,000,000 դրամ արժեթղթերի ձեռք բերման գրանցում

Հաշվեկշռում կգրանցվի այսպես.

01.11.2000թ.

Ակտիվներ

Արժեթղթերի անվանական արժեք	1,000,000
Չամորտիզացված գեղջատոկոս	(9,682)

9,682 գեղջատոկոսի ամորտիզացիան հաշվարկվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով և ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 3. Չեղջատոկոսի ամորտիզացիա

Ամսաթիվ	Արժեկտրոնային ընդհ. եկամտաբեր	Տոկոսային եկամուտ	Չեղջատոկոս	Չեռք բերման արժեք	Չամորտիզացված գեղջատոկոս
1	2	3	4	5	6
01.11.00				990,318	9,682
30.11.00	4,167	4,952	785	991,102	8,897
31.12.00	4,167	4,956	789	991,891	9,109
31.01.01	4,167	4,959	793	992,684	7,316
28.02.01	4,167	4,963	797	993,481	6,519
31.03.01	4,167	4,967	801	994,282	5,718
30.04.01	4,167	4,971	805	995,086	4,914
31.05.01	4,167	4,975	809	995,895	4,105
30.06.01	4,167	4,979	813	996,708	3,292
31.07.01	4,167	4,984	817	997,525	2,475

31.08.01	4,167	4,988	821	998,346	1,654
30.09.01	4,167	4,992	825	999,171	829
31.10.01	4,167	4,996	829	1,000,000	0
Ընդամենը			9,682		

a = (1,000,000 x 0.05)/12
b = (նախորդ սյունակ 5 x 0.06) / 12 ամիս
c = 3-րդ սյունակից հանած 2-րդ սյունակ
d = 5-րդի նախորդ սյունակ + սյունակ 4
e = նախորդ 6 – սյունակ 4
 Առաջին ամսվա վերջին ամորտիզացիան և տոկոսները գրանցվում են այսպես.

30.11. 2000թ. 1-ին գրանցում
 Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 4,167
 Տոկոսային եկամուտ 4,167
1,000,000 անվանական արժեքով արժեթղթերի տոկոսի գրանցում

30.11. 2000թ.
 Չամորտիզացված զեղչատոկոս 785
 Տոկոսային եկամուտ 785

Ձեղչատոկոսի ամորտիզացիայի գրանցում
 Հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը.

Ակտիվներ
 Արժեթղթերի անվանական արժեք 1,000,000
 Ձեղչատոկոս (8,897)
 Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 4,167
Կապիտալ
 Տոկոսային եկամուտ 4,952

8.6. Տոկոսների վճարման միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված ներդրումային արժեթղթերի հաշվառումը

Երբ պարտատոմսերը ձեռք են բերվում տոկոսների վճարման միջև ընկած ժամանակահատվածում, ապա զննման զինն ավելացվում է այն տոկոսների չափով, որոնք հաշվարկվել են տոկոսագումարների վերջին վճարումից հետո:

Դիտարկենք հետևյալ օրինակը.

01.07.1997թ. դրությամբ բանկի կողմից մատյանում կտրվեն հետևյալ գրանցումները.

Բանկը 1997թ. հուլիսի 1-ին 97,600 դրամով ձեռք է բերում 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 100,000 դրամ անվանական արժեքով պարտատոմս: Տոկոսների վճարման ժամկետներն են 1997թ. հունվարի 31-ը և հուլիսի 31-ը: Մարման ժամկետը՝ 1998թ. հունվարի 31:

Պարտատոմսի անվանական արժեք 100,000
 Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 2,500
 Դրամական միջոցներ 100,100
 Ձեղչատոկոս 2,400

Արժեթղթի ձեռք բերման գրանցում

2,500 դրամը 1997թ. հունվարի 31-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված տոկոսագումարն (100,000 x 0.06 x 5/12) է:

Հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը.

Ակտիվներ
 Պարտատոմսի անվանական արժեք 100,000
 Ձեղչատոկոս (2,400)
 Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 2,500

31.07.1997թ. դրությամբ, երբ բանկը կստանա ներդրման դիմաց 6 ամսվա տոկոսները, մատյանում կտրվի հետևյալ գրանցումը.

Դրամական միջոցներ 3,000
 Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ 3,000

Փաստացի ստացված տոկոսների գրանցում

Այսպիսով, բանկը ստացավ 3,000 դրամի փաստացի տոկոսներ, սակայն տոկոսային եկամուտը կկազմի 3,000 - 2,500 = 500 դրամ:

Հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը.

Ակտիվներ
 Պարտատոմսի անվանական արժեք 100,000

Չեղչատուկոս	(2,057)
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	0
<i>Կապիտալ</i>	
Տոկոսային եկամուտ	500

8.7. Առանց տոկոսների պարբերական վճարումների, զեղչատուկոսով ձեռք բերված արժեթղթերի հաշվառումը
 Դիտարկենք հետևյալ օրինակը.

2000թ. փետրվարի 1-ին բանկը ձեռք է բերել 500,000 դրամ անվանական արժեթղթով արժեթուղթ, մարման ժամկետը 2000թ. մայիսի 6-ը: Արժեթուղթը ձեռք է բերվել 492,352 դրամով, 6% ընթացիկ եկամտաբերությամբ:

Մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

01.02.2000թ.		
Արժեթղթերի ձեռքբերման գին	492,352	
Դրամական միջոցներ		492,352

Բանկը վճարում է 492,352 դրամ, իսկ մարման ժամանակ կստանա 500,000 դրամ:

Բանկը գրանցում է նաև 7,648 դրամ տոկոսային եկամուտը և կիրառում է ֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը:

Առաջին ամսվա վերջում եկամտի գրանցումը կատարվում է այսպես.

28.02.2000թ.		
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	2,185	
Տոկոսային եկամուտ		2,185

Տոկոսագումարի հաշվեգրում (492,352 x 0.06/365 x 27)

Աղյուսակի միջոցով ներկայացվում է եկամտի գրանցման ընթացքը.

Աղյուսակ 4. Եկամտի գրանցման ընթացք

Ամսաթիվ	Տոկոսային եկամուտ	Չամորտիզացված զեղչատուկոս	Չուտ արժեք
1	A	B	C
2	3	4	
01.02.00		7,648	492,352
28.02.00	2,185	5,463	494,537
31.03.00	2,520	2,943	497,057
30.04.00	2,451	492	499,508
06.05.00	492	0	500,000
Ընդամենը	7,648		

- A = նախորդ սյունակ (4) x 0.06 / 365 x ամսվա օրերով (այստեղ 27,31,30 և 6)
- B = նախորդ սյունակ (3) - սյունակ (2)
- C = նախորդ սյունակ (4) + սյունակ (2)

8.8. Մինչև մարման ժամկետը վաճառվող ներդրումային արժեթղթերի վաճառքի հաշվառումը

Երբեմն արժեթղթերը վաճառվում են մինչև մարման ժամկետը: Այն հիմնականում իրականացվում է արժեթղթերի երկրորդային շուկայում, արժեթղթերի դիլերների միջոցով: Քանի որ տոկոսադրույքները սովորաբար տատանվում են, հետևաբար եկամուտը կամ վնասը առաջանում է արժեթղթերի վաճառքից: Դիտարկենք վաճառքի մի շարք դեպքեր:

8.8.1. Պարբերական տոկոսային վճարումներով, անվանական արժեթղթով գնված արժեթղթերի վաճառք

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Հաշվեկշիռը մինչև վաճառքը, 1993թ. հուլիսի 1-ին ունի հետևյալ տեսքը.

Ակտիվներ

Գնվել է 100,000 դրամանոց գանձապետական մուրհակ, 12% արժեկտրոնային եկամտաբերությամբ, որը պետք է վճարվի յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ին և հուլիսի 31-ին: Արժեթղթերի մարման ժամկետը՝ 1994թ. հունվարի 31-ն է: Մուրհակը վաճառվում է 1993թ. հուլիսի 1-ին՝ 101,000 դրամով:

Գանձապետական մուրհակներ	100,000	
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	5,000	
Մուրհակը գնվել էր անվանական արժեքով, վաճառվում է 101,000 դրամով, արդյունքում գրանցվում է եկամուտ 1,000 դրամ վաճառքի գնից:		
Վաճառքը մատյանում գրանցվում է հետևյալ կերպ.		
01.07.1993թ.		
Կանխիկ	106,000	
Գանձապետական մուրհակ		100,000
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		5,000
Մուրհակից եկամուտ		1,000
<i>Մուրհակի վաճառքի գրանցում</i>		

8.8.2. Պարբերական տոկոսային վճարումներով, հավելավճարով կամ զեղչատոկոսով զնված արժեթղթերի վաճառք

Երբ արժեթղթերը ձեռք են բերվել զեղչատոկոսով կամ հավելավճարով և վաճառվում են մինչև մարման օրը, ապա վաճառքի օրը հաշվեկշռում գրանցվում է *չամորտիզացված հավելավճարը կամ չամորտիզացված զեղչատոկոսը*:

Հաշվեկշիռը մինչև վաճառքն ունի հետևյալ տեսքը.
01.05.1994թ.

Ակտիվներ

Գնվել է 100,000 դրամանոց արժեթուղթ, 18% արժեկտրոնի վճարմամբ, յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ին և հուլիսի 31-ին: Արժեթղթերի վճարման ժամկետը 31.07.1994թ: Վաճառվում է 1994թ. մայիսի 1-ին, 99,000 դրամով: Հաշվեգրված տոկոսների մնացորդը 01.05.1994թ. դրությամբ կազմում է 4,500 դրամ (1994թ. փետրվարի 1-ից մինչև ապրիլի 30-ը, $100,000 \times 0.18 \times 3/12$), հավելավճարի չամորտիզացված մասը կազմել է 300 դրամ:

Արժեթղթեր	100,000	
Չամորտիզացված հավելավճար		300
Հաշվեգրված ստացվելիք տոկոս		4,500

Մատյանում վաճառքը կգրանցվի հետևյալ կերպ.
01.05.1994թ.

Կանխիկ	103,500	
Վնաս վաճառքից	1,300	
Արժեթղթի անվանական արժեք		100,000
Չամորտիզացված հավելավճար		300
Հաշվարկված տոկոս		4,500
<i>Վաճառքի ձևակերպում</i>		

Այս գործարքից գրանցվում է 1,300 դրամի վնաս, քանի որ 100,300 դրամանոց արժեթուղթը վաճառվել է 99,000 դրամով:

8.9. Արժեթղթերի վերաբերյալ բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Ֆինանսական հաշվետվություններում ներդրումների վերաբերյալ հիմնականում անհրաժեշտ է բացահայտել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ներդրումների հաշվառման համար բանկի կողմից ընդունված հաշվապահական մեթոդները.
 - սկզբնական արժեք
 - ճշգրտումներ շուկայական արժեքի հիման վրա
 - վերագնահատման արդյունքի արտացոլում
 - եկամտաբերության, ամորտիզացիայի հաշվարկ
2. Եկամուտներում էական հոդվածների արտացոլում
 - շահաբաժիններ (դիվիդենտներ)
 - տոկոսներ
 - առք ու վաճառքից շահույթ կամ վնաս
 - գնահատված արժեքի փոփոխություններ

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ եկամուտներ են ապահովում ներդրումները:
2. Ի՞նչ տարբերություններ կան արժեկտրոնային և շուկայական տոկոսադրույքների միջև:
3. Ի՞նչ է զեղչատուկոսը և ինչպես է այն հաշվառվում:
4. Ի՞նչ է հավելավճարը և ինչպես է այն հաշվառվում:
5. Ինչպե՞ս է կատարվում զեղչատուկոսի և հավելավճարի ամորտիզացիան:
6. Ի՞նչ բացահայտումներ են տրվում ներդրումների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում:
7. Կատարել հետևյալ վարժությունները.
Վարժություն 1.
Պահանջը՝

Բանկը 1993թ. հոկտեմբերի 1-ին գնել է գանձապետական մուրհակ, 8.5% էֆեկտիվ եկամտաբերությամբ, մարման ժամկետը 01.04.1994թ.: Գնման գինը՝ 191,707 դրամ, անվանական արժեքը 200,000 դրամ:

- Կատարել մատյանի գրանցում ձեռք բերման ժամանակ:
- Կատարել մարման գրանցում մատյանում 1994թ. ապրիլի 1-ին:
- Ամորտիզացիայի հաշվարկը կատարել ներքոհիշյալ աղյուսակի հիման վրա:

Ամսաթիվ	Տոկոսային եկամուտ A	Չամորտիզացված զեղչատուկոս B	Չուտ արժեք C
1	2	3	4
01.10.93			
31.10.93	1,358	8,293	191,707
30.11.93		6,935	193,065
31.12.93			
31.01.94			
28.02.94			
31.03.94			
Ընդամենը			

Վարժություն 2.

1995թ. մարտի 15-ին բանկը 97,000 դրամով ձեռք է բերում 100,000 դրամ անվանական արժեքով պարտատոմս, տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 20%, տոկոսները վճարվում են տարին 2 անգամ, հունիսի 30-ին և դեկտեմբերի 31-ին:

Պահանջը՝

- Կատարել գրանցում մատյանում ձեռք բերման դրությամբ:
- Կատարել ստացված տոկոսների գրանցում 1995թ. հունիսի 30-ին:

Վարժություն 3.

Բանկը 1992թ. մայիսի 1-ին 800,000 դրամով ձեռք է բերում պարտատոմս, 8% արժեկտրոնով, 7.5% եկամտաբերությամբ: Գնման գինը կազմել է 809,642 դրամ: Տոկոսները վճարվում են օգոստոսի 1-ին և փետրվարի 1-ին և մարման օրը՝ 1995թ. փետրվարի 1-ին:

Պահանջը՝

- Կատարել մատյանում գրանցում ձեռքբերման օրը 01.05.92թ. դրությամբ:
- Ամորտիզացիայի հաշվարկը լրացնել աղյուսակում:
- Կատարել գրանցումներ մատյանում և կազմել հաշվեկշիռ 31.05.92թ. դրությամբ:

Ամսաթիվ	Արժեկտրոնային ընդհ. եկամտաբեր	Տոկոսային եկամուտ	Հավելավճար	Ձեռք բերման արժեք	Չամորտիզացված հավելավճար
1	2	3	4	5	6
01.05.92				809,642	9,642
31.05.92	5,333	5,060	273	809,369	9,369
30.06.92					
31.07.92					
31.08.92					

ԳԼՈՒԽ 9. ՌԵՊՈՒ (ՀԵՏԳՆՄԱՆ) ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են ռեպո համաձայնագրերի նկարագրությունը, նրանց հաշվառման առանձնահատկությունները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ ներկայացնել հաշվեկշռում ռեպո համաձայնագրերը, կատարել նրանցով պայմանավորված գործառնությունների գրանցումներ մատյանում, տալ ռեպո համաձայնագրերի նկարագիրը:

9.1. Ներածություն

Ռեպո (հետգնման) համաձայնագրերն (Repurchase Agreements) իրենցից ներկայացնում են ակտիվների վաճառք որոշակի ժամկետից հետո վաճառքի գնով հետգնելու և տոկոսագումարներ վճարելու պարտավորությամբ: Այս գործիքների կիրառումը բանկին հնարավորություն է տալիս միջոցներ տեղաբաշխել և վերականգնել այդ միջոցները շատ կարճ ժամանակահատվածում:

Արժեթղթերի գնորդ կողմը իրավունք է ստանում պայմանագրի գործողության ընթացքում մինչև հետգնման (հետվաճառքի) ամսաթիվը, ռեպո արժեթղթերով գործառնություններ կատարել, իսկ պայմանագրի մարման պահին պարտավոր է նմանատիպ արժեթղթեր հետ վաճառել մյուս կողմին:

Հետ գնելու պայմանը ռեպո համաձայնագիրն ավելի նման է դարձնում գրավով ապահովված վարկային գործառնություններին, քան արժեթղթերի առք ու վաճառքին: Եթե փոխառուն վարկի դիմաց որպես ապահովություն բանկին տալիս է որևէ համարժեք գրավ, ապա այս գործարքների դեպքում որպես գրավ հանդես են գալիս հետգնման իրավունքով վաճառված ակտիվները, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը համաձայնագրով սահմանված ժամկետում փոխանցվում է մյուս (գնորդ) կողմին: Եվ սովորաբար, հետգնման համաձայնագրերով գործառնություններն իրականացվում են հիմնականում պետական զանձապետական արժեթղթերի միջոցով, որոնք համարվում են առաջնակարգ գրավներ:

Հարկ է նշել, որ ռեպո համաձայնագրերով գործառնությունների ժամանակ որպես ապահովություն հանդիսացող արժեթղթերի ընթացիկ արժեքը հիմնականում ավելի մեծ է լինում, քան դրանց դիմաց ներգրաված (տեղաբաշխած) միջոցների արժեքը: Այդ 2 մեծությունների տարբերությունը կոչվում է մարժա: Օրինակ, եթե բանկը գրավադնում է 5,100,000 դրամ արժողությամբ զանձապետական արժեթղթեր՝ 5,000,000 դրամի չափով փոխառություն վերցնելու համար, ապա մարժան կազմում է 100,000 դրամ:

9.2. Ռեպո (հետգնման) համաձայնագրով վաճառված արժեթղթեր

Ի տարբերություն արժեթղթերի օտարման գործարքների, ռեպո համաձայնագրով գործառնության ժամանակ, երբ արժեթուղթը օտարվում (վաճառվում) է, այն ֆիզիկապես չի հանվում վաճառող բանկի հաշվեկշռից, չնայած այդ արժեթղթի սեփականության իրավունքն ըստ դեպո¹ հաշվի փոխանցվում է գնորդին: Այս դեպքում վաճառող բանկը հանդես է գալիս որպես փոխառու և համաձայնագրով վաճառված արժեթղթերի հաշվառումը հաշվեկշռային արժեքով փոխադրվում է ռեպո գործարքների համար հաշվեկշռում նախատեսված այլ ակտիվային հաշիվ՝ «ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր», իսկ ներգրաված միջոցների մասով պարտավորություններում բացվում է «ռեպո համաձայնագիր» հաշիվը և կատարվում է գրանցում ստացված դրամական միջոցների չափով:

9.3. Ռեպո (հետգնման) համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր

Մյուս բանկը, որը հանդես է գալիս որպես փոխառու և տալիս է դրամական միջոցներ համաձայնագիրը գնելու դիմաց, ձեռք է բերում պահանջ ակտիվի տեսքով՝ կատարելով գրանցում «ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր» ակտիվային հաշվում, և միաժամանակ ստանձնում է ձեռք բերված արժեթղթերի սահմանված ժամկետում վերադարձի պարտավորություն՝ կատարելով գրանցում «պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով» պարտավորության հաշվում:

¹ Սույն գլխի վերջում որպես հավելված ներկայացվում է ներկայումս ՀՀ բանկերում կիրառվող (հաստատված 18.04.2001թ.) ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման» կարգի հիմնական դրույթները:

² Ռեպո հաշիվը ավանդատան կողմից վարվող արժեթղթերի հաշվառման հատուկ հաշիվ է: Ավանդատունը ՀՀ ԿԲ կառուցվածքային ստորաբաժանում է, որը վարում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի «դեպո» հաշիվները:

Հավելված

ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման» կարգի հիմնական դրույթները¹

1. Բանկը ռեպո համաձայնագիր կնքելու ժամանակ իր դեպո հաշվին արժեթղթերը ստանալուց հետո այդ արժեթղթերի գնման գնով կատարում է հետևյալ ձևակերպումները.

ԴՏ Ռեպո համաձայնագրեր

ԿՏ Դրամական միջոցներ

և

ԴՏ Ռեպո համաձայնագրով ձեռք բերված պարտատոմսեր

ԿՏ Պարտավորություններ ռեպո-համաձայնագրերի գծով

1.1. Յուրաքանչյուր բանկային օր, մինչև ռեպո համաձայնագրի մարման ժամկետը լրանալը, բանկը ռեպո տոկոսադրույքի հիման վրա կատարում է տոկոսների հաշվեգրում, տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

ԴՏ Ռեպո համաձայնագրերի գծով հաշվեգրված տոկոսներ

ԿՏ Տոկոսային եկամուտ ռեպո համաձայնագրերի գծով

1.2. Մինչև ռեպո համաձայնագրի մարման ժամկետը լրանալը, բանկը կարող է այդ պարտատոմսերը վերավաճառել շուկայում: Այս դեպքում բանկը նախ ճշգրտում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գինը, հիմք ընդունելով նրանց ընթացիկ (շուկայական) գինը, և ապա վաճառում, տալով հետևյալ ձևակերպումները.

ա) ճշգրտում, երբ ընթացիկ գինը բարձր է հաշվեկշռային գնից.

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ

և

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ

ԿՏ Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

բ) ճշգրտում, երբ ընթացիկ գինը ցածր է հաշվեկշռային գնից.

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ ԿՏ Ռեպո համաձայնագրով ձեռք բերված պարտատոմսեր

և

ԴՏ Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ

գ) Վաճառքի ձևակերպման ժամանակ տրվում է հետևյալ ձևակերպումը.

ԴՏ Դրամական միջոցներ

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից շահույթ

(եթե վաճառքի գինը բարձր է ընթացիկ (շուկայական) գնից)

կամ

ԴՏ Վնասներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից (եթե վաճառքի գինը ցածր է ընթացիկ (շուկայական) գնից)

1.3. Մինչև ռեպո համաձայնագրի մարման ժամկետը բանկը ձեռք է բերում գործարքի հայտում նշված թողարկմանը համապատասխանող պարտատոմսեր՝ դրանք վաճառողին վերադարձնելու համար:

Այս դեպքում նույնպես ճշգրտվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գումարը՝ հիմք ընդունելով պարտատոմսերի նոր ընթացիկ շուկայական գինը և ձեռքբերման գնի ու ընթացիկ գնի տարբերությունը հաշվեկշռում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

ա) ճշգրտում, երբ ընթացիկ գինը բարձր է հաշվեկշռային գնից.

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ ԿՏ Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

¹ Ներկայումս գործող հաշվային պլանում (հաստատված ՀՀ ԿԲ 2002թ. օգոստոսի 6-ի թիվ 258-Ն որոշմամբ) հստակեցվել են ռեպո համաձայնագրերով գործառնությունների սահմանումները և հաշվառման մոտեցումները, սակայն սույն գլխում ներկայացված կարգը և նրանում կիրառված հաշիվների անվանումները ՀՀ կենտրոնական բանկի կողմից դեռևս չեն համապատասխանեցվել գործող հաշվային պլանին: Ենթադրվում է, որ հետագայում այս գործարքների սահմանումները կարգում կհստակեցվեն և համապատասխան ճշգրտումներ կարվեն:

բ) ճշգրտում, երբ ընթացիկ գինը ցածր է հաշվեկշռային գնից.

ԴՏ Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ

գ) ճշգրտելուց հետո տրվում են գնված պարտատոմսերի ձևակերպումները.

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԴՏ Վնասներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից (եթե վաճառքի գինը ցածր է ընթացիկ (շուկայական) գնից)

ԿՏ Դրամական միջոցներ

կամ

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից շահույթ

(եթե վաճառքի գինը բարձր է ընթացիկ (շուկայական) գնից)

ԿՏ Դրամական միջոցներ

1.4. Ռեպո համաձայնագրի մարման համար տրվում են հետևյալ ձևակերպումները.

ԴՏ Դրամական միջոցներ

ԿՏ Ռեպո համաձայնագրեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերի գծով հաշվեգրված տոկոսներ

և

ԴՏ Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

1.4.1. Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշվի մնացորդը դուրս է գրվում բանկի ծախսերի կամ եկամուտների հաշվին.

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ ԿՏ

Վերավաճառքի պարտատոմսերի վերագնահատումից ստացված շահույթ

կամ

ԴՏ Վնասներ վերավաճառքի համար նախատեսված պարտատոմսերի վերագնահատումից

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի գնի ճշտման հաշիվ

2. Բանկը հակադարձ¹ ռեպո համաձայնագիր կնքելիս կատարում է հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ԴՏ Դրամական միջոցներ

ԴՏ Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսեր

ԴՏ Պարտատոմսի գեղչատոկոս

կամ

ԿՏ Պարտատոմսի հավելավճար

ԿՏ Պարտատոմսի անվանական արժեք

ԿՏ Պարտատոմսի գծով հաշվեգրված տոկոսներ

ԿՏ Հակադարձ ռեպո համաձայնագրեր

2.1. Եթե ռեպո համաձայնագրով ձեռք բերված պարտատոմսերն են վաճառվում հակադարձ ռեպո համաձայնագրի հիման վրա, ապա նախ տրվում են 1.2. կետի ա) և բ) ենթակետերով տրված ճշգրտման գրանցումները, այնուհետև կատարվում են հետևյալ գրանցումները.

ԴՏ Դրամական միջոցներ

ԴՏ Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերի գծով հաշվեգրված տոկոսներ

և

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից շահույթ

(եթե վաճառքի գինը գերազանցում է ընթացիկ (շուկայական) արժեքին)

կամ

ԴՏ Վնասներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից

(եթե վաճառքի գինը ցածր է ընթացիկ (շուկայական) արժեքից)

ԿՏ Հակադարձ ռեպո համաձայնագրեր

2.2. Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսերի գծով տոկոսների հետագա հաշվեգրումը, նաև գեղչատոկոսի կամ հավելավճարի ամորտիզացիան շարունակվում է կատարվել «Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսեր» հաշիվների վրա՝ հետևյալ ձևակերպմամբ.

ԴՏ Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսեր

ԿՏ Տոկոսային եկամուտ պարտատոմսերի գծով

2.3. Հակադարձ ռեպո համաձայնագրի դիմաց վճարվելիք տոկոսների հաշվեգրումը կատարվում է ամեն օր և տրվում է հետևյալ ձևակերպումը.

ԴՏ Տոկոսային ծախսեր հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով

ԿՏ Վճարվելիք տոկոսներ հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով

2.4. Հակադարձ ռեպո համաձայնագրի մարման օրը, վաճառված պարտատոմսերը հետգնելիս, կատարվում են հետևյալ ձևակերպումները.

¹ Ըստ ներկայումս գործող հաշվային պլանի «հակադարձ» բառը հանվել է ռեպո համաձայնագրերի անվանումից:

ա) ԴՏ Հակադարձ ռեպո համաձայնագրեր

ԴՏ Վճարվելիք տոկոսներ հակադարձ ռեպո համաձայնագրի գծով

ԴՏ Պարտատոմսի անվանական արժեք

ԴՏ Պարտատոմսի գծով հաշվեգրված տոկոսներ

ԴՏ Պարտատոմսի հավելավճար

կամ

ԿՏ Պարտատոմսի գեղչատոկոս

ԿՏ Հակադարձ ռեպո համաձայնագրերով վաճառված պարտատոմսեր

ԿՏ Դրամական միջոցներ

բ) ռեպո համաձայնագրով ձեռք բերված պարտատոմսերի համար նախ տրվում են 1.2. կետի ա) և բ) ենթակետերով տրված ճշգրտման գրանցումները, այնուհետև կատարվում են հետևյալ ձևակերպումները.

ԴՏ Հակադարձ ռեպո համաձայնագրեր

ԴՏ Վճարվելիք տոկոսներ հակադարձ ռեպո համաձայնագրի գծով

ԴՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսեր

ԴՏ Ռեպո համաձայնագրերի գծով հաշվեգրված տոկոսներ

ԿՏ Հակադարձ ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսեր

ԿՏ Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից շահույթ

(եթե վաճառքի գինը գերազանցում է ընթացիկ (շուկայական) արժեքին)

կամ

ԴՏ Վնասներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված պարտատոմսերի վերավաճառքից

(եթե վաճառքի գինը ցածր է ընթացիկ (շուկայական) արժեքից)

ԿՏ Դրամական միջոցներ

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է ռեպո համաձայնագիրը:
2. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան վարկային գործարքների ու ռեպո գործառնությունների միջև:
3. Ինչպե՞ս են գրանցվում ռեպո համաձայնագրերով ձեռք վերված (վաճառված) արժեթղթերը բանկի հաշվեկշռում:

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԵՐԻ, ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Թեմայի նպատակը` ներկայացվում են վարկերի բնութագիրը, տեսակները, վարկերի և նրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստների հաշվառման առանձնահատկությունները, ծանոթագրություններում պարտադիր բացահայտվող տեղեկատվությունը վարկերի վերաբերյալ:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա սահմանել վարկերը, կատարել վարկերի հետ կապված գրանցումներ մատյանում, հաշվառել վարկերի հնարավոր կորուստները, հաշվառել վերանայված պայմաններով վարկերը, հաշվառել սեփականացված գրավները, հաշվառել ֆակտորինգի գործառնությունները, տալ վարկերի հետ կապված բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում, օգտագործել վարկերի վերաբերյալ տերմինոլոգիան:

10.1. Ներածություն

Վարկը դրամի փոխառություն է՝ ապագայում հետ վերադարձնելու բացարձակ խոստումով (փոխառում պարտավորվում է այն հետ վերադարձնել): Բանկը կարող է վարկեր տրամադրել փոխառուի հետ ուղղակի բանակցությունների միջոցով կամ դա կարող է լինել մեկ այլ փոխատուի կողմից տրամադրված վարկերի գնում:

Վարկերը բանկի հաշվեկշռի անենածավալուն տարրը և եկամուտների անենամեծ աղբյուրն են հանդիսանում, որոնք ստացվում են փողի օգտագործման համար վճարված տոկոսներից և վարկային համաձայնագրերի համար վճարումներից (երաշխավորություններ, երաշխավորագրեր և այլն): Վարկերը, ապահովվելով բանկերի եկամտի մեծ մասը, նաև առաջ են բերում կորուստների մեծ ռիսկ:

10.2. Վարկերի բնութագիրը

Վարկերը բնութագրվում են նպատակայնությամբ, ապահովվածությամբ, մեծությամբ, ժամկետայնությամբ և վերադարձելիությամբ:

10.2.1. Վարկերի նպատակը

- Վարկերը տրամադրվում են տարբեր նպատակներով. Այսպես,
- վարկերի տրամադրում անշարժ գույքի ֆիրմաներին՝ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով
 - վարկերի տրամադրում տնտեսություններին՝ տուն ձեռք բերելու նպատակով
 - վարկերի տրամադրում առևտրային կազմակերպություններին՝ առևտրի (նաև արտադրության) նպատակով
 - վարկերի տրամադրում ֆիզիկական անձանց՝ ավտոմեքենայի ձեռք բերման և այլ սպառողական նպատակներով:

10.2.2. Վարկերի ապահովվածությունը (Collateral for loan)

Բանկերը ռիսկի նվազեցման կամ չեզոքացման նպատակով վարկերի դիմաց պահանջում են համարժեք գրավներ: Որպես գրավ կարող են հանդես գալ անշարժ գույքը, սարքավորումները, փոխանցելի արժեթղթերը, խնայողական հաշիվները, պետական գանձապետական արժեթղթերը, երաշխավորությունները: Վարկերը կարող են նաև ապահովված չլինել այս կամ այն գրավով, դրանք կոչվում են բլանկային վարկեր:

10.2.3. Վարկերի մեծությունը (Size of loan)

Վարկի մեծությունը (չափը), որն անվանում են *հիմնական (մայր) գումար (principal)*, կարող է հասնել մի քանի հարյուր դոլարից մինչև մի քանի միլիոն դոլարի: Սակայն, կարգավորող մարմինները սահմանափակում են տրամադրվող վարկի մեծությունը, սահմանելով համապատասխան նորմատիվներ: Օրինակ, մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվը 33 բանկերի համար սահմանված է ընդհանուր կապիտալի 20%-ը, իսկ բանկի հետ կապված անձանց (ինսայդերներին) տրամադրվող փոխառությունների համար սահմանված է առավելագույն չափ՝ կապիտալի 5%-ը:

10.2.4. Վարկերի ժամկետայնությունը (Duration of loan)

Ըստ ժամկետայնության վարկերը լինում են ցպահանջ և ժամկետային կամ մասնակի մարման ժամկետներով (term loans) վարկեր: Ցպահանջ վարկը չունի մայր գումարի և տոկոսի մարման ֆիքսված ժամկետ. այս վարկերը հիմնականում տրամադրվում են լիակատար վստահության հիման վրա:

Ի տարբերություն ցպահանջ վարկերի, ժամկետային վարկերն ունեն մարման սահմանված կոնկրետ ժամկետ: Այս վարկերի համար սովորաբար սահմանված է մեկ վճարման ժամկետ, մայր գումարը և տոկոսագումարը պետք է վճարվեն միանվազ և պայմանագրի վերջում: Հետևաբար, այսպիսի վարկերի տևողությունը սովորաբար մեկ տարուց պակաս է:

Մասնակի մարման ժամկետներով վարկերն ունեն պարտքի պարբերական վճարման ժամկետներ, ընդ որում յուրաքանչյուր ժամկետի դրությամբ նախատեսվում է մայր գումարի և տոկոսավճարի մասնակի մարում:

10.2.5. Վարկերի վճարումները

Վարկերի վճարումների իրականացման նկատմամբ կարող են սահմանվել տարբեր մոտեցումներ (մեթոդներ): Այսպես,

- պարբերական վճարումներ հավասար ժամանակահատվածներով վարկի ողջ տևողության ընթացքում. յուրաքանչյուր վճարում կազմված է մայր գումարից և տոկոսավճարից
- պարբերական վճարումներ հավասար ժամանակահատվածներով, երբ մայր գումարի հիմնական խոշոր մասը վճարվում է վերջում (balloon payment)
- ամբողջական միանգամյա վճարում մարման ժամկետի դրությամբ:

10.3. Վարկի տոկոսային եկամտի հաշվարկ և գրանցումներ մատյանում

Ինչպես արդեն նկարագրվել է «Ներդրումների հաշվառումը» թեմայում, տոկոսավճարը տրամադրվում է փողի օգտագործման դիմաց և հաշվեգրման սկզբունքի համաձայն պետք է գրանցվի մատյանում վարկի ողջ տևողության ընթացքում:

Ներկայումս լայնորեն կիրառվում է տոկոսավճարի հաշվարկման պարզ տոկոսադրույքի մեթոդը: Պարզ տոկոսադրույքը հաշվարկվում է պարտքի միայն չվճարված (outstanding principal) մասի նկատմամբ հետևյալ բանաձևի միջոցով.

$$i = (p)(r)(t) ,$$

որտեղ

i - տոկոսագումարը

p - մայր գումար

r - տոկոսադրույք

t - ժամանակահատվածը

10.4. Ժամկետային վարկի գրանցում մատյանում

Դիտարկենք հետևյալ օրինակը.

1993թ. նոյեմբերի 1-ին, բանկը տրամադրում է վարկ՝ \$10,000, 45 օր մարման ժամկետով, տարեկան պարզ տոկոսադրույքով՝ 14%: Վարկի մարման ժամկետը՝ 19.12.1993թ., մայր գումարի և տոկոսավճարի մարումը ժամկետի վերջում՝ միանվագ կերպով:

Մատյանում վարկի տրամադրումը գրանցվում է հետևյալ կերպ.

01.11.1993թ.

Վարկային հաշիվ	10,000	
Կանխիկ		10,000
\$10,000 վարկի տրամադրման գրանցում		

Վարկի տոկոսավճարը 45 օրվա համար ըստ վերոհիշյալ բանաձևի կկազմի \$175 գումար.

($i = \$ 10,000 \times 0.14 \times 45/360 = \175): Բանկը նոյեմբեր ամսվա ամսական ֆինանսական հաշվետվությունը կազմելուց առաջ պետք է կատարի մեկ ամսվա տոկոսագումարի հաշվեգրում.

Մատյանում կտրվի հետևյալ ձևակերպումը.

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	117	
Տոկոսային եկամուտ		117
\$10,000 x 0.14 x 30/360 = \$117		

Մարման ժամկետին, 19.12.1993թ. դրությամբ վարկառուն վճարում է \$10,175, և մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

Կանխիկ	10,175	
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		117
Տոկոսային եկամուտ		58

Վարկի մայր գումար 10,000
Մայր գումարի և տոկոսավճարի մարման գրանցում

\$58-ի տոկոսավճարը անմիջապես գրանցվում է որպես եկամուտ, քանի որ այն չի հաշվեգրվել:

10.5. Մասնակի մարումներով սպառողական վարկերի գրանցում (Consumer installment loans)

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Վարկի ամսական մարվող վճարի (ներառյալ վարկ և տոկոս) մեծությունը հաշվարկվում է

Բանկը 1992թ. հունվարի 2-ին տրամադրում է սպառողական վարկ \$10,000, մեկ տարի մարման ժամկետով, տարեկան պարզ տոկոսադրույքով՝ 12%: Վարկի մարումը յուրաքանչյուր ամիս, հավասար չափերով: Ամսական տոկոսադրույքը կկազմի $12\%/12 = 1\%$:

հետևյալ բանաձևով.

$$\text{Ամսական վճարում} = \$10,000 / \sum_{t=1}^{12} (1 / (1 + 0.01)^t) = 888.49$$

Քանի որ այս վարկն ունի պարբերական վճարումներ, հետևաբար պետք է կազմվի ամորտիզացման գրաֆիկ, որը ներկայացվում է ստորև. ամորտիզացման գրաֆիկն օգնում է մատյանի գրանցումներ կատարել վարկի յուրաքանչյուր վճարման համար:

Աղյուսակ 5. Մաշտողական վարկի ամորտիզացման կառուցվածքը

Ամիսներ	Ամսական վճարի մեծությունը	Տոկոսագումարի մեծությունը	Մայր գումարի վճարի չափը	Մայր գումարի չմարված մնացորդը հաշվեկշռում
1	2	3 (a)	4 (b)	5(c)
				10,000
Հունվար	888.49	100.00	788.49	9,211.51
Փետրվար	888.49	92.12	799.37	8,415.14
Մարտ	888.49	84.15	804.34	7,610.80
Ապրիլ	888.49	79.11	812.38	6,798.42
Մայիս	888.49	67.98	820.51	5,977.91
Հունիս	888.49	59.78	828.71	5,149.20
Հուլիս	888.49	51.49	837.00	4,312.20
Օգոստոս	888.49	43.12	845.37	3,469.83
Սեպտեմբեր	888.49	34.67	853.82	2,613.01
Հոկտեմբեր	888.49	29.13	862.36	1,750.65
Նոյեմբեր	888.49	17.51	870.98	879.67
Դեկտեմբեր	888.49	8.79	879.67	0.00
Ընդամենը	10,661.84	661.84	10,000	

(a) = (5)-րդ սյունակի նախորդ տողը x 0.01 x 1

(b) = սյունակ (2) – սյունակ (3)

(c) = (5)-ի նախորդ սյունակից հանած սյունակ (4)

Տոկոսագումարի հաշվարկը կրկին կատարվում է $i = (p)(r)(t)$ պարզ տոկոսադրույքի բանաձևով: Յուրաքանչյուր ամսական տոկոսավճարի չափը հաշվարկվում է տվյալ ամսվա մայր գումարի հաշվեկշռային մնացորդի նկատմամբ՝ 1% տոկոսադրույքով:

Օրինակ, 1-ին ամսվա համար տոկոսավճարի հաշվարկը կլինի՝ $\$10,000 \times 0.01 \times 1 = \100

2-րդ ամսվա համար՝ $\$9,211.51 \times 0.01 \times 1 = \92.12 ; և այսպես շարունակ:

Այս վարկի համար մատյանում կատարվում են հետևյալ գրանցումները.

02.01.1992թ.

Մասնակի վճարումներով վարկ 10,000
Կանխիկ 10,000

Սպառողական վարկի տրամադրման գրանցում

Երբ 1-ին ամսական վճարումը ստացվի, մատյանում կտրվի հետևյալ գրանցումը.

31.01.1992թ.

Կանխիկ 888.49
Տոկոսային եկամուտ 100.00
Վարկի մասնակի գումար 788.49

\$10,000 վարկի ամսական վճարման գրանցում

10.6. Վարկերի հնարավոր կորուստների հաշվառումը

Հաշվապահական միջազգային ստանդարտների սկզբունքների համաձայն, բանկը պետք է վարկերի կորուստներին համարժեք պահուստ ձևավորի: Վարկերի հնարավոր կորուստների պահուստը (ՎՀԿՊ) վարկերի գնահատված հնարավոր կորստի ծավալն է: Վարկեր հասկացության ներքո նկատի ունենք վարկերը, լիզինգը, երաշխավորությունները և փոխատվության այլ համաձայնությունները:

Գնահատված կորուստը կարող է ծախսերով դուրս գրվել, եթե տեղի ունեն հետևյալ երկու պայմանները.

- Ֆինանսական հաշվետվությունների կազմումից առաջ հայտնի է, որ ապագա որոշ իրադարձություններ կարող են առաջ բերել կորուստներ:
- Կորստի մեծությունը կարող է խելամիտ և ընդունելի գնահատվել:

Բանկը պետք է ապահովի վարկերի կորուստների համապատասխան պահուստ բոլոր տեսակի փոխատվությունների համար՝ պարբերաբար ծախսերից հատկացումներ կատարելու միջոցով: Հատկացումների մեծությունները և պահուստի մեծությունը պետք է համապատասխանեն վարկային պորտֆելին համարժեք կորուստների ծածկմանը:

Պահուստին հատկացումների իրականացումը հիմնականում կատարվում է բանկի ղեկավարության որոշման հիման վրա՝ հաշվի առնելով օբյեկտիվ (քանակական) և սուբյեկտիվ (որակական) գնահատականներ: Ընդ որում, որոշումների ընդունման ժամանակ պետք է հաշվի

առնվեն նաև վարկերի վերադարձման նախկին փորձը, ազգային և միջազգային տնտեսական պայմանների հնարավոր ազդեցությունները և այլն:

Վարկերի կորուստների պահուստը ձևավորվում է ծախսերով՝ պարբերական հատկացումների հաշվին: Հիմնականում բանկերն իրենք պետք է շահագրգռված լինեն ձևավորել վարկային պորտֆելին համարժեք ՎՀԿՊ, սակայն հաշվի առնելով Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները, վերահսկողության կողմից սահմանվել է ՎՀԿՊ-ի ձևավորման կարգ¹, որը սահմանում է պահուստի համարժեք մակարդակ՝ հիմնվելով ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատականների վրա: Պահուստի համարժեք մակարդակն ըստ ներկայումս գործող (հաստատված 04.09.1999թ. և ուժի մեջ մտած 01.01.1999թ.) «ՀՀ տարածքում բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, պետք է ցածր չլինի հետևյալ չափերից.

- ստանդարտ վարկերի 1%-ից
- հսկվող վարկերի 10 %-ից
- ոչ ստանդարտ վարկերի 20%-ից
- կասկածելի վարկերի 50%-ից
- անհուսալի վարկերի 100%-ից:

Բանկերը ստանդարտ վարկերի համար ձևավորում են **ընդհանուր պահուստ**, իսկ չաշխատող վարկերի դասերի համար՝ հատուկ պահուստ:

Բանկի քաղաքականության, գործունեության, վարկերի կորուստների պատմական տվյալների և վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման վերլուծության հիման վրա բանկը կարող է լրացուցիչ հատկացումներ կատարել պահուստին մինչև հետևյալ սահմանաչափերը.

- ստանդարտ վարկերի 2%-ը
- հսկվող վարկերի 15 %-ը
- ոչ ստանդարտ վարկերի 25%-ը
- կասկածելի վարկերի 70%-ը:

Եթե պահուստի փաստացի չափն ավելի փոքր է, քան վերը նշված սահմանաչափերը, ապա պետք է ավելի խորը վերլուծության ենթարկել վարկային պորտֆելը, որպեսզի պարզվի, արդյո՞ք բոլոր գործոններն են քննարկվել: Բանկերը սովորաբար ցանկանում են պահել պահուստը հայտնի և սպասվող կորուստների ծածկման համար բավարար մակարդակում, սակայն դա ստեղծում է մեկ այլ հիմնախնդիր, այն նվազեցնում է բանկի շահույթը և չի ընդգրկվում կապիտալի հաշվարկում (ԱՄՆ-ում ռիսկով կշռված ակտիվների միայն 1.25% տոկոսի չափով է պահուստն ընդգրկվում երկրորդային կապիտալի հաշվարկում):

Վարկային պորտֆելի որակին պահուստի համարժեքությունը պարզելու նպատակով պետք է իրականացնել թեսթ, որը կազմված է երկու մասից. առաջին մասում հաշվարկվում է պահուստի պահանջվող ծավալը՝ հիմնվելով վարկային պորտֆելի փաստացի որակի վրա, երկրորդ մասում համեմատվում է պահուստի ընթացիկ արժեքը պահանջվող չափի հետ:

Աղյուսակ 6. Վարկերի պահուստի ձևավորման թեսթ

31 Դեկտ., 20xx Մաս 1.	Վարկային ներդրումներ		ճանաչված կորուստ	31 Դեկտ., 20xx Մաս 2.	
Վարկային ներդրումներ ԼՎԱԶԵՑՎԱԾ	400,000			Նախորդ ամսվա ՎՀԿՊ. ԼՎԱԶԵՑՎԱԾ	6,000
Ոչ ստանդարտ	8,400	*20% =	1,680	Անհուսալի	500
Կասկածելի	1,100	*50% =	550	ՎՀԿՊ մնացորդ	(բ) 5,500
Անհուսալի	500			Պահանջվող ՎՀԿՊ	(ա) 6,130
Ստանդարտ վարկեր	390,000	*1% =	3,900	Պակասորդ (բ-ա)	-630
		Պահանջվող ՎՀԿՊ	(ա) 6,130		

Թեսթից հետո ճշգրտող հաշվի միջոցով «վարկերի հնարավոր կորստի պահուստը» (ընդհանուր կամ հատուկ) պետք է մեծանա \$630-ով: Մատյանի գրանցումը կլինի հետևյալը.

31 դեկտեմբերի, 20xx

Հատկացումներ վարկերի կորուստների պահուստին 630
 Վարկերի կորուստների պահուստ 630
Վարկերի կորուստների ծախսերը գրանցելու համար

Վարկերի կորուստների համար հատկացումները «Շահույթի մասին հաշվետվության» ծախսային հաշիվ է, հետևաբար վերջինիս \$630-ով աճը կհանգեցնի 20xx թվականի զուտ եկամտի նույն չափով կրճատման: Այսինքն ծախսերի այդ աճը համապատասխանեցնում է վարկերի կորուստների ծախսերը վարկերից ստացված եկամուտների հետ: «Վարկերի կորուստների

¹ Վերահսկողական նպատակներից ելնելով, սույն Կարգը պարբերաբար փոփոխվում և լրամշակվում է: Վերջին լրամշակումները ուժի մեջ են մտել 2002թ. հունվարի 1-ից:

¹ Միջազգային արակտիկայում այս տոկոսը որոշվում է հիմնվելով նախորդ երկու տարիների ընթացքում բանկի վարկային կորուստների միջին չափի վրա:

պահուստը» հաշվեկշռային վարկեր հաշվի հակաակտիվային հաշիվ է, որի նպատակը հաշվեկշռում վարկերի իրենց զուտ արժեքով ցույց տալն է: Ձուտ արժեքը վարկերի վերադարձման սպասվող ծավալն է:

ՍԿՏԻՎՆԵՐ

Վարկային ներդրումներ	399,500	
Վարկերի կորուստների պահուստ	-6,130	
Ձուտ վարկեր		393,370

Վարկերի կորուստների պահուստի մնացորդի մեծության վրա ազդում են ոչ միայն ծախսերի հաշվին կատարվող հատկացումները, այլ նաև վարկերի դուրսգրումները և նախկինում դուրս գրված վարկերի վերադարձը: Ենթադրենք 20xxթ. փետրվարի 14-ի դրությամբ փոխառուն չի կատարում \$800 վարկային պարտավորությունը: Այժմ, երբ կորուստը ակնհայտ է, այլ ոչ թե հավանական, այն պետք է դասակարգվի «անհուսալի» և դուրս գրվի «վարկային ներդրումներ» հաշվից, որի համար մատչանում կկատարվի հետևյալ գրանցումը.

14 փետրվարի, 20xx

Վարկերի կորուստների հատուկ պահուստ	800	
Վարկային ներդրումներ		800

Վարկերի դուրսգրումը գրանցելու համար

Այժմ ենթադրենք, որ մարտի 2-ին վերադարձվել է նախկինում դուրս գրված վարկը՝ \$270: Բանկը սկզբից վերականգնում է վարկը հաշվեկշռում և մեծացնում վարկերի հնարավոր կորուստների պահուստը.

2 մարտի, 20xx

Վարկային ներդրումներ	270	
Վարկերի կորուստների հատուկ պահուստ		270

Դուրս գրված վարկը վերականգնելու համար

Հետո միայն գրանցվում է դրամական միջոցների ստացումը.

2 մարտի, 20xx

Կանխիկ	270	
Վարկային ներդրումներ		270

\$270 վարկի մարումը գրանցելու համար

Ընդհանրացնելով վարկերի հնարավոր կորուստների պահուստի փոփոխությունները, կարելի է ներկայացնել.

- Մնացորդ՝ ժամանակաշրջանի սկզբում
- + հատկացումներ վարկերի հնարավոր կորուստների պահուստին**
- վարկերի դուրս գրում**
- + նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ**

Մնացորդ՝ ժամանակաշրջանի վերջում:

Բանկի հաշվեկշռում «վարկային ներդրումներ» և «վարկերի հնարավոր կորուստների պահուստի» հաշիվներն ունեն հետևյալ ֆորմատը.

ՍԿՏԻՎՆԵՐ

Վարկային ներդրումներ		
Նվազեցրած.		
Վարկերի հնարավոր կորուստների պահուստ		
Ձուտ վարկեր		
Վերոհիշյալը կարելի է ներկայացնել նաև հետևյալ ներկայացմամբ.		

ՍԿՏԻՎՆԵՐ

Վարկեր, նվազեցված վարկերի հնարավոր կորուստների պահուստը

10.7. Չաշխատող վարկերի հաշվառում

Չաշխատող դասը (երբեմն կոչվում է չկուտակվող) նշանակում է, որ բանկը վարկի կուտակված տոկոսները որպես եկամուտ չի ճանաչում: Սովորաբար, վարկը դասակարգվում է չաշխատող, եթե. (1) վարկի մայր գումարի կամ տոկոսագումարների մարումն ուշացել է պայմանագրով սահմանված սկզբնական մարման ժամկետից, (2) բանկի ղեկավարությունը չի սպասում վարկի մայր գումարի կամ տոկոսագումարների ամբողջ ծավալով վերադարձ: Վարկը կրկին համարվում է կուտակվող, եթե ժամկետանց մայր գումարը և տոկոսագումարներն ամբողջությամբ մարվում են:

Երբ վարկը դասվում է որպես չաշխատող, ընթացիկ (հաշվետու) ժամանակահատվածի համար կուտակված տոկոսները (վաստակված, սակայն չհավաքագրված տոկոսներ) հետ են ձևակերպվում նվազեցնելով եկամուտները և ավելացնելով «չճանաչված տոկոսային եկամուտ» կոնտրաակտիվային հաշիվը: Օրինակ, ենթադրենք բանկը կատարել է հետևյալ ճշգրտող գրանցումն ընթացիկ ժամանակահատվածի համար.

Ամսաթիվ

Կուտակված (հաշվեգրված) ստացվելիք տոկոսներ	100	
Տոկոսային եկամուտ		100

Վարկի տոկոսային եկամուտների գրանցման համար

Երբ վարկը ստանում է չափատող վարկի կարգավիճակ, կատարվում է հետևյալ գրանցումը.

<i>Ամսաթիվ</i>		
Տոկոսային եկամուտ	100	
Չճանաչված տոկոսային եկամուտ		100

Ընթացիկ ժամանակահատվածի համար կուտակված տոկոսների հետ ձևակերպման համար

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում կուտակված տոկոսները դուրս են գրվում «ծախսեր չափատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում կուտակված տոկոսների գծով» ծախսային հաշվով: Օրինակ, եթե չափատող դասակարգված վարկի համար կուտակվել է \$50 տոկոսավճար նախորդ հաշվետու ժամանակաշրջանում, որը չի հավաքագրվել, ապա մատյանում կատարվում է հետևյալ գրանցումը.

<i>Ամսաթիվ</i>		
Ծախսեր չափատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում կուտակված տոկոսների գծով	50	
Չճանաչված տոկոսային եկամուտ		50

Նախկինում գրանցված տոկոսային եկամուտները դուրս գրելու համար

Միջազգային ստանդարտներով ընդունված տարբերակ է նախորդ հաշվետու ժամանակահատվածում կուտակված տոկոսները դուրս գրել «վարկերի հնարավոր կորուստների պահուստի հաշվին»:

<i>Ամսաթիվ</i>		
Վարկերի կորուստների պահուստ	50	
Չճանաչված տոկոսային եկամուտ		50

Նախկինում գրանցված տոկոսային եկամուտները դուրս գրելու համար

Չափատող դասակարգված վարկերի գծով տոկոսների հաշվեգրումը շարունակվում է, սակայն «տոկոսային եկամուտ» հաշվի փոխարեն գրանցվում է «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվում: Այսինքն՝ բանկի մատյանում տրվում է հետևյալ ձևակերպումը.

<i>Ամսաթիվ</i>		
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		
Չճանաչված տոկոսային եկամուտ		

Չափատող վարկի տոկոսների հաշվեգրում

Չափատող դասակարգված վարկերի տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ ստացվում են կանխիկ միջոցները (կանխիկի սկզբունք): Մատյանում տրվում են հետևյալ գրանցումները.

<i>Ամսաթիվ</i>		
Կանխիկ	100	
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		100

Կանխիկով ստացված չափատող տոկոսների գրանցման համար

<i>Ամսաթիվ</i>		
Չճանաչված տոկոսային եկամուտ	100	
Տոկոսային եկամուտ		100

Տոկոսային եկամտի գրանցման համար

Իսկ հաշվեկշիռից դուրս գրված տոկոսների վերադարձի դեպքում մատյանում տրվում են հետևյալ գրանցումները.

<i>Ամսաթիվ</i>		
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	100	
Տոկոսային եկամուտ		100

Տոկոսային եկամտի գրանցման համար

<i>Ամսաթիվ</i>		
Կանխիկ	100	
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ		100

Կանխիկով ստացված անհուսալի տոկոսների գրանցման համար

Բանկը չափատող վարկերի նկատմամբ վարվող իր քաղաքականությունը և չափատող վարկերի ծավալները նշում է ծանոթագրություններում:

10.8. Վերանայված պայմաններով վարկերի հաշվառումը

Վարկերի հնարավոր կորուստները կրճատելու նպատակով բանկը կարող է վերանայել վարկի պայմանները, որը կարելի է իրականացնել.

- պայմանների վերանայմամբ (տոկոսներ, մայր գումար և այլն)
- գույքի ընդունումը որպես վարկի մասնակի կամ լրիվ փոխհատուցում
- վերը նշվածների համադրությամբ:

Վարկը համարվում է վերանայված, երբ բանկը, փոխառուի ֆինանսական դժվարություններով պայմանավորված, տնտեսական կամ օրենսդրական նկատառումներից ելնելով, զիջումների է գնում փոխառուին, որոնք այլ դեպքերում չէին կարող ակնկալվել: Վարկերի

վերանայումը հիմնականում դիտվում է բանկի համար որպես կորուստ, իսկ փոխառուի համար որպես օգուտ: Երբեմն ոչ բանկը և ոչ էլ փոխառուն չեն ունենում ոչ կորուստ, ոչ օգուտ: Իհարկե վերանայման արդյունքում բանկը չի կարող ունենալ օգուտ, իսկ փոխառուն՝ կորուստ:

Որպեսզի որոշվի, բանկը կորուստ է կրել վարկի պայմանները վերանայելուց թե ոչ, վարկի գումարը (մայր գումար + կուտակված տոկոսագումար) համեմատվում է սպասվող ապագա դրամական հոսքի հետ:

Վարկի պայմանների փոփոխություն: Վարկի պայմանների փոփոխությունները կարող են իրականացվել տոկոսադրույքի կամ հիմնական գումարի նվազեցման ճանապարհով: Դիտարկենք հետևյալ իրավիճակը.

Բանկը նվազեցնում է \$125,000 ծավալով վարկի տոկոսադրույքը տարեկան 15 տոկոսից 4 տոկոսի: Մայր գումարը և տոկոսավճարները պահանջվում են մեկ տարվա ընթացքում: Նախկինում կուտակված տոկոսները հավաքագրվել են:

Հետևյալ հաշվարկի միջոցով պարզվում է ճանաչվող մասը.

Մայր գումարի ապագա վճարումներ	125,000
Ապագա տոկոսավճարներ (125,000 x 0.04)	5,000
Ընդամենը ապագա կանխիկ վճարումներ	130,000
Նվազեցրած վարկի հաշվեկշռային արժեք	-125,000
Վարկի հաշվեկշռային արժեքը գերազանցող մասը	5,000

Այս դեպքում կորուստ չի ճանաչվում, քանի որ ապագա վճարումները գերազանցում են վարկի հաշվեկշռային արժեքին, ճանաչվում է \$5,000 տոկոսային եկամուտը: Մատչանում գրանցումներ չեն իրականացվում, սակայն ծանոթագրություններում նշվում է վարկի պայմանների վերանայման մասին:

Այժմ դիտարկենք օրինակներ, որտեղ նվազեցվում է վարկի մայր գումարը:

Բանկը նվազեցնում է վարկի մայր գումարը \$125,000-ից մինչև \$100,000 դրվար: Մայր գումարը և տարեկան 13 տոկոս տոկոսավճարը վճարվելու են 1 տարվա ընթացքում: Նախկինում կուտակված տոկոսներն ամբողջությամբ ստացվել են:

Ճանաչվող կորուստը պարզելու համար ապագա դրամական վճարումները պետք է համեմատել վարկի հաշվեկշռային արժեքի հետ.

Մայր գումարի ապագա մարում	100,000
Ապագա տոկոսավճարներ (100,000 x 0.13)	13,000
Ընդամենը ապագա վճարումներ	113,000
Նվազեցրած վարկի հաշվեկշռային արժեք	-125,000
Ապագա վճարումների պակասորդ վարկի հաշվեկշռային արժեքի նկատմամբ	-12,000

Որպես կորուստ ճանաչվում է \$12,000, որի չափով վարկի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վարկի գծով ապագա վճարումներին, իսկ \$13,000 տոկոսային եկամուտը չի ճանաչվում տոկոսային եկամուտ, քանի որ բոլոր վճարումներն ուղղվելու են մայր գումարի մարմանը:

Վերանայված վարկը մատչանում գրանցվում է հետևյալ կերպ.

<i>Ամսաթիվ</i>		
Վարկերի հնարավոր կորուստների պահուստ	12,000	
Վարկեր		12,000
Վարկի մի մասը դուրսգրելու համար		

Դիտարկենք մայր գումարի կրճատման մեկ օրինակ ևս.

Ճանաչվող կորուստը պարզելու համար ապագա վճարները պետք է համեմատել վարկի

Բանկը նվազեցնում է վարկի մայր գումարը \$125,000-ից \$100,000: Մայր գումարը և տարեկան 13% տոկոսավճարը վճարվելու են 3 տարվա ընթացքում: Նախկինում կուտակված տոկոսներն ամբողջությամբ ստացվել են:

հաշվեկշռային արժեքի հետ.

Մայր գումարի ապագա մարում	100,000
Ապագա տոկոսավճարներ (100,000 x 0.13 x 3)	39,000
Ընդամենը ապագա վճարումներ	139,000
Նվազեցրած վարկի հաշվեկշռային արժեք	-125,000
Ապագա վճարումների ավելցուկ վարկի հաշվեկշռային արժեքի նկատմամբ	-14,000

Վարկի մայր գումարի կրճատման այս օրինակում կորուստ չի ճանաչվում, հետևաբար վարկը հաշվեկշռում մնում է \$125,000: Բանկը պետք է ճանաչի \$14,000 տոկոսային եկամուտը հաջորդ երեք տարիների ընթացքում:

Վարկի պայմանների փոփոխություն և գույքի ընդունում որպես վարկի մասնակի կամ լրիվ փոխհատուցում: Այս օրինակում բանկը փոփոխում է վարկի պայմանները և գույքը ընդունում է որպես վարկի պահանջի մասնակի բավարարում.

Բանկը \$15,000 շուկայական արժեքով հողամասը ընդունում է որպես \$125,000 վարկի մասնակի բավարարում, ինչպես նաև մայր գումարից ներվում է \$10,000: \$100,000 մայր գումարը և տարեկան 5% տոկոսավճարը վճարվելու են 1 տարվա ընթացքում: Նախկինում կուտակված տոկոսները ամբողջությամբ ստացվել են:

Ճանաչվող կորուստը պարզելու համար ապագա դրամական վճարները պետք է համեմատել վարկի հաշվեկշռային արժեքի հետ.		
Մայր գումարի ապագա մարում (125,000 - 15,000 - 10,000)		100,000
Ապագա տոկոսավճարներ (100,000 x 0.05)		5,000
Ընդամենը ապագա վճարումներ		105,000
Նվազեցրած վարկի հաշվեկշռային արժեք.		
Հաշվեկշռային արժեք	125,000	
Նվազեցրած գույքի շուկայական արժեքը	-15 000	-110,000
Ապագա վճարումների պակասորդ վարկի հաշվեկշռային արժեքի նկատմամբ		-5,000
Բանկը վնաս է ճանաչում \$5,000 դուլարը և դուրս է գրում հետևյալ կերպ.		
Վարկերի հնարավոր կորուստների պահուստ	5,000	
Վարկեր		5,000
Վարկի մի մասի դուրսգրման համար		
Որպես վարկի պահանջի մասնակի բավարարում ընդունված գույքը գրանցվում է մատյանում գույքի շուկայական արժեքով, իսկ եթե այդ արժեքը գերազանցում է վարկի գումարը՝ այն գրանցվում է վարկի գումարով:		
Մատյանում ստացված գույքը գրանցվում է.		
Գրավի տնօրինման արդյունքում սեփականացված անշարժ գույք	15,000	
Վարկեր		15,000
Վերանայված վարկը այժմ հաշվեկշռում հաշվառվում է ապագա դրամական վճարումների արժեքով, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.		
Վարկի սկզբնական արժեք	125,000	
Հանած վարկի կորուստ	5,000	
Հանած հողի արժեքը	15,000	-20,000
Ապագա կանխիկ վճարումներ (որպես վարկի գումար)		105,000

10.9. Գրավի տնօրինման կամ այլ պահանջներից առաջացած գույքի հաշվառումը

Ծայրահեղ դեպքերում, երբ վարկի վերանայման համաձայնություն չի կարող ձեռք բերվել, բանկը կարող է սեփականության իրավունքով տնօրինել գրավը: Գրավի սեփականացումը կարող է տարբեր լինել կախված երկրի օրենսդրությունից: Որոշ երկրների օրենքով գրավի տնօրինման արդյունքում ձեռք բերված գույքը պետք է օտարվի աճուրդում: Եթե աճուրդում գույքի վաճառքի արդյունքում ստացվող դրամական միջոցները գերազանցում են վարկի հիմնական գումարը և տոկոսավճարները, դատական, աճուրդի ծախսերի գումարը, ապա ավելցուկային մասը վերադարձվում է փոխառուին, հակառակ դեպքում փոխառուն մնացորդի մասով պարտավորություն է կրում բանկի նկատմամբ:

Գրավի տնօրինման կամ այլ պահանջներից առաջացած անշարժ գույքը հաշվառվում է «գրավի տնօրինման (տիրապետման) արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված անշարժ գույք» հաշվում: Այս հաշվում գրանցումը կատարվում է (1) պահանջի հաշվեկշռային արժեքով (վարկի մայր գումար + չհավաքագրված տոկոսագումար) կամ (2) գրավի շուկայական արժեքով կախված նրանից, թե որն է ավելի փոքր:

Քանի որ սեփականություն դարձած գրավի շուկայական արժեքը փոքր է վարկի հաշվեկշռային արժեքից, վարկի գումարը գրանցվում է գրավի արժեքով, այնուհետև վարկի փոխարեն հաշվեկշռում գրանցվում է սեփականություն դարձած գրավը:

Կատարվում են հետևյալ գրանցումները.

Օրինակ, բանկը գրավ է ստացել շենք \$125,000 վարկի դիմաց: Երբ վարկառուն չի կատարել պարտավորությունը, գրավի շուկայական արժեքը կազմում էր \$100,000 դուլար:

<i>Ամսաթիվ</i>		
Վարկերի հնարավոր կորուստների պահուստ	25,000	
Վարկեր		25,000
Վարկի հաշվեկշռային արժեքի գերազանցող մասի դուրսգրման համար		
<i>Ամսաթիվ</i>		
Գրավի տնօրինման արդյունքում ձեռք բերված շինություններ	100,000	

Վարկեր

100,000

Գրավի հաշվին վարկի մի մասի ծածկման գրանցման համար

Կենտրոնական բանկը արգելում է բանկերին գրավի տնօրինման արդյունքում ձեռք բերված գույքի երկար ժամանակ պահպանումը հաշվեկշռում և, հետևաբար բանկի կողմից օրենքով սահմանված կարգով սեփականացնելուց 6 ամիս հետո դրանք չօտարելու դեպքում այդ գումարը նվազեցվում է բանկի կարգավորման նպատակով հաշվարկվող կապիտալից:

10.10. Ֆակտորինգ (ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց)

Ֆակտորինգի պայմանագրով մի կողմը երկրորդ կողմին տրամադրում է դրամական միջոցներ՝ երրորդ կողմի նկատմամբ ունեցած վերջինիս դրամական պահանջի դիմաց: Երկրորդ կողմի դրամական պահանջի իրավունքը պայմանագրով փոխանցվում է առաջին ֆինանսական գործակալին՝ ֆակտորինգ: Ֆակտորինգի առարկա կարող են լինել ինչպես դրամական միջոցները, որոնց ժամկետն արդեն լրացել է (ներկա պահանջ), այնպես էլ ապագայում դրամական միջոցներ ստանալու իրավունքը (ապագա պահանջ):

Դիտարկենք հետևյալ օրինակը.

Ա բանկը դրամական պարտավորություն ունի Գ բանկի նկատմամբ՝ 50,000 դրամ: Գ բանկն իր դրամական պահանջը ֆակտորինգի պայմանագրով հանձնում է Բ բանկին՝ 90%-ով (10% զեղչով):

Բ բանկը Ա բանկից ստանում է 50,000 դրամ գումարը:

Բ բանկի մոտ ֆակտորինգային պայմանագրի համաձայն կկատարվեն հետևյալ գրանցումները.

Ստացվելիք գումարներ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից	50,000	
Դրամական միջոցներ		45,000
Ֆակտորինգային գործառնություններից զեղչատուկոս		5,000
Ա բանկից դրամական միջոցների ստացման դեպքում կատարվում են հետևյալ գրանցումները.		
Դրամական միջոցներ	50,000	
Ֆակտորինգային գործառնություններից զեղչատուկոս		5,000
Ստացվելիք գումարներ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից		50,000
Ֆակտորինգից ստացված եկամուտներ		5,000

10.11. Վարկերի վերաբերյալ բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող «վարկային ներդրումներ և վարկերի հնարավոր կորուստների պահուստ» ծանոթագրությունում բացահայտվում է բանկի ղեկավարության կողմից վարկերի կորուստների պահուստի ձևավորման քաղաքականությունը: Ծանոթագրությունը մասնավորապես կարող է ունենալ հետևյալ բովանդակությունը.

Վարկերի հնարավոր կորուստների պահուստը ձևավորվել է ծախսերով իրականացվող հատկացումների հաշվին: Հատկացումներն իրականացվում են հիմնվելով վարկի մայր գումարի վերադարձելիության բանկի ղեկավարության գնահատականների վրա: Պահուստի մեծությունը այնքան է, որ ըստ բանկի ղեկավարության տեսակետի կարող է չեզոքացնել վարկերի չվերադարձման հետ կապված գոյություն ունեցող կորուստները: Պահուստի մեծության գնահատումն իրականացվել է, հիմնվելով վարկերի վերադարձելիության գնահատման և վարկերի կորուստների նախկին փորձի հիման վրա: Գնահատման ժամանակ հաշվի են առնվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են վարկային պորտֆելի մեծությունը և բնույթը, որակը, առանձնահատուկ պորբլեմային վարկերի ուսումնասիրությունները, փոխառուի վճարունակության վրա ազեցություն ունեցող ընթացիկ տնտեսական պայմանները և դրանց միտումները:

Վարկերի հնարավոր կորուստների պահուստի վերաբերյալ լրացուցիչ բացահայտումներ կան «վարկային ներդրումներ» ծանոթագրության մեջ, որը ներկայացնում է հաշվետու ժամանակահատվածի ընթացքում այդ հաշվում տեղի ունեցած փոփոխությունները:

Ինքնաստուգման հարցեր

1. Ներկայացնել վարկերի բնութագիրը:
2. Ի՞նչ է բնութագրում վարկերի հնարավոր կորուստների պահուստը:
3. Որո՞նք են պորբլեմային վարկերը:
4. Ինչպե՞ս են հաշվառվում չաշխատող վարկերը և նրանց գծով հաշվարկված տոկոսները:
5. Ինչպե՞ս են հաշվառվում վերանայված պայմաններով վարկերը:
6. Ինչպե՞ս են հաշվառվում պահանջների դիմաց սեփականացված գրավները:
7. Ի՞նչ է ֆակտորինգը և ինչպե՞ս է այն հաշվառվում:
8. Ի՞նչ բացահայտումներ են տրվում վարկերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում:

ԳԼՈՒԽ 11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԼԻԶԻՆԳ)

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են վարձակալության տեսակները, հաշվառման առանձնահատկությունները վարձակալի և վարձատուի հաշվեկշռում, բերված են առանձին հասկացությունների մեջբերումներ ԶՀՀՅ թիվ 17 «Վարձակալություն» ստանդարտից:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողները կկարողանան սահմանել վարձակալությունը, տարբերակել վարձակալության տեսակները, հաշվառել ֆինանսական լիզինգը վարձատուի հաշվեկշռում, հաշվառել ֆինանսական լիզինգը վարձակալի հաշվեկշռում:

11.1. Ներածություն

Վարձակալությունը (լիզինգը) սահմանվում է որպես պայմանագրային պայմանավորվածություն, որով վարձատուն որոշակի վճարի դիմաց և որոշակի ժամկետով վարձակալի օգտագործման է հանձնում ակտիվ: Վարձակալության օբյեկտ կարող են հադիսանալ այն ակտիվները, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական, ֆիզիկական հատկությունները: Օրինակ, վարձակալության կարող են հանձնվել շենքերը, հողամասերը, փոխադրամիջոցները և այլն: Վարձակալության չեն կարող հանձնվել, օրինակ, պարենային ապրանքները, սննդամթերքները:

Ֆինանսական հաշվետվություններում վարձակալության գծով բացահայտումները և հաշվապահական մոտեցումները ամրագրված են ԶՀՀՅ թիվ 17 (Վարձակալություն) ստանդարտում:

Տարբերակվում են վարձակալության 2 տեսակներ.

- **Ֆինանսական վարձակալություն**
- **գործառնական վարձակալություն**

Վարձակալության դասակարգման հիմքում ընկած է ձևի նկատմամբ բովանդակության գերակայության հաշվապահական սկզբունքը, համաձայն որի, եթե գործարքների իրավական ձևը չի համընկնում նրանց տնտեսական բովանդակությանը, ապա գերակայությունը տրվում է բովանդակությանը: Այսինքն, վարձակալության դասակարգումը կախված է ավելի շուտ գործարքի էությունից, քան պայմանագրի ձևից:

Եթե իրավական տեսանկյունից վարձատուն գույքը տալիս է վարձակալության վարձակալին միայն որոշակի ժամկետով, ապա գործարքի ֆինանսական էությունը կայանում է նրանում, որ վարձակալված ակտիվի բոլոր տնտեսական օգուտները փոխանցվում են վարձակալին տվյալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի մեծ մասի ընթացքում:

Հետևաբար, պայմանագրի տնտեսական բովանդակությամբ պետք է հստակ տարանջատվի այն փաստը, թե վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերը և օգուտները ի՞նչ չափով են վերագրվում վարձատուին կամ վարձակալին:

Գործառնական լիզինգի պայմանագրով վարձակալը ոչ մի ռիսկ չի կրում, հետևաբար նրան չեն վերագրվում նաև ակտիվի օգտագործման հետ կապված հնարավոր բոլոր արտոնությունները (առավելությունները): Գործառնական լիզինգի դեպքում վարձակալված ակտիվները շարունակվում են հաշվառվել վարձատուի հաշվեկշռում:

11.2. Ֆինանսական վարձակալություն

Ֆինանսական վարձակալությունը վարձակալության տեսակ է, որի դեպքում վարձակալին են փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, ընդ որում ակտիվի սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել:

Ռիսկերը պայմանավորված են վարձակալված ակտիվի պարապուրդի կամ տեխնոլոգիայի հնացման հետևանքով առաջացող կորուստներով:

Օգուտները պայմանավորված են ակտիվի օգտակար ծառայության ընթացքում առավել արդյունավետ գործունեության, արժեքի բարձրացման կամ մնացորդային արժեքի իրացումից շահույթի ստացման ակնկալիքներով:

Համաձայն թիվ 17 ստանդարտի, վարձակալությունը ֆինանսական դասակարգելու համար պետք է առկա լինեն նաև հետևյալ պայմանները.

- վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում փոխանցվում է վարձակալին
- վարձակալը հնարավորություն ունի տվյալ ակտիվը գնելու այնպիսի գնով, որը սպասվում է, որ բավականաչափ ցածր կլինի գնման ամսաթվի **իրական արժեքից**, և վարձակալության սկզբում արդեն բավականաչափ հաստատ է, որ այդ հնարավորությունը կիրառվի
- վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի օգտակար ծառայության մեծ մասը, եթե նույնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում
- վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքը առնվազն հավասար է վարձակալված ակտիվի իրական արժեքին

- վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի օգտագործել դրանք առանց էական ձևափոխությունների
- եթե վարձակալը կարող է չեղյալ հայտարարել վարձակալությունը, ապա դրանից առաջացող վարձատուի կորուստները կրելու է վարձակալը
- իրական մնացորդային արժեքի տատանումներից առաջացող օգուտները կամ վնասները վերագրվում են վարձակալին
- վարձակալը հնարավորություն ունի շարունակելու վարձակալությունը ևս մեկ ժամկետով այնպիսի վարձավճարով, որը զգալիորեն ցածր է շուկայականից:

11.3. Ֆինանսական լիզինգի արտացոլումը վարձակալի հաշվեկշռում

Ինչպես նշվեց նախորդ բաժնում, ֆինանսական լիզինգի դեպքում վարձակալը տնօրինում է վարձակալված ակտիվի օգտագործման ընթացքում առաջացող տնտեսական օգուտների մեծ մասը, հետևաբար վարձակալի կողմից վարձակալության դիմաց վճարվող գումարը գրեթե հավասար է ակտիվի իրական արժեքին գումարած ֆինանսական վճարը (տոկոսը): Այսինքն, նվազագույն վարձավճարը ոչ միայն փակում է ակտիվի իրական արժեքը, այլ նաև վարձատուի համար ապահովում է տոկոս՝ ֆինանսական վճար:

Ֆինանսական լիզինգի դեպքում վարձակալված ակտիվները դուրս են գրվում վարձատուի հաշվեկշռից և հաշվառվում են վարձակալի հաշվեկշռում: Ընդ որում, հաշվեկշռի արժանահավատության տեսանկյունից, ֆինանսական լիզինգը վարձակալի հաշվեկշռում արտացոլվում է և որպես ակտիվ, և որպես պարտավորություն: Մի կողմից, վարձակալված գույքը ճանաչելով որպես ակտիվ, վարձակալը ապագայում ակնկալում է տնտեսական օգուտների ներհոսք, մյուս կողմից, ապագա վարձավճարների գծով պարտավորության ճանաչումը բնութագրում է այն փաստը, որ կա առկա պարտք վարձակալության գծով:

Վարձակալված ակտիվը և ապագա վարձավճարների գծով պարտավորությունը վարձակալի հաշվեկշռում ճանաչվում են միևնույն գումարով, որը հավասար է վարձակալված ակտիվի իրական արժեքին կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքին, եթե վերջինս ավելի փոքր է:

Նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ օգտագործվում է վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, որը կոչվում է նաև զեղչման գործակից: Ներկա արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{S}{(1 + R)^n}$$

որտեղ P-ն՝ նվազագույն վարձավճարների ներկա արժեքն է, S-ն՝ նվազագույն վարձավճարների համախառն գումարն է, R-ը՝ զեղչման տոկոսադրույքը, n-ը՝ ժամանակաշրջանների քանակը:

Վարձակալված ակտիվի մաշվածությունը հաշվարկում է վարձակալը և համապատասխան ծախսը ճանաչում է հաշվեկշռում: Ընդ որում, եթե չկա բավարար համոզվածություն, որ վարձակալը վարձակալության ժամկետի վերջում ձեռք է բերելու ակտիվի սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին պետք է անորոտիզացվի հետևյալ երկու ժամկետներից ավելի կարճի ընթացքում՝ վարձակալության ժամկետում կամ օգտակար ծառայության ժամկետում:

Վարձակալի մատյանում տրվում են հետևյալ հաշվապահական գրանցումները.

1. վարձակալված ակտիվների ստացման արտացոլում (իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի փոքր է)
 Ֆինանսական լիզինգով ստացված հիմնական միջոցներ
 Ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ
2. Ֆինանսական լիզինգի գծով չկրած տոկոսային ծախսերի (ֆինանսական վճարի) արտացոլում՝
 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած
 ֆինանսական ծախսեր
 Ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ
3. Ֆինանսական լիզինգի գծով չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրում ծախսերին.
 Տոկոսային ծախսեր ֆինանսական լիզինգի դիմաց
 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած
 ֆինանսական ծախսեր
4. Ֆինանսական լիզինգի գծով վարձավճարների վճարում.
 Ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ
 Դրամական միջոցներ

11.4. Ֆինանսական լիզինգի արտացոլումը վարձատուի հաշվեկշռում

Վարձատուն ապաճանաչում է (դուրս է գրում) ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր հաշվեկշռից և վարձակալությունում զուտ ներդրումների չափով ճանաչում է ստացվելիք գումարներ ֆինանսական լիզինգի գծով: Եթե ֆինանսական լիզինգի ժամկետի վերջում սեփականության իրավունքն անցնում է վարձակալին, վարձակալությունում զուտ ներդրումները հավասար են վարձավճարների ներկա արժեքին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով:

Վարձատուի մատյանում տրվում են հետևյալ հաշվապահական գրանցումները.

1. Վարձակալության տրված ակտիվների դուրսգրում հաշվեկշռից. հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը փոքր է վարձակալությունում զուտ ներդրումների արժեքից.
 - Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ
 - Հիմնական միջոցների հաշիվներ
 - Հիմնական միջոցների օտարումից օգուտներ
 - 1.1. Վարձակալության տրված ակտիվների դուրսգրում հաշվեկշռից. հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը մեծ է վարձակալությունում զուտ ներդրումների արժեքից.
 - Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ
 - Կորուստներ հիմնական միջոցների օտարումից
 - Հիմնական միջոցների հաշիվներ
2. Ֆինանսական լիզինգի գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում՝
 - Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ
 - Ֆինանսական վարձակալությունից չվաստակած
 - ֆինանսական եկամուտներ
3. Ֆինանսական լիզինգի գծով չվաստակած ֆինանսական եկամտի հաշվեգրում եկամուտներին.
 - Ֆինանսական վարձակալությունից չվաստակած
 - ֆինանսական եկամուտներ
 - Տոկոսային եկամուտներ ֆինանսական լիզինգից
4. Ֆինանսական լիզինգի գծով վարձավճարների ստացում.
 - Դրամական միջոցներ
 - Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք
 - գումարներ

11.5. Ֆինանսական լիզինգի հաշվառման տիպային օրինակ

Վարձատուն և վարձակալը կնքել են վարձակալական պայմանագիր հետևյալ պայմաններով.

- պայմանագրի առարկա՝ սարքավորում
 - վարձակալության ժամկետ՝ 5 տարի
 - վարձակալության ժամկետի վերջում սեփականության իրավունքն անցնում է վարձակալին
 - լիզինգավճարը բաղկացած է 5 մուծումներից, յուրաքանչյուր վճարը՝ 3 մլն դրամ
 - լիզինգավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա սկզբին
 - վարձատուի կողմից սահմանված տոկոսադրույքը՝ 8%
 - սարքավորման իրական (շուկայական) արժեքը՝ 12,936 հազար դրամ
 - սարքավորման հաշվեկշռային արժեքը՝ 12,000 հազար դրամ
 - սարքավորման գնահատված օգուտկար ծառայության ժամկետը՝ 8 տարի, մնացորդային արժեքը՝ 0, անորոշիզացիան կատարվում է համամասնական գծային մեթոդով:
- Լիզինգը պետք է համապատասխանի կապիտալիզացիայի հետևյալ չափանիշին.
 Նվազագույն լիզինգավճարների ներկա արժեքը, զեղչված վարձակալության տոկոսադրույքով, հավասար է սարքավորման իրական արժեքին՝ 12,936 հազար դրամին:
 Վարձակալը հաշվեկշռում ճանաչում է ակտիվը՝ 12,936 հազար դրամ իրական արժեքով:
 Ապագա վարձավճարների գծով պարտավորությունը՝ նվազագույն լիզինգավճարների ներկա արժեքով ճանաչվում է հաշվեկշռի պասիվում:
 Լիզինգավճարների հաշվարկը և վճարումների ժամանակացույցը ներկայացված է հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 7. Լիզինգի հաշվարկ

Տարիները	Լիզինգավճարի մեծությունը	Տոկոսադրույք 8%	Հիմնական պարտքի մարում	Պարտավորության մնացորդ
				12,936
1	3,000	-	3,000	9,936
2	3,000	795	2,205	7,731
3	3,000	619	2,381	5,350
4	3,000	428	2,572	2,778
5	3,000	222	2,778	0

- Վարձակալի մատյանում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.**

1. վարձակալված ակտիվների ստացման արտացոլում
 Ֆինանսական լիզինգով ստացված հիմնական 12,936,000 միջոցներ
 ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ 12,936,000

2. Ֆինանսական լիզինգի գծով չկրած տոկոսային ծախսերի (ֆինանսական վճարի) արտացոլում՝
 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած 2,064,000 ֆինանսական ծախսեր
 Ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ 2,064,000

3. Ֆինանսական լիզինգի գծով վարձավճարների վճարում.
 Ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներ 3,000,000
 Դրամական միջոցներ 3,000,000

4. Ֆինանսական լիզինգի գծով չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրում ծախսերին՝ 2-րդ տարվա սկզբին.
 Տոկոսային ծախսեր ֆինանսական լիզինգի դիմաց 795,000
 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր 795,000

5.

6. Սարքավորման ամորտիզացիան գրանցելու համար տրվում է հետևյալ ձևակերպումը.
 Ամորտիզացիոն ծախսեր – (ֆինանսական լիզինգով) 1,617,000
 վարձակալած հիմնական միջոցներ
 Կուտակված ամորտիզացիա - ֆինանսական լիզինգով ստացված հիմնական միջոցներ (12,936,000 / 8տարի) 1,617,000

Վարձատուի մատյանում տրվում են հետևյալ հաշվապահական գրանցումները.

7. վարձակալության տրված ակտիվների դուրսգրում հաշվեկշիռից. հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը փոքր է վարձակալությունում զուտ ներդրումների արժեքից.
 Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ 12,936,000
 Հիմնական միջոցների հաշիվներ 12,000,000
 Հիմնական միջոցների օտարումից օգուտներ 936,000

8. Ֆինանսական լիզինգի գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում՝
 Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ 2,064,000
 Ֆինանսական վարձակալությունից չվաստակած ֆինանսական եկամուտներ 2,064,000

9. Ֆինանսական լիզինգի գծով չվաստակած ֆինանսական եկամտի հաշվեգրում եկամուտներին.
 Ֆինանսական վարձակալությունից չվաստակած ֆինանսական եկամուտներ 795,000
 Տոկոսային եկամուտներ ֆինանսական լիզինգից 795,000

10. Ֆինանսական լիզինգի գծով վարձավճարների ստացում.
 Դրամական միջոցներ 3,000,000
 Ֆինանսական լիզինգի գծով ստացվելիք գումարներ 3,000,000

11.6. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Ֆինանսական վարձակալությունների գծով ֆինանսական հաշվետվություններում և նրանց կից ներկայացվող ժանոթագրություններում պետք է բացահայտվի հետևյալ տեղեկատվությունը.

1. Վարձակալված ակտիվների յուրաքանչյուր դասի հաշվեկշռային արժեքը:
2. Վարձակալի մոտ նվազագույն վարձավճարների և դրանց ներկա արժեքի համադրումը հետևյալ յուրաքանչյուր ժամանակահատվածի համար.
 - I. ոչ ուշ, քան մեկ տարի
 - II. ոչ ուշ, քան հինգ տարի
 - III. հինգ տարուց ավելի:
3. Վարձատուի մոտ վարձակալությունում համախառն ներդրումների գումարի և նվազագույն վարձավճարների գծով ընդհանուր դեբիտորական պարտքի ներկա արժեքի համադրումը վերը նշված ժամանակահատվածներից յուրաքանչյուրի համար:
4. Զվաստակած ֆինանսական եկամուտը, չկրած ֆինանսական ծախսերը:
5. Նվազագույն վարձավճարների անհավաքագրելիության գծով ճանաչված պահուստները:

Ինքնաստուգման հարցեր

1. Թվարկել վարձակալության տեսակները:
2. Ո՞ր ստանդարտով են կարգավորվում վարձակալության հաշվապահական մոտեցումները:
3. Ինչպե՞ս տարբերակել գործառնական լիզինգը ֆինանսականից:
4. Վարձակալության հետ կապված ի՞նչ բացահայտումներ են տրվում ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող բանկի ժանոթագրություններում:

ՔԼՈՒԽ 12. ԴԵՊՈԶԻՏՆԵՐ (ԱՎԱՆԴՆԵՐ)

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են դեպոզիտների դասակարգումները, տեսակները, հաշվառման առանձնահատկությունները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողները կկարողանան նկարագրել դեպոզիտների տարբեր դասակարգումները, տալ համապատասխան բնութագրեր, նկարագրել, թե ինչպես է բանկը եկամուտներ ստանում դեպոզիտների հաշվին, ավանդային գործառնությունների համար կազմել մատյանի գրանցումներ, հաշվարկել դեպոզիտների տոկոսավճարները պարզ և բարդ տոկոսների մեթոդներով, մատյանում գրանցումներ կազմել կուտակված և վճարված տոկոսների համար, ֆինանսական հաշվետվություններում կատարել դեպոզիտների բացահայտումներ, քննարկել դեպոզիտներին վերաբերող ներքին վերահսկողության հարցեր:

12.1. Ներածություն

Բանկի գործունեությունը պայմանավորված է հաճախորդներից դեպոզիտների հավաքագրման և դեպոզիտների հետագա օգտագործման նրա ունակությամբ: Տնային տնտեսությունները, տնտեսավարող սուբյեկտները և կառավարությունն իրենց դրամական միջոցները պահում են բանկերում՝ ապահովության, վճարումների հեշտացման, չօգտագործվող միջոցների դիմաց եկամուտների ստացման համար: Բանկը պարտավորություն է կրում հաճախորդի դիմաց՝ դրամական միջոցները վերադարձնելու առաջին իսկ պահանջի դեպքում կամ որոշակի ժամանակից հետո: Դեպոզիտների որոշ մասի համար բանկը նաև պարտավորվում է հաճախորդին վճարել տոկոսներ դրամական միջոցների օգտագործման իրավունքի համար:

Բանկը դեպոզիտների միջոցով եկամուտներ է ստանում երկու ճանապարհով. հաճախորդներին դեպոզիտների հետ կապված որոշ ծառայությունների մատուցման դիմաց ստացվող վճարների և այդ դրամական միջոցների վարկային ռեսուրսների պահանջ ունեցող անձանց տրամադրման դիմաց ստացվող տոկոսների հաշվին:

12.2. Դեպոզիտների բնութագրերը

Դեպոզիտը բանկում ներդրված գումար է, որը գումարը տրամադրողի՝ ավանդատուի առաջին իսկ պահանջի կամ ավանդատուի և բանկի միջև համաձայնեցված ժամկետում ենթակա է վերադարձման: Տրամադրված գումարը կարող է լինել փողի, չեկերի, ժամկետային կուպոնների և արժեթղթերի տեսքով: Դեպոզիտները դասակարգվում են, ելնելով նրանց դիմաց վճարվող տոկոսավճարների տեսակից և այն հնարավորություններից, որ դրանք ընձեռում են ավանդատուին:

12.3. Դեպոզիտների տոկոսավճարները

Դեպոզիտների դիմաց տոկոսների վճարումը, վճարման եղանակը և ժամկետները կարևոր ցուցանիշներ են դրանց դասակարգման համար: Չնայած բանկերը պարտավոր չեն վճարելու տոկոսավճար դեպոզիտների դիմաց, սակայն սովորաբար նրանք այդ անում են առկա և պոտենցիալ ավանդատուներին խրախուսելու համար: Երբ բանկը ավանդ է ներգրավում, ավանդատուն համարվում է *փոխատու*, իսկ բանկը՝ *փոխառու*, և տոկոսավճարները վճարվում են միջոցների օգտագործման համար:

12.4. Դեպոզիտների մատչելիությունը

Դեպոզիտները դասակարգվում են նաև ըստ ավանդատուների կողմից նրանց մատչելիության: Ավանդատուները սովորաբար ցանկանում են, որ իրենց ներդրած միջոցները հասանելի լինեն առաջին իսկ պահանջի դեպքում, սակայն եթե բոլոր դեպոզիտները լինեն ցպահանջ, ապա բանկերը չեն կարողանա ներդրումներ կատարել կամ տրամադրել վարկեր: Այդ պատճառով բանկերը ավանդատուներին առաջարկում են ավելի բարձր տոկոսադրույքներ, փոխարենը ավանդատուի առջև դնելով դեպոզիտը պահանջելու ժամանակային սահմանափակումներ: Երկարաժամկետ դեպոզիտների տեղաբաշխման միջոցներով բանկերը ստանում են եկամուտներ՝ տեսականորեն այդ երկարաժամկետ ավանդների համար վճարված տոկոսավճարները պետք է ավելի փոքր լինեն, քան վարկերի և ներդրումների դիմաց ստացված եկամուտները:

12.5. Դեպոզիտային հաշիվների դասակարգումները

Դեպոզիտային հաշիվները դասակարգվում են նաև որպես գործառնական և ոչ գործառնական հաշիվներ: Գործառնական հաշիվները այն հաշիվներն են, որոնց միջոցներով հաճախորդը կարող է չեկեր դուրս գրել, փոխանցումներ իրականացնել և այլն, այլ խոսքերով, անհրաժեշտության դեպքում արագ գործառնություններ իրականացնել: Շատ երկրներում վերահսկողության մարմիններն արգելում են այս հաշիվների դիմաց տոկոսներ վճարել: Ոչ գործառնական հաշիվների միջոցով հաճախորդը կարող է իրականացնել սահմանափակ գործառնություններ՝ թողնել ավանդը տոկոսներ կուտակելու և վաստակելու համար:

12.5.1. Գործառնական հաշիվներ

Գործառնական հաշիվները ցպահանջ և NOW հաշիվներն են, որոնք կարող են բացվել չեկերի միջոցով:

Ցպահանջ դեպոզիտային հաշիվ: Ցպահանջ հաշիվները անտոկոս հաշիվներ են, որոնք վերադարձվում են հաճախորդի առաջին իսկ պահանջով: Հայաստանում այս հաշիվների դիմաց

տոկոսներ վճարելուն արգելքներ չկան: Ցպահանջ հաշիվների ամենատարածված տեսակը *չեկային հաշիվներն են*, որոնք կարող են բացվել չեկերի միջոցով:

NOW (negotiable order of withdrawal) դեպոզիտը վերցնելու համաձայնագիր հաշիվներ: Այս հաշիվները համեմատաբար նոր են բանկային պրակտիկայում: Դրանք, ըստ էության, իրենցից գործառնական հաշիվներ են ներկայացնում, սակայն որոշակի սահմանափակումներով:

- **NOW հաշիվները բացվում են միայն ֆիզիկական անձանց և շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար:**
- **Բանկերը կարող են պահանջել հաշվի նվազագույն մնացորդ՝ մինչև տոկոսների վճարումը:**
- **Բանկերը կարող են սահմանել հաճախորդի կողմից դուրս գրվող չեկերի առավելագույն սահմանաչափ:**
- **Բանկերը կարող են պահանջել հաճախորդից նախօրոք (օրինակ, 7 օր առաջ) տեղեկացնել փոխանցման մասին:**
- **Ավանդատուները կարող են միջոցները փոխանցել երրորդ անձին չեկ դուրս գրելու միջոցով, այնպես, ինչպես չեկային հաշիվների տերերը:**

12.5.2. Ոչ գործառնական հաշիվներ

Ոչ գործառնական հաշիվները խնայողական և ժամկետային դեպոզիտներն են:

խնայողական դեպոզիտի հաշիվներ: Բանկը հաճախորդից պահանջում է հաշվից օգտվելուց առնվազն 7 օր առաջ տեղեկացնել իրեն, չնայած այս դեպոզիտները մարման որոշակի ժամկետ չունեն: Դրանական շուկայի դեպոզիտների հաշիվը (ԴՇԴՅ) խնայողական հաշվի վառ օրինակ է: Այս հաշվի սեփականատերը կարող է իրականացնել միայն վեց փոխանցում յուրաքանչյուր ամսվա ընթացքում, որոնցից միայն երեքը կարող են իրականացվել չեկերի միջոցով: Հաշվի մնացորդի և վճարվող տոկոսի համար ոչ մի նվազագույն չափ չի սահմանվում, սակայն բանկերը կարող են կիրառել լրացուցիչ սահմանափակումներ:

ժամկետային ավանդի հաշիվ: ժամկետային ավանդները վճարվում են նախօրոք համաձայնեցված ժամկետում կամ հաշվից գումարները հանելուց առնվազն 7 օր առաջ տեղյակ պահելու դեպքում: Ժամկետային դեպոզիտները ժամկետից շուտ պահանջելու համար սահմանվում են տուգանքներ կամ տոկոսադրույքների վերանայում, իջեցում:

ժամկետային ավանդները ներառում են ավանդային սերտիֆիկատները: Սերտիֆիկատը բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագիր է, որը սահմանում է ավանդի ժամկետը և դրա դիմաց ստացվելիք տոկոսավճարը: Ավանդատուն պետք է սպասի մինչև մարման ժամկետը կամ վերադարձնի սերտիֆիկատը ժամկետից շուտ՝ վճարելով տուգանք:

12.5.3. Հիմնական դեպոզիտներ

Հիմնական դեպոզիտները հարաբերականորեն կայուն են և չեն պահանջվում անկախ տնտեսական պայմաններից և տոկոսադրույքների փոփոխությունից: Հիմնական դեպոզիտների մեջ են մտնում ցպահանջ ավանդները, NOW հաշիվները, դրանական շուկայի ավանդային հաշիվները և տեղի ազգաբնակչությունից ներգրավված փոքր ժամկետային հաշիվները (\$100,000-ից փոքր):

Ոչ հիմնական ավանդներն իրենցից ներկայացնում են դեպոզիտների ամբողջ ծավալի և հիմնական դեպոզիտների տարբերությունը: Դեպոզիտների այս խումբն ունի պահանջվելու մեծ հավանականություն, մասնավորապես, եթե այլ բանկեր առաջարկում են ավելի բարձր տոկոսներ: Այս խմբին են դասվում \$100,000 և ավելի ծավալով ժամկետային դեպոզիտները և ոչ ռեզիդենտներից ներգրավված դեպոզիտները:

12.6. Ավանդների սպասարկման վճարներ

Բանկը կարող է ավանդների սպասարկման հետ կապված ծառայությունների դիմաց վճարներ ստանալ: Օրինակ, եթե բանկը **պլաստիկ քարտերի** (ATM) կամ չեկերի տրամադրման հնարավորության միջոցով հաճախորդի ավանդին ապահովում է ավելի հարմար, դյուրին հասանելիություն, ապա դրա համար կատարվում է լրացուցիչ վճարում: Բանկը գանձում է նաև վճարներ, եթե հաճախորդի կողմից օգտագործված գումարը գերազանցում է հաշվի համար սահմանված նվազագույն մնացորդը և այլն:

12.7. Դեպոզիտների գծով պարտադիր պահուստավորման պահանջները

Դրամավարկային քաղաքականության իրականացման համար Դրամավարկային կարգավորման օրգանները բանկերի կողմից ներգրավված միջոցների դիմաց պահանջում են պահուստավորում, որի համար կարող է տոկոս չվճարվել:

Քանի որ **պարտադիր պահուստավորումն** օգնում է կենտրոնական բանկին վերահսկելու դրամի առաջարկը, կենտրոնական բանկը կարող է փոփոխել նրա չափը՝ ելնելով տնտեսական քաղաքականության շահերից: Պարտադիր պահուստավորման նորմատիվի նվազեցումը առաջ է բերում դրամի առաջարկի մեծացում, իսկ խստացումը՝ դրամի առաջարկի կրճատում: Նորմատիվը նվազեցվում է, եթե տնտեսությունում կա վարկերի մեծ պահանջարկ, որի բավարարման համար բանկերը դժվարանում են միջոցներ ներգրավել: Նորմատիվի նվազեցումը մեծացնում է բանկերի տրամադրության տակ մնացող միջոցների ծավալը, որի հաշվին և բանկերը կարող են բավարարել վարկի նկատմամբ տնտեսության լրացուցիչ պահանջարկը: Պարտադիր պահուստավորման պահանջները կարող են տարբեր լինել կախված դեպոզիտների տեսակներից և ծավալներից:

Հայաստանում պահուստավորման չափ է սահմանված դեպոզիտների 6%-ը՝ անկախ նրանց ժամկետներից և չափերից: Պահուստավորումն իրականացվում է միայն ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշվում, ընդ որում այդ միջոցների դիմաց 2000թ. հունվարի 1-ից բանկերին վճարվում են տոկոսներ:

12.8. Ավանդային գործառնությունների հաշվառումը

Դեպոզիտների գրանցման գործառնությունների մեծ մասը ներառում են ակտիվները և պարտավորությունները:

Գործառնություն 1. Հաճախորդը ներ է դնում \$200 կանխիկ չեկային հաշվում:

Կանխիկ դրամական միջոցներ	200	
Ցպահանջ դեպոզիտներ		200

Ցպահանջ դեպոզիտը գրանցելու համար

Բանկը ստանում է \$200 կանխիկ, որպես ակտիվ, և ձեռք է բերում \$200 պարտավորություն՝ ցպահանջ ավանդի տեսքով: «Կանխիկ դրամական միջոցներ» հաշիվը ակտիվային հաշիվ է, որը դեբետագրվում է, իսկ «ցպահանջ ավանդներ» հաշիվը կրեդիտագրվում է: Ցպահանջ դեպոզիտներ հաշիվը գլխավոր գրքի ստուգիչ հաշիվ է, հետևաբար գլխավոր գրքի ենթահաշիվները ցույց են տալիս անվանական ցպահանջ հաշիվները, որոնք և պետք է կրեդիտագրվեն:

Գործառնություն 2. Հաճախորդը ներդնում է \$100 դրամական շուկայի ավանդային հաշվում:

Կանխիկ դրամական միջոցներ	100	
Դրամական շուկայի ավանդային հաշիվ		100

Դրամական շուկայի ցպահանջ դեպոզիտը գրանցելու համար

Այս գործառնությունը նման է առաջին գործառնությանը, միայն տարբերվում են դեպոզիտների տեսակները: Բանկը ստանում է \$100 կանխիկ ակտիվ, և ձեռք է բերում \$100 պարտավորություն՝ խնայողական ավանդ:

Գործառնություն 3. Հաճախորդը գնում է \$500 ժամկետային ավանդային սերտիֆիկատ և վճարում է դրա համար կանխիկով:

Կանխիկ դրամական միջոցներ	500	
Ավանդային սերտիֆիկատ		500

Ժամկետային ավանդային սերտիֆիկատը գրանցելու համար

Բանկը ստանում է \$500 կանխիկ, և ձեռք է բերում պարտավորություն ժամկետային ավանդների գծով:

Գործառնություն 4. Հաճախորդը փոխանցում է \$225 դրամական շուկայի ավանդային հաշվից NOW հաշվին:

Դրամական շուկայի ավանդային հաշիվ	225	
NOW հաշիվներ		225

Ժամկետային ավանդային հաշվից NOW հաշվին գումարը փոխանցելու համար

Սա պարզապես ավանդի փոխանցում է մեկ հաշվից մեկ այլ հաշվին: Այս փոխանցման իրականացման համար օգտագործվում է երկու փաստաթուղթ՝ դրամական շուկայի ավանդային հաշվից դուրս գրման թերթիկը և NOW հաշվի ավանդային թերթիկը: Արդյունքում NOW հաշիվների մնացորդը աճում է, իսկ խնայողական ավանդների հաշվի մնացորդը նվազում է: Բանկի կողմից ոչ կանխիկ է ստացվել, ոչ վերադարձվել, հետևաբար ոչ մի փոփոխություն չկա կանխիկ դրամական միջոցների հաշվում:

Գործառնություն 5. Հաճախորդը կանխիկացնում է \$150 չեկը, դուրս գրելով չեկային հաշվից, դրամարկղի պատուհանով:

Ցպահանջ դեպոզիտներ	150	
Կանխիկ դրամական միջոցներ		150

Դեպոզիտային հաշվից չեկի վճարումը գրանցելու համար

Սա գործառնություն 1-ի հակառակ գործառնությունն է: \$150 դուրս գրելով հաճախորդի հաշվից, նվազեցվում է հաշվի մնացորդը և դրամարկղում կանխիկը:

Գործառնություն 6. Հաճախորդը ձեռք է բերում \$2,000 կանխիկ չեկ, որի համար վճարում է \$1,000 կանխիկ և \$1,000 չեկով՝ չեկային հաշվից:

Կանխիկ դրամական միջոցներ	1,000	
Ցպահանջ դեպոզիտներ	1,000	
Կանխիկ չեկեր		2,000

Կանխիկ չեկի ձեռք բերումը գրանցելու համար

Կանխիկ չեկը բանկի ցպահանջ պարտավորությունն է, որը հատուկ ծառայություն է հաճախորդի համար: Կանխիկ չեկեր հաշիվը կրեդիտագրվում է պարտավորությունների աճը ցույց տալու համար: \$1,000 կանխիկը մեծացնում է դրամարկղի կանխիկը, \$1,000 չեկերի ստացումը նվազեցնում է ցպահանջ դեպոզիտների մնացորդը:

Գործառնություն 7. Հաճախորդը կանխիկացնում է այլ բանկի կողմից դուրս գրված \$300 չեկը:

Պահանջներ Ա բանկի նկատմամբ	300	
Կանխիկ դրամական միջոցներ		300

Այլ բանկի կողմից դուրս գրված չեկի վճարումը գրանցելու համար

Բանկը ստանում է այլ բանկի կողմից դուրս գրված չեկը, հետևաբար բանկը պետք է ստանա \$300 այլ բանկից: Հաճախորդին վճարված \$300 չափով նվազում է դրամարկղի կանխիկը:

Գործառնություն 8. Հաճախորդը ներդնում է այլ բանկի կողմից դուրս գրված \$700 չեկը դրամական շուկայի դեպոզիտային հաշվում:

Պահանջներ Բ բանկի նկատմամբ	700	
Դրամական շուկայի ավանդային հաշիվներ		700

Այլ բանկի կողմից դուրս գրված չեկը դեպոզիտային հաշվում գրանցելու համար

Ստացված չեկերը պետք է վճարման ենթարկվեն բանկի կողմից: Խնայողական հաշիվների մնացորդը աճում է \$700, կանխիկ դրամական միջոցների հաշիվները փոփոխություն չեն կրում:

Գործառնություն 9. Հաճախորդը դուրս է գրում \$600 NOW հաշվից և ստանում ա) կանխիկ փող, բ) կանխիկ չեկ, գ) ավանդային սերտիֆիկատ:

ա) NOW հաշիվներ	600	
Կանխիկ դրամական միջոցներ		600

NOW հաշվից միջոցներ հանելը գրանցելու համար

բ) NOW հաշիվներ	600	
Կանխիկ չեկեր		600

Կանխիկ չեկեր գնելը գրանցելու համար

գ) NOW հաշիվներ	600	
Ավանդային սերտիֆիկատ		600

NOW հաշվից դեպոզիտային սերտիֆիկատ հաշվին փոխանցելու միջոցի համար

Գործառնություն 10. Հաճախորդը հանձնարարում է բանկին \$20,000 NOW հաշվից փոխանցել այլ բանկի հաշվին:

NOW հաշիվներ	20,000	
Հաշիվ Կենտրոնական բանկում		20,000

Փոխանցումը գրանցելու համար

Բանկը փոխանցում է գումարը հաճախորդի NOW հաշվից Կենտրոնական բանկում այլ բանկի հաշվին՝ հաճախորդի NOW հաշիվը նվազում է \$20,000:

Գործառնություն 11. Կենտրոնական բանկից ստացվել են հետևյալ քլիրինգները.

Հաճախորդների ցպահանջ դեպոզիտներ	1,500,000
Հաճախորդների NOW հաշիվներ	210,000
Հաճախորդների դրամական շուկայի ավանդային հաշիվներ	350,000
Դրամարկղային չեկեր	300,000
Ընդամենը՝ քլիրինգ	2,360,000

Այս գործառնությունների գրանցումը մատյանում հետևյալն է.

Հաճախորդների ցպահանջ ավանդներ	1,500,000
Հաճախորդների NOW հաշիվներ	210,000
Հաճախորդների դրամական շուկայի ավանդային հաշիվներ	350,000
Դրամարկղային չեկեր	300,000
Կենտրոնական բանկում բանկի հաշիվ	2,360,000

Կենտրոնական բանկից քլիրինգի արդյունքները գրանցելու համար

Վերը ներկայացված քլիրինգները ստացվել են կենտրոնական բանկից, որոնք դուրս են գրվել բանկի հաշիվներից և մուտքագրվել այլ բանկերին: Կենտրոնական բանկում բանկի միջոցների մնացորդը նվազել է \$2,360,000-ով և բանկը յուրաքանչյուր գործառնության համար գրանցումներ է կատարում համապատասխան հաշիվներում:

Գործառնություն 12. \$1,500 տոկոսավճարը, որը բանկի կողմից կուտակվել էր նախկինում, ենթակա է վճարման: Տոկոսավճարները գրանցվում են հաճախորդի դրամական շուկայի ավանդային հաշվին, այլ ոչ թե կանխիկ վճարվում են նրան:

Կուտակված վճարվելիք տոկոսավճարներ	1,500	
Դրամական շուկայի ավանդային հաշիվ		1,500

Դեպոզիտային սերտիֆիկատի տոկոսագումարը վճարելու համար

Գործառնություն 13. \$150,000 ավանդային սերտիֆիկատը ենթակա է մարման: Հաճախորդը ցանկություն է հայտնում ստացվող գումարը բաշխել հետևյալ կերպ.

Նոր ավանդային սերտիֆիկատ	100,000
Դրամական շուկայի ավանդային հաշիվներ	20,000
NOW հաշիվներ	15,000
Կանխիկ չեկերի գնում	10,000
Կանխիկ	5,000
Ընդամենը՝	150,000

Մատյանում կատարվող գրանցումները հետևյալը կլինեն.

Ավանդային սերտիֆիկատ (հին)	150,000	
Ավանդային սերտիֆիկատ (նոր)		100,000
Դրամական շուկայի ավանդային հաշիվներ		20,000
NOW հաշիվներ		15,000
Դրամարկղային չեկեր		10,000
Կանխիկ դրամական միջոցներ		5,000

Ժամկետը լրացած ավանդային սերտիֆիկատի գրանցման համար

Ժամկետը լրացած ավանդային սերտիֆիկատը բաշխվել է հաճախորդի ցանկությամբ: Մեկ կրեդիտագրումը նվազեցրել է ակտիվները և մյուս չորս կրեդիտագրումները մեծացրել են պարտավորությունները:

Գործառնություն 14. Հաճախորդը բանկին տալիս է \$500 գանձապետական տոկոսային արժեկտրոն: Բանկն անմիջապես փոխանցում է գումարը հաճախորդի NOW հաշվին, սակայն ծառայության դիմաց գանձում է \$5 դոլար:

Մարված տոկոսային արժեկտրոն	500	
NOW հաշիվներ		495
Ստացված վճարներ		5
<i>Գանձապետական տոկոսային արժեկտրոնը գրանցելու համար</i>		
Բանկը կվերականգնի արժեկտրոնի գումարը, երբ այն ներկայացնի վճարման և մատյանում կկատարվի հետևյալ գրանցումը.		
Կենտրոնական բանկում բանկի հաշիվ	500	
Մարված տոկոսային արժեկտրոն		500

Գանձապետական տոկոսային արժեկտրոնի փոխհատուցումը ստանալու համար

Գործառնություն 15. Բանկը տեղական բիզնեսի համար սերտիֆիկացնում է \$2,500 չեկ. Ցպահանջ դեպոզիտներ 2,500
Սերտիֆիկացված չեկեր 2,500

Հաճախորդի սերտիֆիկացված չեկերը գրանցելու համար

Գործառնություն 16. Նախորդ գործառնությունում նշված սերտիֆիկացված չեկը ստացվել է Կենտրոնական բանկի քլիրինգից, միաժամանակ ստացվել են նաև հաճախորդների ցպահանջ ավանդների չեկերը՝ \$200,000.

Ցպահանջ դեպոզիտներ	200,000	
Սերտիֆիկացված չեկեր	2,500	
Կենտրոնական բանկում բանկի հաշիվ		202,500

Կենտրոնական բանկի քլիրինգը գրանցելու համար

12.9. Ավանդների համար վճարվելիք տոկոսներ

Ավանդների համար տոկոսները կարող են հաշվարկվել երկու մեթոդներով՝ պարզ և բարդ տոկոսների մեթոդներով:

12.9.1. Պարզ տոկոսի մեթոդ

Պարզ տոկոսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$i = (p) (r) (t)$$

որտեղ

i – տոկոսագումարն է,

p – հիմնական գումարը,

r – տոկոսադրույքն է,

t – ժամանակահատվածն է:

Օրինակ՝ \$500,000 դոլար ավանդային սերտիֆիկատի մարման ժամկետը 180 օր է, ունի 8.5% տարեկան տոկոսադրույք: Հաշվարկը կլինի հետևյալը.

$$i = 500,000 \times 0.085 \times 180/360 = 21,250$$

12.9.2. Բարդ տոկոսի մեթոդ

Բարդ տոկոսը հաշվարկվում է հիմնական գումարի և կուտակված տոկոսների նկատմամբ:

Բարդ տոկոսը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1. հաշվարկվում է պարզ տոկոս հիմնական գումարի նկատմամբ
2. 1-ին քայլում հաշվարկված տոկոսագումարն ավելացվում է մայր գումարին
3. 2-րդ քայլում հաշվարկված գումարի նկատմամբ հաշվարկվում է պարզ տոկոս:
Վերոհիշյալ քայլերի արդյունքում հաշվարկված տոկոսագումարը ստացվում է ավելի մեծ, քան համաձայնեցված տոկոսադրույքն է:

Բարդ տոկոսը հաշվարկվում է որոշակի ժամանակահատվածի համար՝ կիսամյակ, եռամսյակ, ամիս կամ օր: Որքան կարճ է ժամանակահատվածը, այնքան հաճախակի է կատարվում տոկոսների հաշվարկը և այնքան մեծ է դեպոզիտի էֆեկտիվ եկամտաբերությունը: Առյուսակ 8-ը ներկայացնում է եռամսյակային հաշվարկված տոկոսագումարը \$500,000 դոլար ավանդային սերտիֆիկատի համար, որը մարվում է 180 օրից և տարեկան տոկոսադրույքը կազմում է 8.5%:

Աղյուսակ 8. Բարդ տոկոսի հաշվարկ (եռամսյակային)

Օր	Ավանդային սերտ. հիմնական գումարը	Կուտակված տոկոսներ	Հիմնական գումար + տոկոսներ (2 + 3)	Համաձայնեցված տոկոսադրույք	Ժամկետ	Տվյալ ժամանակահատվածում ստացվող տոկոսներ
1	2	3	4	5	6	7
90	500,000	0	500,000	8.5 %	90/360	10,625
180	500,000	10,625	510,625	8.5 %	90/360	10,851
						21,476

Ավանդային սերտիֆիկատի ժամանակահատվածը բաժանված է երկու մասի: Պարզ տոկոսը կուտակվում է առաջին ժամանակաշրջանի համար և ավելացվել է հիմնական գումարին, հաջորդ ժամանակաշրջանում պարզ տոկոսը կիրառվել է հիմնական և ավելացված տոկոսների գումարին:

Ավանդային սերտիֆիկատի համար վճարված ընդհանուր տոկոսագումարն ավելի բարձր է, քան պարզ տոկոսով հաշվարկի ժամանակ: Այս տարբերությունն ավելի է մեծանում տոկոսների հաշվարկման հաճախականության արագացման համար (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Բարդ տոկոսի հաշվարկ (ամսական)

Օր	Ավանդային սերտ. հիմնական գումարը	Կուտակված տոկոսներ	Հիմնական գումար + տոկոսներ (2 + 3)	Համաձայնեցված տոկոսադրույք	Ժամկետ	Տվյալ ժամանակահատվածում ստացվող տոկոսներ
1	2	3	4	5	6	7
30	500,000	0	500,000	8.5 %	30/360	3,542
60	500,000	3,542	503,542	8.5 %	30/360	3,567
90	500,000	7,109	507,109	8.5 %	30/360	3,592
120	500,000	10,701	510,701	8.5 %	30/360	3,617
150	500,000	14,318	514,318	8.5 %	30/360	3,643
180	500,000	17,961	517,961	8.5 %	30/360	3,669
						21,630

Պարզ և բարդ տոկոսների ազդեցությունը ավանդային սերտիֆիկատի տարեկան եկամտաբերության վրա ներկայացված է աղյուսակում 10-ում, որտեղ տրվում է նաև դրա վրա տոկոսների եռամսյակային և ամսական հաշվարկների ազդեցությունը (ավանդային սերտիֆիկատի տարեկան եկամտաբերությունը պարզելու համար եկամուտը պետք է տարեկանացվի):

Աղյուսակ 10. Պարզ և բարդ տոկոսի ազդեցությունը տարեկան եկամտաբերության վրա.

	Պարզ տոկոսի մեթոդ	Տարեկան տոկոսավճար	Եկամտաբերություն
Պարզ տոկոսի մեթոդ	(21,250 x 2)	42,500	8.50%
Բարդ տոկոսի մեթոդ			
Եռամսյակային	(21,476 x 2)	42,952	8.59%
Ամսական	(21,630 x 2)	43,260	8.65%

Վերոհիշյալի հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Տոկոսադրույքը չի փոփոխվում, փոփոխվում է միայն այն ժամանակահատվածը, որի համար հաշվարկվում է տոկոսադրույքը:
- Բանաձևի յուրաքանչյուր կիրառման ժամանակ տոկոսագումարը մեծանում է, քանի որ հաշվարկման բազան (հիմնական գումար + տոկոսագումարը) մեծանում է:
- Դեպոզիտի հիմնական գումարը մնում է \$500,000, միայն տոկոսի հաշվարկման բազան է փոփոխվում:
- Չնայած կուտակված տոկոսները մեծանում են օրական, ամսական կամ եռամսյակային, ավանդատուին սովորաբար տոկոսներ չեն վճարվում մինչև ավանդային սերտիֆիկատի մարումը:

12.10. Կուտակված և վճարված տոկոսների գրանցումները մատչանում

Չնայած տոկոսագումարները սովորաբար վճարվում են ժամկետի վերջում, սակայն մինչև ավանդի մարումը բանկը պարբերաբար կուտակում է դրանք՝ ճանաչելով տոկոսային ծախսերը դեպոզիտի գոյության ողջ ընթացքում: Համակարգիչների շնորհիվ բանկերը այդ հաշվարկն իրականացնում են օրական կտրվածքով:

Ստորև ներկայացված օրինակը ցույց է տալիս, թե ինչպես է բանկը գրանցում \$500,000 ավանդային սերտիֆիկատի տոկոսները: Հաշվարկը կատարվում է եռամսյակային բարդ տոկոսների մեթոդով: Ենթադրենք, մարումից հետո հաճախորդը ցանկություն է հայտնում միջոցները փոխանցել ցպահանջ ավանդային հաշվին:

90-րդ օր		
Տոկոսային ծախս	10,625	
Կուտակված վճարվելիք տոկոսներ		10,625
Տոկոսային ծախսը գրանցելու համար		

<i>180-րդ օր</i>	
Տոկոսային ծախս	10,851
Կուտակված վճարվելիք տոկոսներ	10,625
Ավանդային սերտիֆիկատ	500,000
Ցպահանջ ավանդ	521,476

Տոկոսային ծախսը, տոկոսները և մայր գումարը գրանցելու համար

180-րդ օրը ավանդային սերտիֆիկատը մարվում է, հաճախորդը ստանում է \$521,476՝ հիմնական գումարի և տոկոսագումարի համար: Ավանդային սերտիֆիկատը փոխանցվում է այլ տեսակի ավանդի կամ այն պարզապես կարող է նորացվել:

Եթե դեպոզիտի համար եկամուտ հաշվարկվում է ոչ ամբողջ ամսվա համար, ապա վերջին օրվա համար պետք է տոկոս չհաշվարկել: Օրինակ, եթե 30-օրյա ավանդային սերտիֆիկատը տրվել է ապրիլի 10-ին, որի ժամկետը լրանալու է մայիսի 10-ին: Քանի որ առաջին օրը հաշվարկվում է, ապա ապրիլին եկամուտ հաշվարկվում է 21 օրվա համար, և քանի որ վերջին օրվա համար եկամուտ չի հաշվարկվում, ապա մայիսին եկամուտ հաշվարկվում է 9 օրվա համար:

12.11. Ավանդների ներկայացումը ֆինանսական հաշվետվություններում

Ավանդների ճիշտ բացահայտումը պահանջում է նրանց տարբեր տեսակները ներկայացնել առանձին - առանձին ֆինանսական հաշվետվություններում: Ավանդները բաժանվում են հետևյալ խմբերի.

- **Ցպահանջ ավանդներ**
- **NOW հաշիվներ**
- **Խնայողություններ**
- **Ժամկետային և \$100,000 դոլարից ավելի ծավալով ավանդներ**
- **Այլ ժամկետային ավանդներ:**

Եթե բանկն ունի արտասահմանյան մասնաճյուղեր, բացահայտումները պետք է ներառեն նաև վերոհիշյալ դասակարգումը ներքին և արտերկրի մասնաճյուղերի համար: Այլ բացահայտումները ներառում են միջին դեպոզիտների մնացորդները, նրանց համար վճարված տոկոսները (ներքին և արտերկրի մասնաճյուղերի կողմից), \$100,000 ավելի ժամկետային դեպոզիտներն ըստ մարման ժամկետների: Փոխկապված անձանց և այլ կապված կազմակերպությունների ավանդները բացահայտվում են, եթե դրանք նշանակալի են:

12.12. Ներքին վերահսկողության միջոցառումներ դեպոզիտների համար

Ավանդների ներգրավման, պահպանման և մարման համար ներքին վերահսկողությունը խիստ կարևորվում է: Վերահսկողական միջոցառումները բանկի ղեկավարության կողմից ներդրված քաղաքականությունները և ձեռնարկումներն են, որոնք ապահովում են բանկի խնդիրների իրագործումը:

Ներքին վերահսկողության միջոցառումներն ապահովում են, որ ավանդների հետ կապված գործառնությունները լինեն թույլատրված և իրականացված գրանցումները համապատասխանեն ավանդների ներգրավման գործառնություններին: Այդ գործընթացը նախատեսում է ավանդային գործառնությունների հետ կապված պատասխանատվությունների, իրավասությունների և դրանք գրանցելու տարանջատում: Մասնավորապես, վերահսկման միջոցառումները բաժանվում են աշխատակիցների միջև անկախ խաչաձև ստուգումներ ապահովելու համար:

- Ներքին վերահսկողության վերաբերյալ տրվում են հետևյալ եզրահանգումները.
- **Արդյո՞ք ենթամատյանների հաշիվները համեմատագրվում են գլխավոր գրքի ստուգիչ հաշիվներին ամենօրյա կտրվածքով:**
- **Արդյո՞ք բանկի ղեկավար աշխատողները կամ վերահսկողները համաձայնություն են տալիս օվերդրաֆտների, երկարացված և վերադարձված ավանդների համար:**
- **Ապահովվա՞ծ է համապատասխան անվտանգություն ֆայլերի, գլխավոր գրքի քարտերի, վերադարձված չեկերի, ավանդային թերթիկների, ստորագրությունների քարտերի համար:**
- **Արդյո՞ք ավանդատուի հաշիվների վերաբերյալ հաշվետվություններն ուղարկվում են կանոնավոր:**
- **Արդյո՞ք սառեցված հաշիվները ուսումնասիրվում են ղեկավարի և վերահսկողների կողմից:**
- **Արդյո՞ք խիստ համարակալման պաշտոնական չեկերը օգտագործվում և վերահսկվում են համարժեքորեն:**
- **Արդյո՞ք պարտականությունների բաժանումը համապատասխան է բանկի քաղաքականությանը:**
- **Արդյո՞ք ուսումնասիրվում են հաշիվները ոչ սովորական գործառնությունների դեպքում:**

Ներքին վերահսկողության այս միջոցառումների արդյունավետ իրականացումը նախապայման է հանդիսանում բանկի հաջող գործունեության համար:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է դեպոզիտը:
2. Ինչպե՞ս են դասակարգվում դեպոզիտային հաշիվները և ինչ առանձնահատկություններ ունեն:
3. Ինչպե՞ս է կատարվում դեպոզիտների դիմաց տոկոսների հաշվեգրումը:
4. Նկարագրել պարզ և բարդ տոկոսների հաշվարկման մեխանիզմը:
5. Ներքին ի՞նչ հսկողական միջոցառումներ են նախատեսվում դեպոզիտների անվտանգության ապահովման համար:

ԳԼՈՒԽ 13. ՊԼԱՍՏԻԿ ԶԱՐՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում են պլաստիկ քարտերի տեսակները, բանկոմատով գործառնությունների հաշվառման առանձնահատկությունները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողները կկարողանան բնութագրել դեբետային և կրեդիտային պլաստիկ քարտերը, կատարել պլաստիկ քարտերով գործառնությունների հաշվառում, օվերդրաֆտի հաշվառում, բանկոմատով կատարված կանխիկ և անկանխիկ գործառնությունների հաշվառում:

13.1. Ներածություն

Պլաստիկ քարտը էլեկտրոնային վճարային միջոց է, որն ապահովում է քարտապաններին հարմարավետ և արագ սպասարկում ավտոմատ գանձման դրամարկղային սարքերի (ATM-ների և POS տերմինալների) միջոցով: Քարտը հնարավորություն է տալիս ոչ միայն կանխիկ գումար ստանալ, այլ նաև անկանխիկ եղանակով վճարումներ կատարել ձեռք բերվող ապրանքների, մատուցված ծառայությունների դիմաց:

Պլաստիկ քարտերով գործառնություններ կատարելու համար բանկերը պետք է անդամակցեն պլաստիկ քարտեր թողարկող և սպասարկող վճարային համակարգերի: Ներկայումս Հայաստանում գործում է «Արմենիան Քարդ» վճարային համակարգը, որին անդամակցում են ՀՀ շատ բանկեր:

Այս գլխում ներկայացվում են բանկերի կողմից սպասարկվող դեբետային և կրեդիտային պլաստիկ քարտերի հաշվառման առանձնահատկությունները:

13.2. Դեբետային քարտերի հաշվառումը

Դեբետային քարտը քարտապանին հնարավորություն է տալիս վճարումներ կատարել իր քարտային հաշվի մնացորդի սահմաններում:

Բանկը թողարկված, սակայն դեռևս չօգտագործված (չտրամադրված) դեբետային քարտերի քանակական հաշվառումը վարում է հետհաշվեկշռում այդ նպատակի համար առանձնացված «Չօգտագործված դեբետային քարտեր» համապատասխան հաշվով:

Դեբետային քարտի տրամադրման համար հաճախորդը կատարում է նախնական գումարի մուտքագրում իր քարտային հաշվին, միաժամանակ վճարելով բանկի սակագներով սահմանված քարտի թողարկման և տարեկան սպասարկման հետ կապված համապատասխան միջնորդավճարները: Մատյանում տրվում է հետևյալ ձևակերպումը.

Ամսաթիվ

Կանխիկ կամ հաճախորդի ընթացիկ հաշիվ
Հաճախորդի քարտային հաշիվ
Միջնորդավճար պլաստիկ քարտերից

Կան դեբետային քարտեր, որոնք օվերդրաֆտի օգտագործման իրավունք են տալիս իրենց քարտապաններին, այսինքն քարտապանին հնարավորություն է տրվում վճարումներ կատարել քարտային հաշվից՝ նույնիսկ համապատասխան միջոցների անբավարարության դեպքում: **Օվերդրաֆտի** օգտագործման առավելագույն սահմանաչափերը, տրամադրման պայմանները բանկերը սահմանում են ինքնուրույնաբար, ելնելով իրենց հաճախորդների սպասարկման առանձնահատկություններից:

Դիտարկենք օվերդրաֆտի հաշվառման մեկ գործառնություն: Ենթադրենք, հաճախորդի դեբետային քարտի մնացորդը կազմում է 5,000 դրամ, օվերդրաֆտի թույլատրելի առավելագույն սահմանաչափը 30,000 դրամ:

Ա բանկի հաճախորդը դեբետային քարտով կատարում է 15,000 դրամի փոխանցում Բ բանկի հաճախորդի հաշվին: Բանկի մատյանում տրվում է հետևյալ ձևակերպումը.

Ամսաթիվ

Տրամադրված օվերդրաֆտ 25,000
Հաճախորդի քարտային հաշիվ 5,000
Ա բանկի թղթակցային նոստրո հաշիվ 30,000
Փոխանցում քարտային հաշվից

Բանկը հետհաշվեկշռում վարում է օվերդրաֆտի առավելագույն սահմանաչափի և չօգտագործված մասի առանձնացված հաշվառում: Վերոհիշյալ օրինակի դեպքում բանկի հետհաշվեկշռում օվերդրաֆտի առավելագույն սահմանաչափը կկազմի 30,000 դրամ, իսկ չօգտագործված մասը՝ 5,000 դրամ (30,000 - 25,000):

13.3. Կրեդիտային քարտերի հաշվառումը

Ի տարբերություն դեբետային քարտի, կրեդիտային քարտը (վարկային) քարտապանին հնարավորություն է տալիս վճարումներ կատարել անկախ քարտային հաշվում միջոցների առկայությունից, այլ կերպ ասած կրեդիտային քարտը բանկի կողմից հաճախորդին ապագայում վարկ տրամադրելու պարտավորություն է ենթադրում:

Թողարկված, դեռևս չօգտագործված կրեդիտային քարտերի հաշվառումը նույնպես տարվում է հետհաշվեկշռում՝ «Չօգտագործված կրեդիտային քարտեր» համապատասխան հաշվով:

Կրեդիտային քարտի տրամադրման ժամանակ հաճախորդը նույնպես վճարում է քարտի թողարկման և տարեկան սպասարկման հետ կապված բանկի սակագներով սահմանված համապատասխան միջնորդավճարները: Մատյանում տրվում է հետևյալ ձևակերպումը.

Ամսաթիվ

Կանխիկ կամ հաճախորդի ընթացիկ հաշիվ

Միջնորդավճար պլաստիկ քարտերից

Վարկային քարտերի սպասարկման պայմանագրերով նույնպես սահմանվում են քարտերի առավելագույն սահմանաչափեր:

Դիտարկենք վարկային քարտով գործառնության հաշվառման մեկ օրինակ: Ենթադրենք, հաճախորդին տրամադրվել է վարկային քարտ, որի թույլատրելի առավելագույն սահմանաչափը կազմում է 30,000 դրամ:

Ա բանկի հաճախորդը վարկային քարտով կատարում է 5,000 դրամի փոխանցում Բ բանկի հաճախորդի հաշվին: Բանկի մատյանում տրվում է հետևյալ ձևակերպումը.

Ամսաթիվ

Վարկային քարտով տրամադրված գումար

5,000

Ա բանկի թղթակցային նոստրո հաշիվ

5,000

Բանկը հետհաշվեկշռում վարում է վարկային քարտի առավելագույն սահմանաչափի և չօգտագործված մասի առանձնացված հաշվառում: Վերոհիշյալ օրինակի դեպքում, բանկի հետհաշվեկշռում վարկային քարտի առավելագույն սահմանաչափը կկազմի 30,000 դրամ, իսկ չօգտագործված մասը՝ 25,000 դրամ (30,000 - 5,000):

13.4. Բանկումատով կատարված գործառնությունների հաշվառումը

Ինչպես արդեն նշվել է «Դրամական միջոցներ» գլխում, բանկումատները ավտոմատ գանձման սարքեր են, որոնց միջոցով հաճախորդները պլաստիկ քարտերով կանխիկ և անկանխիկ գործառնություններ են կատարում:

Դիտարկենք պլաստիկ քարտերով գործառնությունների հաշվապահական հաշվառման գրանցումների մի շարք տիպային օրինակներ.

Օրինակ 1. Դեբետային քարտով կանխիկ գումարի ստացում բանկումատից: Բանկումատը պատկանում է տվյալ քարտը թողարկող բանկին:

Մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

Ամսաթիվ

Հաճախորդի քարտային հաշիվ

Բանկումատի հաշիվ

Բանկի թողարկած քարտով կանխիկի ելք

Օրինակ 2. Կրեդիտային քարտով կանխիկ գումարի ստացում բանկումատից: Բանկումատը պատկանում է տվյալ քարտը թողարկող բանկին:

Մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

Ամսաթիվ

Վարկային քարտով տրամադրված գումար

Բանկումատի հաշիվ

Բանկի թողարկած քարտով կանխիկի ելք

Օրինակ 3. Դեբետային քարտով էլեկտրաէներգիայի վճարում բանկումատից: Բանկումատը պատկանում է տվյալ քարտը թողարկող բանկին: Էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպությունը հանդիսանում է քարտը թողարկող բանկի հաճախորդը.

Մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

Ամսաթիվ

Հաճախորդի քարտային հաշիվ

էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպության ընթացիկ հաշիվ

Բանկի թողարկած քարտով էլեկտրաէներգիայի վճարում

Օրինակ 4. Բ բանկի թողարկած քարտով կանխիկ գումարի ստացում Ա բանկի բանկումատից:

Ա բանկի մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

Ամսաթիվ

Նոստրո հաշիվ Հաշվարկային բանկում

Բանկումատի հաշիվ

Այլ բանկի թողարկած քարտի սպասարկում

Այն բանկի մատյանում, որը հանդիսանում է վճարային համակարգը սպասարկող Հաշվարկային բանկը¹, տրվում է հետևյալ գրանցումը.

Ամսաթիվ

¹ «Արմենիան Քարդ» վճարային համակարգի մասնակից բանկերի համար որպես Հաշվարկային բանկ հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը

Բ բանկի թղթակցային հաշիվ Հաշվարկային բանկում
Ա բանկի թղթակցային հաշիվ Հաշվարկային բանկում
Քարտի սպասարկում
Քարտը թողարկող Բ բանկի մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.
Դեբետային քարտի դեպքում
Ամսաթիվ
Հաճախորդի քարտային հաշիվ
Նոստրո հաշիվ Հաշվարկային բանկում
Բանկի թողարկած քարտի սպասարկում այլ բանկի միջոցով
Կրեդիտային քարտի դեպքում
Ամսաթիվ
Վարկային քարտով տրամադրված գումար
Նոստրո հաշիվ Հաշվարկային բանկում
Բանկի թողարկած քարտի սպասարկում այլ բանկի միջոցով

Ինքնաստուգման հարցեր

1. Նկարագրել դեբետային քարտը:
2. Նկարագրել վարկային քարտը:
3. Ի՞նչ է օվերդրաֆտը և ինչպե՞ս է այն հաշվառվում հաշվեկշռում:
4. Հաշվառման ի՞նչ նմանություններ և տարբերություններ ունեն դեբետային և վարկային քարտերը:
5. Ինչպե՞ս են հաշվառվում բանկոմատով կատարվող կանխիկ և անկանխիկ գործառնությունները:

ԳԼՈՒԽ 14. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ, ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է պայմանական ակտիվների, պայմանական պարտավորությունների և պահուստների նկարագիրը, նրանց հաշվառման մոտեցումները, բերված են սահմանումներ ՅՅՅՅՍ թիվ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ, պայմանական ակտիվներ» ստանդարտից:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողները կարողանան սահմանել պայմանական ակտիվները, պայմանական պարտավորությունները, հաշվառել **ակրեդիտիվները**, բանկային երաշխիքները, վարկային գծերի չօգտագործված մասը, ինչպես նաև օգտագործել պայմանական ակտիվների, պայմանական պարտավորությունների հետ կապված տերմինոլոգիա:

14.1. Ներածություն

Այս գլխում կներկայացվեն ֆինանսական այն գործառնությունները, որոնց գոյությունը հաստատվելու է մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, այսինքն ֆինանսական պահանջի իրականացումը կախված է որոշակի պայմանից: Այս կարգի գործիքների ճանաչումը և հաշվառման մոտեցումները նկարագրված են ՅՅՅՅՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ, պայմանական ակտիվներ» ստանդարտում:

Պայմանական ֆինանսական գործիքների թվին են դասվում ակրեդիտիվները, երաշխիքները, ֆինանսական պարտավորագրերը, ֆինանսական գրավները, ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոնային գործարքները, սվոպները և այլն: Այս բոլոր գործիքների գծով պահանջները կամ պարտավորությունները ծագում են միայն որոշակի պայմանի առկայության դեպքում: Այսպես.

- երաշխիքի գծով վճարում կիրականացնի միայն այն դեպքում, եթե այն կողմը, որի համար **երաշխիք** է տրված, չկարողանա մարել իր պարտավորությունները
- ակրեդիտիվի գծով վճարումներ կիրականացվեն պայմանագրով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում
- գրավադրված ֆինանսական ակտիվները բանկի սեփական ակտիվը կարող են դառնալ, եթե այդ ակտիվները վաճառող կողմը չկարողանա դրանք հետ գնել
- վարկային գիծը ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն կդառնա միայն դրա օգտագործման դեպքում և օգտագործված մասի չափով:

Բանկը հաճախ հանդիպում է անկանխատեսելի պարտավորությունների, որոնք կարող են առաջ բերել պայմանական պարտավորություններ կամ կորուստներ պատահական գործարքներից: Եթե նմանատիպ կորուստները հնարավոր է խելամտորեն գնահատել, բայց ոչ հավանական, ապա նրանք ճանաչվում են ոչ թե հաշվեկշռում, այլ հետհաշվեկշռում:

Պայմանական ակտիվը և Պայմանական պարտավորությունը անցյալ դեպքերի արդյունք են և նրանց գոյությունը հաստատվում է ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով: Նրանք ամբողջովին չեն վերահսկվում բանկի կողմից:

Պայմանական ակտիվը բացահայտվում է, երբ տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է: Նրանք չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, քանի որ դա կարող է հանգեցնել այնպիսի եկամտի ճանաչմանը, որը կարող է երբևէ չիրացվել: Երբ եկամտի ստացումը դառնում է որոշակի և հավանական, համապատասխան ակտիվն այլևս պայմանական չէ և ճանաչվում է հաշվեկշռում:

- *Պայմանական պարտավորությունը* հաշվապահական հաշվեկշռում չի ճանաչվում, եթե հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք կամ
- պարտականության գումարը հնարավոր չէ չափել բավարար արժանահավատությամբ:

14.2. Ակրեդիտիվներով գործառնությունների հաշվառումը

Ակրեդիտիվը դրամական պարտավորություն է, որը բանկն իր վրա է վերցնում հաճախորդի հանձնարարությամբ, այսինքն պարտավորվում է կատարել կամ ապահովել վճարումը ապրանք վաճառողին:

Ակրեդիտիվը բնորոշվում է որպես ներմուծողի և արտահանողի միջև պայմանագիր, ըստ որի բանկը, որը գործում է հաճախորդի պատվերով և նրա հրահանգների հիման վրա, երրորդ անձին կատարում է վճարում, ակցեպտավորում՝ ներկայացված փաստաթղթերի դիմաց:

Միջազգային հաշվարկներում ակրեդիտիվների կիրառումը կարգավորվում է «Փաստաթղթային ակրեդիտիվների միասնական կանոններ և կարգեր» փաստաթղթով (Uniform Customs and Practice for Documentary Credits, UCP), որը մշակվել է Միջազգային առևտրային պալատի կողմից:

Ակրեդիտիվի կատարման ժամանակ բանկերը գործ ունեն միայն փաստաթղթերի, և ոչ թե ապրանքների կամ ծառայությունների հետ, որի պատճառով ակրեդիտիվի բացման և պայմանների փոփոխման բոլոր հրահանգներում նշվում է այն փաստաթղթերի ճշգրիտ և հստակ թվարկումը, որոնց դիմաց կատարվում է վճարումը: Այսինքն, փաստաթղթերի ստացումը պայման է

հանդիսանում, որի դեպքում բանկը պարտավորություն կան պահանջ է ձեռք բերում ապրանք արտահանողի բենեֆիցիարի բանկի նկատմամբ:

Երբ ապրանք ներմուծողը բանկում բացում է ակրեդիտիվ, բանկի կողմից տրվում է հետևյալ գրանցումը.

Գործառնություն. Ա կազմակերպությունը բանկում բացում է ակրեդիտիվ և հանձնարարում 10,000 ԱՄՆ դոլար վճարել Բ կազմակերպությանը՝ նրանից համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո:

Մատյանում կտրվեն հետևյալ գրանցումները.

<i>Ամսաթիվ</i>			
1.	Բանկը Ա կազմակերպության հանձնարարությամբ բացում է ակրեդիտիվ. Ակրեդիտիվ	10,000	10,000
	Պարտավորություն ակրեդիտիվների գծով		10,000
	<u>Ակտիվ</u> Ակրեդիտիվ		<u>Պարտավորություն</u> Պարտավորություն ակրեդիտիվների գծով
	10,000		10,000
2.	Բանկը Բ կազմակերպությունից ստանում է համապատասխան փաստաթղթերը և կատարում է վճարում ակրեդիտիվի դիմաց. <i>Ամսաթիվ</i>		
	Պարտավորություն ակրեդիտիվների գծով	10,000	10,000
	Դրամական միջոցներ		10,000
	<u>Պարտավորություն</u> Պարտավորություն ակրեդիտիվների գծով	<u>Ակտիվ</u> Դրամական միջոցներ	
	10,000		10,000
3.	Բանկը ակրեդիտիվի գծով պահանջը մարում է Ա կազմակերպության պարտավորության հաշվին. <i>Ամսաթիվ</i>		
	Ա կազմակերպության ցպահանջ հաշիվ	10,000	10,000
	Ակրեդիտիվ		10,000
	<u>Պարտավորություն</u> Ա կազմակերպության ցպահանջ հաշիվ	<u>Ակտիվ</u> Ակրեդիտիվ	
	10,000		10,000

14.3. Բանկային երաշխիքների հաշվառումը

Երաշխիքը (երաշխավորությունը) պարտավորության կատարման ապահովման եղանակ է, որն է անձի փոխարեն դրամական կամ գույքային պարտավորություններ կատարելու խոստում: Երաշխիքը այլ սուբյեկտի ֆինանսական պարտավորությունը ստանձնելն է՝ այդ սուբյեկտի կողմից այն չմարելու դեպքում: Երաշխիքը տրամադրող սուբյեկտի համար չի համարվում ֆինանսական պարտավորություն, քանի դեռ այն կողմը, որի օգտին երաշխիք է տրվել, չի դրսևորել տվյալ պարտավորությունը կատարելու անկարողություն: Հետևաբար, մինչև տվյալ պայմանի առկայությունը երաշխիքների հաշվառումը տարվում է հետհաշվեկշռում:

Եթե պարտապանը չի կատարում պարտատիրոջ հանդեպ ստանձնած իր պարտավորությունը, ապա երաշխիք տվող սուբյեկտը վճարում է պարտապանի փոխարեն: Օրինակ,

Գործառնություն. Ա բանկը տվել է 20,000 դրամի երաշխիք Բ կազմակերպությանը՝ որպես Գ բանկից ստացված վարկի վերադարձի ապահովում: Բ կազմակերպությունը չի կատարում իր պարտականությունը Գ բանկի նկատմամբ:

Ա բանկի համար մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.

<i>Ամսաթիվ</i>			
1.	Ա բանկը վճարում է Գ բանկին երաշխիքի դիմաց՝ Բ կազմակերպության պարտավորությունը մարելու համար. Բանկային երաշխիքով կատարված վճարումներ	20,000	20,000
	Դրամական միջոցներ		20,000
	<u>Ակտիվ</u> Բանկային երաշխիքով կատարված վճարումներ	<u>Ակտիվ</u> Դրամական միջոցներ	
	20,000		20,000

14.4. Ֆինանսական պարտավորագրեր

Ֆինանսական պարտավորագրերը համաձայնագրեր են տնտեսավարող միավորների միջև, որոնցով սուբյեկտները պայմանավորվում են ապագայում իրականացվելիք որոշակի ֆինանսական գործարքների շուրջ: Սովորաբար պարտավորություններ ստանձնող կողմը պարտավորվում է որոշակի պայմանների կատարման դեպքում ֆինանսական միջոցներ տրամադրել մյուս կողմին:

Ի տարբերություն երաշխավորագրերի, երբ որոշակի պայմանի դեպքում երաշխավորություն տրամադրողը ստանձնում է այլ սուբյեկտի պարտավորությունը, պարտավորագրերի դեպքում համաձայնագրում նշված պայմանների իրականացման պատասխանատվությունը կրում է պարտավորագիր տրամադրողը: Ամենատարածված ֆինանսական պարտավորագրերը վարկային գծերն ու օվերդրաֆտներն են:

Վարկային գիծը և /կամ/ օվերդրաֆտը վարկառուին միջոցների մշտական առկայության երաշխիք է տալիս որոշակի գումարի սահմաններում և նախօրոք սահմանված ժամանակահատվածի ընթացքում: Այդ միջոցները ֆինանսական ակտիվ չեն համարվում մինչև վարկի փաստացի տրամադրումը:

Վարկային գծերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը հաշվառվում է բանկի հետհաշվեկշռում:

14.5. Պահուստների հաշվառումը

Պայմանական ակտիվների և պայմանական պարտավորությունների գծով ստեղծվում են պահուստներ: ԳՅԳՍ թիվ 37 ստանդարտը ներկայացնում է պահուստների ձևավորման համապատասխան հաշվապահական մոտեցումները:

ԳՅԳՍ 37-ը սահմանում է պայմաններ, որոնք պարտադիր են պահուստները ճանաչելու համար: Այդ պայմանները պետք է օգնեն կազմակերպությանը հետևողական և համադրելի ձևով պահուստները հաշվառելու համար:

Ընդհանուր առմամբ բոլոր պահուստները պայմանական են, քանի որ դրանք անորոշ են ժամկետների և գումարների առումով: Պահուստի չափման ժամանակ օգտագործվում են հետևյալ մոտեցումները.

ա) պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար պետք է հաշվի առնվեն այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում

բ) եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունը եական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա (զեղչված) արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար

գ) ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտավորությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, պետք է արտացոլված լինեն պահուստում, եթե բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալու

դ) ակտիվների ակնկալվող օտարումից շահույթները չպետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը:

Դիտարկենք պահուստի հաշվառման մեկ օրինակ.

Բանկը 2000թ. մարտի 1-ին հաճախորդի հետ կնքել է 50,000 դրամի վարկային գծի տրամադրման պայմանագիր: Վարկային գծի գումարը (սահմանաչափը) բանկը հաշվառում է հետհաշվեկշռում: Մարտի 31-ի դրությամբ հաճախորդը օգտագործել է 20,000 դրամը և բանկի հետհաշվեկշռում վարկային գծի չօգտագործված մասը կազմում է 30,000 դրամ:

Բանկն այս պայմանական ակտիվի գծով ճանաչում է պահուստ և տալիս է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

31 մարտի 2000թ.

Հատկացումներ պահուստին	300	
Պահուստ		300
<i>Վարկային գծի չօգտագործված մասի գծով ապագա կորստի ծախսերը գրանցելու համար (30,000 x 1%)</i>		

14.6. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Շատ բանկեր ներգրավվում են այնպիսի գործարքներում, որոնք տվյալ պահին հաշվապահական հաշվեկշռում չեն ճանաչվում որպես ակտիվներ կամ պարտավորություններ, սակայն առաջացնում են պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ: Նմանատիպ հետհաշվեկշռային հողվածները հաճախ ներկայացնում են բանկի գործունեության զգալի մասը և կարող են եական ազդեցություն ունենալ բանկի կողմից ստանձնած ռիսկերի աստիճանի վրա:

Դետևաբար, բանկի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք բացահայտվեն նաև պայմանական դեպքերը և չեղյալ չհամարվող պոտենցիալ պարտավորությունները:

Ֆինանսական հաշվետվություններում պայմանական պարտավորությունների և պայմանական ակտիվների վերաբերյալ յուրաքանչյուր դասի գծով պետք է բացահայտվի

պայմանական պարտավորության կամ ակտիվի բնույթի համառոտ նկարագրությունը, և եթե գործնականում հնարավոր է, նաև՝

- **Ֆինանսական հետևանքների գնահատականը**
- **արտահոսքերի գումարին կամ ժամկետներին վերաբերող անորոշությունների հայտանիշները**
- **փոխհատուցման հավանականությունը:**
 - Պահուստների գծով պետք է բացահայտվի հետևյալ տեղեկատվությունը.
 - ա) տվյալ ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքը
 - բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում կատարված պահուստավորումները, ներառյալ առկա պահուստների ավելացումները
 - գ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված (այսինքն՝ պահուստի հաշվին կատարված և նարված) գումարները
 - դ) չօգտագործված և տվյալ ժամանակաշրջանի ընթացքում հակադարձված գումարները
 - ե) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում զեղչված գումարների ավելացումը, որը կապված է ժամանակի անցնելու և զեղչման դրույքի փոփոխության հետ:

Ինքնաստուգման հարցեր

1. Տալ պայմանական պարտավորության սահմանումը:
2. Տալ պայմանական ակտիվի սահմանումը:
3. Բանկային երաշխիքը ո՞ր դեպքում է հաշվառվում բանկի հաշվեկշռում, ո՞ր դեպքում՝ հետհաշվեկշռում:
4. Բնութագրել ֆինանսական պարտավորագրերը:
5. Ներկայացնել պահուստների ճանաչման մոտեցումները:
6. Ի՞նչ հիմնական բացահայտումներ են տրվում պայմանական պարտավորությունների, պայմանական ակտիվների և պահուստների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում:

ԳԼՈՒԽ 15. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է աշխատավարձի և նրան հավասարեցված վճարների, համապատասխան հարկային պահումների հաշվարկման և հաշվառման գործընթացը:

Ուսանողների և հնտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողը կկարողանա հաշվարկել աշխատավարձ և հաշվառել հաշվեկշռում, հաշվարկել աշխատավարձից պահվող հարկերը և հաշվառել հաշվեկշռում:

15.1. Ներածություն

Սույն գլխում ներկայացվում են աշխատակիցների աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկման ու վճարման, ինչպես նաև համապատասխան ծախսերի ու հարկերի հաշվառման գործընթացը:

Աշխատավարձին հավասարեցված միջոցների մեջ ներառվում են արձակուրդային վճարները, չօգտագործված արձակուրդի փոխհատուցման գումարները, պարգևատրումները, հավելավճարները, նյութական օգնությունների գումարները, երեխայի ծննդյան հետ կապված միանգամյա նպաստները և այլ գումարներ:

15.2. Աշխատավարձից պահվող հարկերը և պարտադիր վճարները

Հաշվարկված աշխատավարձից և նրան հավասարեցված վճարներից զանձվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկերն ու պարտադիր վճարումները:

Ըստ վերոհիշյալ օրենքների, հարկվող եկամուտ չեն համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն աշխատանքից ազատման դեպքում վճարվող նպաստի գումարը, աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով վճարվող օգնության գումարները և նախածննդյան ու հետծննդյան անաշխատունակության թերթիկով հաշվարկված գումարները:

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հարկման ենթակա են անաշխատունակության թերթիկով հաշվարկված գումարները, բացառությամբ նախածննդյան և հետծննդյան անաշխատունակության թերթիկով հաշվարկված գումարների:

Գործատուները (ապահովադիրները) իրենց կողմից հաշվարկված սոցիալական վճարների հաշվին կատարում են ստորև թվարկված նպաստների վճարումները, որից հետո վերջնական գումարը փոխանցում են սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ:

Սոցիալական վճարների հաշվին կատարվող նպաստների ցանկը.

- ժամանակավոր անաշխատունակության, այդ թվում ընտանիքի հիվանդ անդամի նպաստ
- հղիության և ծննդաբերության միանվագ նպաստ
- երեխայի ծննդյան միանվագ նպաստ (2003թ. հոկտեմբերի 1-ից նպաստի չափը սահմանվել է 35,000 դրամ՝ նախկին 5,900 դրամի փոխարեն)
- թաղման նպաստ

15.2.1. Հարկերի և սոցիալական վճարների դրույքաչափերը¹

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հարկվող եկամուտը որոշելու համար աշխատակիցների համար հաշվարկված համախառն եկամուտներից կատարվում են համապատասխան նվազեցումներ. դրանք են՝

- անձնական նվազեցում՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 20,000 դրամի չափով
- աշխատակցի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների չափով. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով աշխատակցի հաշվին կատարվող սոցիալական վճարների գումարի չափը հաշվարկվում է աշխատողի ամսական աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների 3 տոկոսի չափով:
Համախառն եկամտից նվազեցումները կատարելուց հետո եկամտահարկի հարկումը իրականացվում է հետևյալ սանդղակով.
- մինչև 80,000 դրամը՝ հարկվող եկամտի 10 %-ը
- 80,000 դրամից ավելի՝ 8,000 դրամ գումարած 80,000 դրամը գերազանցող գումարի 20 %-ը:

Բանկերը, որպես գործատու, իրենց ծախսերի հաշվին, «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, յուրաքանչյուր աշխատակցի համար կատարում են նաև սոցիալական վճարներ, հաշվարկված նրանց ամսական համախառն եկամտի (առանց հաշվի առնելու նվազեցումները) նկատմամբ՝ հետևյալ սանդղակով.

¹ Դրույքաչափերը պարբերաբար վերանայվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ: Տեքստում օգտագործված են 2003թ. հոկտեմբեր ամսին գործող դրույքաչափերը:

- մինչև 20,000 դրամը՝ 5000 դրամի չափով
- 20,000-ից մինչև 100,000 դրամը՝ 5,000 դրամ գումարած 20,000 դրամը գերազանցող գումարի 15 %-ի չափով
- 100,000 դրամից ավելի՝ 17,000 դրամ գումարած 100,000 դրամը գերազանցող գումարի 5 %-ի չափով:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, հարկվում են եկամտահարկով ընդհանուր կարգով, կատարելով անձնական նվազեցումը միայն 20,000 դրամի չափով:

Աշխատավարձից եկամտահարկի պահումն իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում:

15.3. Աշխատավարձի և նրան հավասարեցված վճարների հաշվարկ և հաշվառում

Այս բաժնում ներկայացվում են աշխատավարձի, արձակուրդային վճարի, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության նպաստների հաշվարկման մեթոդիկան և հաշվառումը, ընդ որում հաշվարկը կատարվում է աշխատած օրերի համար: Վարձատրվող են համարվում նաև այն օրերը, երբ աշխատակիցը գտնվել է գործուղման մեջ:

15.3.1. Աշխատավարձի հաշվարկ

Աշխատավարձի հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր աշխատակցի համար սահմանված դրույքաչափի համաձայն: Աշխատավարձի մեկ օրականը որոշվում է դրույքաչափը բաժանելով վճարվող ամսվա աշխատանքային օրերի քանակի վրա:

Դիտարկենք աշխատավարձի հաշվարկման և հաշվապահական ձևակերպումների մեկ օրինակ.

Ենթադրենք, աշխատակցի դրույքաչափը 100,000 դրամ է: Նրա համար հաշվարկված աշխատավարձի գումարը որոշվում է հետևյալ կերպ. 100,000 դրամից կատարվում է երկու նվազեցում՝ 20,000 դրամ անձնական նվազեցումը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը՝ $100,000 \times 3\% = 3,000$ դրամ: Ստացված գումարը $(100,000 - 20,000 - 3,000 = 77,000)$ հարկվում է եկամտահարկի համապատասխան դրույքաչափով՝ $(77,000 \times 10\% = 7,700)$ դրամ: Հաշվարկված աշխատավարձի գումարից հանվում է եկամտահարկը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը, որպեսզի ստացվի վճարման ենթակա գումարը, որը կազմում է՝ $100,000 - 7,700 - 3,000 = 89,300$ դրամ: Բանկի մատյանում տրվում է հետևյալ հաշվապահական գրանցումը.

Աշխատավարձի գծով ծախս	100,000												
Պարտավորություն բյուջեի գծով	10,700 (7,700 + 3,000)												
Աշխատողներին վճարվելիք աշխատավարձ կամ աշխատակցի քարտային հաշիվ կամ դրամարկղ	89,300												
<table style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 50%; text-align: center;"><i>Կապիտալ</i></td> <td style="width: 50%; text-align: center;"><i>Պարտավորություն</i></td> </tr> <tr> <td style="text-align: center;">Աշխատավարձի գծով ծախս</td> <td style="text-align: center;">Պարտավորություն բյուջեի գծով</td> </tr> <tr> <td style="text-align: center;">100,000 </td> <td style="text-align: center;"> 10,700</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center; padding-top: 10px;"><i>Պարտավորություն</i></td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Պարտավորություն աշխատակցի գծով</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;"> 89,300</td> </tr> </table>		<i>Կապիտալ</i>	<i>Պարտավորություն</i>	Աշխատավարձի գծով ծախս	Պարտավորություն բյուջեի գծով	100,000	10,700	<i>Պարտավորություն</i>		Պարտավորություն աշխատակցի գծով		89,300	
<i>Կապիտալ</i>	<i>Պարտավորություն</i>												
Աշխատավարձի գծով ծախս	Պարտավորություն բյուջեի գծով												
100,000	10,700												
<i>Պարտավորություն</i>													
Պարտավորություն աշխատակցի գծով													
89,300													

Ինչպես երևում է գրանցումից, աշխատակցի աշխատավարձից պահված եկամտահարկը, սոցիալական պարտադիր վճարը, ինչպես նաև հաշվարկված վճարման ենթակա աշխատավարձի գումարը հավաքագրվում են նույն ծախսային հաշվում. դա ներկայումս գործող հաշվային պլանի «Ծախսեր անձնակազմի գծով» բաժնում գործող «Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ», «Պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձ» հաշիվների խումբն է:

Բանկի կողմից որպես գործատու հաշվարկված սոցիալական վճարները հաշվառվում են այլ ծախսային հաշվով, աշխատակիցների աշխատավարձի ծախսային հաշվից առանձնացված. հաշվային պլանի «Ծախսեր անձնակազմի գծով» բաժնում գործող «Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» հաշվով:

Վերոհիշյալ օրինակի տվյալներով բանկը որպես գործատու պետք է հաշվարկի 17,000 դրամի սոցիալական վճար $[17,000 = 5,000 + (100,000 - 20,000) \times 0.15]$: Սատյանում կտրվի հետևյալ հաշվապահական գրանցումը.

Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով	17,000
---	--------

Պարտավորություն բյուջեի գծով

7,000

Կապիտալ	Պարտավորություն
Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով	Պարտավորություն բյուջեի գծով
17,000	17,000

15.3.2. Արձակուրդային վճարի հաշվարկ

Արձակուրդային վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում օրական արձակուրդային վճարի չափը: Օրական արձակուրդային վճարի չափը հաշվարկելու համար արձակուրդ գնալու ամսվան նախորդող 12 ամսվա եկամուտների միջին ամսական գումարը բաժանվում է 21.3 գործակցի (ինգորյա աշխատանքային ռեժիմով աշխատելու դեպքում միջին ամսական աշխատանքային օրերի քանակը) վրա: Ստացված միջին օրական մեծությունը բազմապատկվում է արձակուրդային օրերի քանակով, որից հետո իրականացվում է հարկում և վճարման ենթակա գումարը փոխանցվում է աշխատողի համապատասխան հաշվին:

Գործատուներին թույլատրվում է նաև ամենամյա արձակուրդների հաշվարկման ժամանակ ամսական միջին աշխատավարձի չափը որոշելիս, նախորդ ամիսների հաշվարկի մեջ մտցնել գործող պաշտոնեական դրույքների նկատմամբ կատարված ավելացումներն ու բարձրացումները՝ տարածելով նաև այն ամիսների վրա, որոնց վրա դրանք չեն տարածվել:

Օրինակ արձակուրդային վճարի հաշվարկման վերաբերյալ.

Ենթադրենք, աշխատողը հերթական արձակուրդ է մեկնում 2003թ. հունիս ամսվա 15-ից՝ 20 աշխատանքային օր տևողությամբ: Աշխատողը արձակուրդ մեկնելու ամսվան նախորդող 12 ամիսների (2002թ. հունիսից մինչև 2003թ. մայիս) ընթացքում ստացել է 200,000 դրամի պարգևատրում, 30,000 դրամի ոչ աշխատանքային օրվա փոխհատուցում և արձակուրդային 8 օրերի համար 60,000 դրամ: Աշխատակցի աշխատավարձի չափը նախորդ 12 ամսվա ընթացքում չի փոխվել և կազմել է 300,000 դրամ: Արձակուրդային գումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

$$[(200,000 + 30,000 + 60,000)/12 + 300,000]/21.3 = 15,219 \text{ դրամ}$$

Արձակուրդի գումարը որոշվում է՝

$$\text{հունիս ամսվա } 11 \text{ օրվա համար } 11 \times 15,219 = 167,409 \text{ դրամ}$$

$$\text{հուլիս ամսվա } 9 \text{ օրվա համար } 9 \times 15,219 = 136,971 \text{ դրամ}$$

Ընդամենը՝ 304,380 դրամ:

Հարկումը կատարվում է հունիս և հուլիս ամիսների համար առանձին: Հունիս ամսվա համար կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և հարկի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսում վճարումների ընդհանուր գումարից և անձնական նվազեցումների չափից: Ենթադրենք, մինչև արձակուրդ գնալը աշխատողը հունիս ամսվա ընթացքում ունեցել է.

եկամուտ՝ 200,000 դրամի, որից կատարվել է հարկում հետևյալ չափով՝

$$\text{եկամտահարկ } [(200,000 - 20,000 - 6,000) - 80,000] \times 20\% + 8,000 = 26,800 \text{ դրամ}$$

$$\text{սոցապահովագրության վճար } 200,000 \times 3\% = 6,000 \text{ դրամ}$$

Գործատուի կողմից սոցապահովագրության վճար է կատարվել 22,000 դրամ:

Հաշվի առնելով հունիս ամսվա համար հաշվարկված 167,409 դրամի արձակուրդային գումարը՝ կատարվում է վերահաշվարկ (200,000 + 167,409) = 367,409 դրամի աճողական եկամտի նկատմամբ: Հունիս ամսվա համար հարկումների գումարը պետք է կազմի.

$$\text{սոցապահովագրության վճար } 367,409 \times 3\% = 11,022 \text{ դրամ}$$

$$\text{եկամտահարկ } [(367,409 - 20,000 - 11,022) - 80,000] \times 20\% + 8,000 = 59,277 \text{ դրամ}$$

Գործատուի կողմից սոցապահովագրության վճարը՝ (367,409 - 100,000) x 5% + 17,000 = 30,370 դրամ:

Աշխատակցից լրացուցիչ պետք է գանձվի՝

$$\text{սոցապահովագրության վճար } 11,022 - 6,000 = 5,022 \text{ դրամ}$$

$$\text{եկամտահարկ } 59,277 - 26,800 = 32,477 \text{ դրամ}$$

Գործատուի վճարը կավելանա՝ 30,370 - 22,000 = 8,370 դրամով:

Հուլիս ամսվա համար հաշվարկված 136,971 դրամի արձակուրդային վճարի նկատմամբ հարկումները կկազմեն.

$$\text{սոցապահովագրության վճար } 136,971 \times 3\% = 4,109 \text{ դրամ}$$

$$\text{եկամտահարկ } [(136,971 - 20,000 - 4,109) - 80,000] \times 20\% + 8,000 = 14,572 \text{ դրամ}$$

Գործատուի կողմից սոցապահովագրության վճարը (136,971 - 100,000) x 5% + 17,000 = 18,848 դրամ:

Այսպիսով, աշխատակցին վճարվող արձակուրդի գումարը կկազմի 248,200 դրամ: Չետազայում, երբ աշխատակիցը կվերադառնա արձակուրդից, վերոհիշյալ սխեմայով կկատարվի աշխատողի հուլիս ամսվա եկամուտների աճողական հաշվարկ և հարկի գումարները կճշգրտվեն:

15.3.3. Ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության նպաստների հաշվարկումը

Ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության նպաստները հաշվարկվում են աշխատակցի վաստակած գումարի նկատմամբ: Վաստակի մեջ մտցվում են աշխատանքի վարձատրության բոլոր այն տեսակները, որոնց նկատմամբ հաշվարկվել ու կատարվել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման համար հաշվի են առնվում հետևյալ 3 գործոնները.

- **աշխատանքային ստաժ**
- **խնամքի տակ գտնվող անձինք**
- **վաստակի չափը:**

Նպաստների հաշվարկման համար միջին ամսական վաստակը վերցվում է ամբողջությամբ, եթե այն չի գերազանցում Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափը, այսինքն մինչև 10,000 դրամը վերցվում է 100%-ը:

Նվազագույն աշխատավարձի տասնապատիկ չափը գերազանցող միջին ամսական վաստակի վաստակի մնացած մասը հաշվառվում է հետևյալ համամասնությամբ.

- **նվազագույն աշխատավարձի 10-ապատիկ գումարից մինչև 20-ապատիկ գումարի դեպքում՝ 80%-ի չափով**
- **20-ապատիկի և ավելիի դեպքում՝ 60%-ի չափով:**

Հաշվարկված նպաստը տրվում է աշխատակցին 100 %-ի չափով, եթե աշխատողն ունի 8 և ավելի տարվա աշխատանքային ստաժ կամ իր խնամքի տակ ունի 16 տարին (սովորողների՝ 18 տարին) չլրացած 3 և ավելի կամ 16 տարին չլրացած հաշմանդամ երեխա:

Հաշվարկված նպաստը տրվում է աշխատակցին 80 %-ի չափով, եթե աշխատողը ունի մինչև 8 տարվա աշխատանքային ստաժ:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստները հաշվարկվում են՝ ելնելով անաշխատունակությունը սկսելու ամսվան նախորդող 3 օրացուցային ամիսների միջին ամսական վաստակից: Ելնելով միջին ամսական վաստակից և նպաստի կիրառման համապատասխան չափից՝ որոշվում է ամսական նպաստի գումարը, որը բաժանելով հիվանդության (խնամքի կամ հղիության ու ծննդաբերության արձակուրդի) ամսվա օրացուցային օրերի թվի վրա, որոշվում է նպաստի օրական գումարի չափը, որը չի կարող գերազանցել 1,600 դրամը:

Անաշխատունակության թերթիկի հաշվարկման օրինակ.

Ենթադրենք, աշխատողը ներկայացրել է 5 օրվա անաշխատունակության թերթիկ: Նախորդ 3 ամսվա աշխատավարձի գումարը կազմել է 180,000 դրամ, որը բաժանած 3 ամսվա վրա, միջին ամսական մեծությունը կկազմի 60,000 դրամ:

$$10,000 \text{ դրամը } 100 \% = 10,000 \text{ դրամ}$$

$$20,000 - 10,000 = 10,000 \text{ դրամ } 80 \% = 8,000 \text{ դրամ}$$

$$60,000 - 10,000 - 10,000 = 40,000 \text{ դրամ } 60\% = 24,000 \text{ դրամ}$$

Ընդամենը միջին ամսական վաստակը $10,000 + 8,000 + 24,000 = 42,000$ դրամ (եթե աշխատողը ունի մինչև 8 տարվա ստաժ, ապա վերցնում ենք 42,000 դրամի 80%-ը, եթե 8 տարուց ավելի է, վերցնում ենք 100%)

Միջին օրական աշխատավարձը գտնելու համար ստացված միջին ամսական աշխատավարձը բաժանվում է հիվանդության ամսվա օրացուցային օրերի թվի վրա և բազմապատկվում է անաշխատունակության թերթիկի օրերի թվով: Վերոհիշյալ օրինակում, եթե հիվանդության ամիսը ապրիլ ամիսն է, որն ունի 30 օր, ապա 1 օրականը կկազմի՝ 42,000 դրամ : 30 օր = 1,400 դրամ (եթե 1 օրականը 1,600 դրամից ավելի է, ապա վերցվում է 1,600 դրամը որպես օրական վաստակ): Անաշխատունակության թերթիկի ընդհանուր գումարը կազմում է 1,400 դրամ x 5 օր = 7,000 դրամ, որից գանձվում է միայն եկամտահարկ:

Հղիության ու ծննդաբերության նպաստը տրվում է.

- **140 օր (70 օրացուցային օր նախածննդյան և 70 օրացուցային օր հետծննդյան արձակուրդների ժամանակաշրջանների համար)**
- **155 օր բարդ ծննդաբերության դեպքում (70 օրացուցային օր նախածննդյան և 85 օրացուցային օր հետծննդյան արձակուրդների ժամանակաշրջանների համար)**
- **180 օր՝ զույգ և ավելի երեխա ունենալու դեպքում (70 օրացուցային օր նախածննդյան և 110 օրացուցային օր հետծննդյան արձակուրդների ժամանակաշրջանների համար)**

Նախածննդյան և հետծննդյան արձակուրդի համար մեկ օրականը հաշվարկվում է նախորդ 3 ամիսների վաստակների միջինը բաժանած նախածննդյան և հետծննդյան արձակուրդի ամսվա օրացուցային օրերի թվի վրա և բազմապատկվում է անաշխատունակության թերթիկի օրերի թվով: Հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման ընդհանուր կարգով, սակայն այս դեպքում նպաստը հաշվարկվում է 100%-ով՝ անկախ աշխատանքային ստաժից և անաշխատունակության թերթիկի ընդհանուր գումարը 100 %-ով վճարվում է, առանց հարկվելու:

Նպաստների վճարումը իրականացվում է պարտադիր սոցիալական ապահովագրությանն ուղղված միջոցների հաշվին:

Ինքնաստուգման հարցեր

1. Թվարկել աշխատավարձին հավասարեցված տարրերը:
2. Ի՞նչ հարկատեսակներ են պահվում աշխատավարձից:
3. Ո՞ր եկամուտներից չի պահվում եկամտահարկ:
4. Եկամտահարկի և սոցիալական ապահովագրության վճարի ի՞նչ դրույքաչափեր են կիրառվում աշխատավարձի հաշվարկի ժամանակ:

ԳԼՈՒԽ 16. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների սահմանումը, հաշվապահական և հարկվող շահույթների տարբերությունները, հաշվեկշռում նրանց հաշվառման գործընթացը, ՀՀՀՅ թիվ 12 «Շահութահարկ» ստանդարտի պահանջները:

Ունակություններն ու հնտությունները՝ թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա տալ հետաձգված հարկի սահմանումը, հասկանալ հաշվապահական և հարկվող շահույթների տարբերությունները, հաշվառել հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները, տարբերակել ժամանակավոր և մշտական տարբերությունները:

16.1. Ներածություն

Սույն գլխում ներկայացվում են բանկերի կողմից հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվող շահութահարկի հաշվառման առանձնահատկությունները, ֆինանսական և հարկային հաշվառման տարբերությունները, տրվում է հետաձգված հարկի սահմանումը, ինչպես նաև հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների ճանաչման չափանիշները, նրանց հաշվապահական մոտեցումները: Ֆինանսական հաշվառման նպատակներով շահութահարկի հաշվապահական մոտեցումները նկարագրված են ՀՀՀՅ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

16.2. Հետաձգված հարկ

Ինչպես բոլոր շահույթ հետապնդող կազմակերպությունները, այնպես էլ բանկերը հանդիսանում են շահութահարկ վճարող սուբյեկտներ: Շահութահարկը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ: Հարկվող շահույթը բանկի համախառն եկամտի և նրանից կատարվող համապատասխան նվազեցումների¹ դրական տարբերությունն է: Ներկայումս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է շահութահարկի հաշվարկման 20% դրույքաչափ:

Ընթացիկ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով բյուջե վճարման (բյուջեից փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը կոչվում է ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկը հավասար է հաշվապահական շահույթին գումարած կամ հանած մշտական ու ժամանակավոր տարբերությունները և բազմապատկած շահութահարկի դրույքաչափով:

Երբ որոշակի գործարքների կատարման ժամանակ կիրառվում են հաշվառման այնպիսի մոտեցումներ, որոնք կիրառելի են ֆինանսական (հաշվապահական) նպատակով, սակայն ընդունելի չեն հարկային նպատակներով կամ ընդհակառակը (հարկային նպատակով ընդունելի են, սակայն ընդունելի չեն ֆինանսական նպատակով), արդյունքում առաջանում են տարբերություններ հաշվապահական շահույթի և հարկվող շահույթի միջև: Դա հանգեցնում է շահութահարկի տարբեր մեծությունների և առաջ է բերում հետաձգված հարկ:

Տարբերությունները լինում են մշտական և ժամանակավոր: Մշտական տարբերությունները բաժանվում են.

- **հաշվապահական նպատակով ճանաչված ծախսերի, որոնք հարկային նպատակով նվազեցումներ (ծախսեր) չեն համարվում**
- **նվազեցումներ, որոնք հաշվապահական նպատակով ծախս չեն ճանաչվում**
- **հաշվապահական նպատակով ճանաչված եկամուտներ, որոնք հարկային նպատակով եկամուտ չեն համարվում**
- **հարկվող եկամուտներ, որոնք հաշվապահական նպատակով եկամուտ չեն ճանաչվում:**

Մշտական տարբերությունների օրինակներ են հարկային նպատակով ծախս չհամարվող ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմաներից ավելի գործուղման ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, կադրերի պատրաստման (վերապատրաստման ծախսերը), փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը և այլն:

Մշտական տարբերությունները չեն ազդում հետագա ժամանակաշրջանների հաշվապահական և հարկվող շահույթի մեծությունների վրա և, հետևաբար, չեն հանգեցնում հետաձգված հարկի առաջացմանը:

Ժամանակավոր տարբերությունը ակտիվի (պարտավորության) հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև տարբերությունն է: Ժամանակավոր տարբերությունները կարող են լինել.

ա) հարկվող ժամանակավոր տարբերություններ, որոնք հանգեցնում են ապագա ժամանակաշրջաններում հարկվող գումարների առաջացմանը (երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը մեծ է հարկային բազայից)

բ) նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, որոնք հանգեցնում են ապագա ժամանակաշրջաններում հարկման նպատակով նվազեցվող (հանվող) գումարների առաջացմանը (երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը փոքր է հարկային բազայից, կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը մեծ է հարկային բազայից):

Ակտիվի հարկային բազան այն գումարն է, որը հարկման նպատակով նվազեցվելու (հանվելու) է ակտիվից ստացվելիք հարկվող տնտեսական օգուտներից:

¹ Համախառն եկամտի և նրանից նվազեցվող տարրերի ցանկը տրված է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում:

Պարտավորության հարկային բազան նրա հաշվեկշռային արժեքն է՝ հանած այդ պարտավորության հետ կապված ցանկացած գումար, որն ապագա ժամանակաշրջաններում հարկման նպատակով նվազեցվելու (հանվելու) է:

Այսպիսով, ժամանակավոր տարբերությունների հետևանքով բանկի հաշվեկշռում առաջանում է հետաձգված հարկ:

Հետաձգված հարկը ապագայում բյուջե վճարման կամ բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարն է: Հետաձգված հարկը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում է առանձին տողով որպես շահութահարկի գծով ծախս կամ փոխհատուցում:

16.3. Հետաձգված հարկային ակտիվ և հետաձգված հարկային պարտավորություն

Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջանում են հետաձգված հարկային ակտիվներ, որոնք իրենցից ներկայացնում են ապագայում բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներ:

Հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջանում են հետաձգված հարկային պարտավորություններ, որոնք իրենցից ներկայացնում են ապագայում բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարներ:

Ժամանակավոր տարբերություններ կարող են առաջանալ, օրինակ, երբ ֆինանսական հաշվառմամբ հիմնական միջոցների ամորտիզացիայի ժամկետները չեն համընկնում հարկային նպատակներով սահմանված նվազագույն ժամկետների հետ կամ հիմնական միջոցների վերագնահատման ժամանակ կիրառվել է այնպիսի մոտեցում, որն ընդունելի չէ հարկային օրենսդրությամբ:

Դիտարկենք պայմանական օրինակ, որի միջոցով կներկայացվեն հարկվող ժամանակավոր տարբերությունները ու դրանցով պայմանավորված հետաձգված հարկերի հաշվարկը և հաշվառումը:

Օրինակ, բանկը 2000թ. հունվարի 1-ին 20,000 դրամով ձեռք է բերել հիմնական միջոց, որի օգտակար ծառայության ժամկետը ֆինանսական նպատակներով գնահատվել է 4 տարի, իսկ հարկային նպատակներով որպես ամորտիզացիոն նվազագույն ժամկետ սահմանված է 2 տարի: Ամորտիզացիան, թե՛ հարկային, թե՛ ֆինանսական նպատակներով, հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով:

Պարզության համար ենթադրենք, որ 2000 - 2003թթ. համար բանկի եկամուտները և ծախսերը կազմել են նույն մեծությունը:

Հաշվարկը ներկայացնենք թիվ 11 աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 11. Հետաձգված հարկի հաշվարկ 1.

1	Տարիները	1	2	3	4
2	Եկամուտներ	50,000	50,000	50,000	50,000
3	Ծախսեր	20,000	20,000	20,000	20,000
4	Հաշվապահական շահույթ (տող2 - տող3)	30,000	30,000	30,000	30,000
5	Մաշվածություն հաշվապահական նպատակներով	5,000	5,000	5,000	5,000
6	Մաշվածություն հարկային նպատակներով	(10,000)	(10,000)	0	0
7	Հարկվող շահույթ (տող4 + տող5 - տող6)	25,000	25,000	35,000	35,000
8	Ընթացիկ հարկի գծով ծախս (տող 8 x 20%)	5,000	5,000	7,000	7,000

Ընթացիկ հարկը հաշվառելու համար մատյանում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Ընթացիկ հարկի գծով ծախս 5,000
 Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով 5,000

Այս հիմնական միջոցի մաշվածության հետ կապված ժամանակավոր տարբերությունները և առաջացող հետաձգված հարկը ներկայացնենք թիվ 12 աղյուսակով.

Աղյուսակ 12. Հետաձգված հարկի հաշվարկ 2.

1	Տարիները	1	2	3	4
2	Հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը տարեվերջին	15,000	10,000	5,000	0
3	Հիմնական միջոցի հարկային բազան տարեվերջին	10,000	0	0	0
4	Հարկվող ժամանակավոր տարբերություն տարեվերջին (տող2 - տող3)	5,000	10,000	5,000	0
5	Հետաձգված հարկային պարտավորություն տարվա սկզբին	0	1,000	2,000	1,000
6	Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում) (տող7 - տող5)	1,000	1,000	(1,000)	
7	Հետաձգված հարկային պարտավորություն տարեվերջին (տող 4 x 20%)	1,000	2,000	1,000	0

Ճանաչման ենթակա հետաձգված հարկային պարտավորության գումարը որոշելու համար տվյալ հաշվետու տարվա վերջի դրությամբ հետաձգված հարկային պարտավորության մնացորդից հանվում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ հետաձգված հարկային պարտավորության գումարը:

6-րդ տողում 1-ին և 2-րդ տարիների վերջի դրությամբ տարբերությունը դրական է, ուստի տարբերության չափով ավելացվում է հետաձգված հարկային պարտավորություն հաշիվը, 3-րդ տարվա վերջի դրությամբ տարբերությունը բացասական է, և հետաձգված հարկային պարտավորություն հաշիվը տարբերության չափով նվազեցվում է:

Մատյանում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

1-ին տարվա վերջ

Հետաձգված հարկի գծով ծախս 1,000
Հետաձգված հարկային պարտավորություն 1,000

2-րդ տարվա վերջ

Հետաձգված հարկի գծով ծախս 1,000
Հետաձգված հարկային պարտավորություն 1,000

3-րդ տարվա վերջ

Հետաձգված հարկային պարտավորություն 1,000
Հետաձգված հարկի գծով ծախս 1,000

Փորձենք կազմել այս բանկի ֆինանսական արդյունքների հաշվետվությունը 2000 - 2003թթ. համար.

Աղյուսակ 13. Ֆինանսական արդյունքների հաշվետվությունը 2000 – 2003թթ.

1	Տարիները	1	2	3	4
2	Եկամուտներ	50,000	50,000	50,000	50,000
3	Ծախսեր	20,000	20,000	20,000	20,000
4	Շահույթ մինչև հարկումը	30,000	30,000	30,000	30,000
5	Ընթացիկ հարկի գծով ծախս	5,000	5,000	7,000	7,000
6	Հետաձգված հարկի գծով ծախս	1,000	1,000	(1,000)	(1,000)

16.4. Բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Համաձայն ՀՀՀՀՍ թիվ 12 «Շահութահարկ» ստանդարտի, բանկը Ֆինանսական հաշվետվություններում հետաձգված հարկերի վերաբերյալ հիմնականում պետք է բացահայտի և ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը.

- հաշվեկշռում հարկային ակտիվները և հարկային պարտավորությունները պետք է ներկայացվեն այլ ակտիվներից առանձին
- հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է առանձնացվեն ընթացիկ հարկային ակտիվներից և պարտավորություններից
- շահութահարկի գծով ծախսը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի առանձին տողով:
- հետաձգված հարկի գումարները, ժամանակավոր տարբերության յուրաքանչյուր տեսակ պետք է բացահայտվի առանձին տողով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ե՞րբ են տարբերություններ առաջանում հաշվապահական շահույթի և հարկվող շահույթի միջև:
2. Բնութագրել հետաձգված հարկը:
3. Ի՞նչ է հետաձգված հարկային ակտիվը:
4. Ի՞նչ է հետաձգված հարկային պարտավորությունը:
5. Ո՞րն է ակտիվի կամ պարտավորության հարկային բազան:

ԳԼՈՒԽ 17. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է հաշվեկշռի «Կապիտալ» բաժնի տարրերը, նրանց հաշվառման առանձնահատկությունները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ տալ կապիտալի սահմանումը համաձայն միջազգային ստանդարտների, թվարկել կապիտալի տարրերը, կատարել մատյանի գրանցումներ կապիտալի առանձին տարրերի մասնակցությամբ, նկարագրել, թե ինչ բացահայտումներ են տրվում կապիտալի մասին ֆինանսական հաշվետվություններում, օգտագործել կապիտալի մասին տերմինոլոգիա:

17.1. Ներածություն

Հաշվեկշռում պարտավորություններին անմիջապես հաջորդում է կապիտալը: Կապիտալ ասելով հաշվապահները սովորաբար հասկանում են բաժնետիրական (կանոնադրական) կապիտալ (Stockholders equity): Սակայն բանկերի դեպքում կապիտալն իրենից ավելի լայն հասկացություն է ներկայացնում, որը քննարկված է ստորև:

Միջազգային ստանդարտների համաձայն կապիտալը սահմանվում է որպես՝ ընդհանուր ակտիվներից հանած ընդհանուր պարտավորություններ կամ զուտ ակտիվներ:

Կապիտալի հիմնական տարրերն են.

- բաժնետերերի կողմից կատարված ներդրումները (Share Capital)
- բաժնետոմսերի հավելավճար, որն իրենից ներկայացնում է բաժնետոմսերի անվանական արժեքի և նրանց ձեռք բերման համար վճարված գնի տարբերությունը (Capital Surplus or Capital paid-in excess of par value)
- չբաշխված շահույթ (Retained Earnings):
Կապիտալի առաջին 2 տարրերը հանդիսանում են սեփական միջոցների համալրման արտաքին աղբյուր, իսկ 3-րդ տարրը՝ ներքին աղբյուր:
Իհարկե, կարգավորման և վերահսկողական պահանջներից ելնելով, բանկի ընդհանուր (սեփական) կապիտալի համար սահմանված է այլ կառուցվածք՝ համապատասխան նորմատիվային սահմանաչափերով: Կարգավորման պահանջներից ելնելով, բանկի ընդհանուր կապիտալը բաղկացած է հետևյալ մասերից.
- հիմնական կապիտալ¹
- լրացուցիչ կապիտալ:

Առաջինը ներառում է բանկի կանոնադրական հիմնադրամը, որը ձևավորվում է նրա բաժնետերերի (փայտտերերի) ներդրումներից, բանկի ստացած շահույթը, նրանից ձևավորված պահուստները, բաժնետոմսերի անվանական արժեքի և իրացման գնի տարբերությունը (աժիո կապիտալ), երկրորդը ներառում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստները, երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, այլ պահուստներ:

Կապիտալի առանձին տարրերը մշտապես ճշտվում են կապված ֆինանսական շուկայում ի հայտ եկող նոր երևույթների և ընդհանուր տեսական մոտեցումների զարգացման հետ: Ընդհանուր առմամբ, կապիտալի տարրերի կազմը պետք է արտահայտի նրա էությունը, համաձայն որի այն հանդիսանում է բանկի բոլոր պարտավորությունների երաշխիքը և իր նվազման հաշվին չեզոքացնում է առաջացող հնարավոր բոլոր կորուստները:

17.2. Բաժնետիրական (կանոնադրական) կապիտալ

Բաժնետիրական կապիտալը ձևավորվում է թողարկված և իրացված բաժնետոմսերի արժեքից: Բաժնետիրական բանկի կանոնադրության մեջ նրա գրանցման ժամանակ պարտադիր կերպով նշվում է բաժնետոմսերի այն առավելագույն քանակը, որը թույլատրված է թողարկել տվյալ ընկերության կողմից և անվանվում է բաժնետոմսերի *թողարկման թույլատրելի քանակություն* (Authorized Stock): Կանոնադրության մեջ նշվում է նաև մեկ բաժնետոմսի անվանական արժեքը (Per Value): Բաժնետոմսերը լինում են արտոնյալ (Preferred Stock) և հասարակ (Common Stock), կարող են վաճառվել անվանական արժեքով կամ անվանական արժեքից բարձր: Իրացված բաժնետոմսերը կարող են հետ գնվել նույն՝ թողարկող բանկի կողմից (Re-Purchased own share), իհարկե հաշվի առնելով օրենսդրական պահանջները²:

¹ Կարգավորման նպատակներով հաշվարկվող նորմատիվային հիմնական կապիտալից կատարվում են որոշ նվազեցումներ, որոնք այստեղ չեն քննարկվում:

² Գործող օրենսդրությամբ բանկերին թույլատրվում է հետ գնել իրենց բաժնետոմսերը միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է տվյալ բանկի նկատմամբ ճախսկինուն չկատարված պարտավորության հետևանքով առաջացած կորուստները կանխելու համար:

17.3. Մատյանի գրանցումներ կապիտալի առանձին տարրերի գործառնությունների համար

Գործառնություն 1. **A բանկը թողարկել է 40,000 բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ \$10, բաժնետոմսերը իրացվել են \$15-ով:**
 Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի և իրացման գնի տարբերությունը կոչվում է հավելավճար և պետք է հաշվառվի առանձին:
 Մատյանում կկատարվեն հետևյալ գրանցումները.

Անսաթիվ Կանխիկ	600,000	
Բաժնետիրական կապիտալի անվանական արժեք		400,000
Կապիտալի հավելավճար		200,000
<i>Թողարկված բաժնետոմսերի իրացման գրանցում</i>		

Հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.

Ակտիվներ		
Կանխիկ		600,000
Կապիտալ		
կանոնադրական կապիտալ		400,000
հավելավճար		200,000

Գործառնություն 1.1. **Բանկը 1995թ. մարտի 1-ին հետ է գնում (Repurchase) 100 հատ սեփական բաժնետոմս՝ \$16-ով:**
 Հետգնման ժամանակ կատարվում է հետևյալ գրանցումը.
01.03.1995թ.

Հետ գնված սեփական բաժնետոմսեր Կանխիկ (կամ դեբիտորական պարտք)	1,600	1,600
<i>Բաժնետոմսի հետգնում</i>		
Հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը. <i>Հաշվեկշիռ 01.03.1995թ.</i>		

Ակտիվներ		
Կանխիկ		598,400
Կապիտալ		
կանոնադրական կապիտալ		400,000
հավելավճար		200,000
հետգնված բաժնետոմսեր		(1,600)

Գործառնություն 1.2. **Բանկը 1995թ. մայիսի 10-ին կրկին վաճառում է ետգնված բաժնետոմսերից 40 հատ՝ \$17-ով:**
 Հետգնված բաժնետոմսի վաճառքի և ձեռքբերման գնի դրական տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար հետգնված սեփական բաժնետոմսերից (Paid-in Capital from Treasury Stock):

Մատյանում կկատարվի հետևյալ գրանցումը.
10.05.1995թ.

Կանխիկ	680	
Հետգնված սեփական բաժնետոմսեր		640
Հետգնված բաժնետոմսերի հավելավճար		40
<i>Հետգնված սեփական բաժնետոմսերի վաճառք</i>		
Հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը. <i>Հաշվեկշիռ 10.05.1995թ.</i>		

Ակտիվներ		
Կանխիկ		599,080
Կապիտալ		
կանոնադրական կապիտալ		400,000
Հավելավճար		200,040
Հետգնված բաժնետոմսեր		(960)

Գործառնություն 2. **1994թ. հունիսի 30-ին բաժնետերերի ընդհանուր ժողովը հայտարարում է դիվիդենտների վճարում օգոստոսի 5-ին, \$150,000-ի չափով՝ մինչև հուլիսի 15-ը գրանցված բաժնետերերի համար:**
 Դիվիդենտների (չահաբաժինների) վճարումը բանկի կողմից կատարվում է չբաշխված շահույթից:
 Դիվիդենտների հաշվառման համար պետք է բացահայտել 3 անսաթիվ.

- հայտարարման ամսաթիվ (Date of Declaration), երբ բաժնետերերի ժողովը հայտարարում է դիվիդենտ վճարելու մասին և ընկերության մոտ առաջանում է պարտավորություն դիվիդենտ վճարելու մասին
 - գրանցման ամսաթիվ (Date of Record), բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքի (կամ դիվիդենտի ստացման իրավունքի) սահմանում, որոշում
 - վճարման ամսաթիվ (Date of Payment), գրանցված բաժնետերերին դիվիդենտի վճարում Առաջին և երրորդ ամսաթվերը պահանջում են մատյանի գրանցում, իսկ 2-րդ ամսաթիվը ոչ:
- Չետևաբար, գործառնություն 2-ի համար մատյանում (ըստ 1-ին ամսաթվի) կատարվում է հետևյալ գրանցումը.
- 30.09.1994թ.
- | | | |
|--------------------|---------|---------|
| Չբաշխված շահույթ | 150,000 | |
| Վճարվելիք դիվիդենտ | | 150,000 |
- Հայտարարված դիվիդենտների գրանցում, օգոստոսի 5-ին վճարման պայմանով**
- Դիվիդենտների փաստացի վճարման ժամանակ (ըստ 3-րդ ամսաթվի) մատյանում տրվում է հետևյալ գրանցումը.
- 05.08.1994թ.
- | | | |
|--------------------------------|---------|---------|
| Վճարվելիք դիվիդենտ
 Կանխիկ | 150,000 | 150,000 |
|--------------------------------|---------|---------|
- Պարտավորության մարում կանխիկ վճարումով**

17.4. Կապիտալի բացահայտումներ ֆինանսական հաշվետվություններում

Բանկի հաշվեկշռում կապիտալի կառուցվածքի վերաբերյալ պարտադիր կերպով պետք է ներկայացվեն ու բացահայտվեն հետևյալ հոդվածները.

- համալրված կանոնադրական հիմնադրամի մեծությունը
- հավելավճարով իրացված բաժնետոմսերի մեծությունը
- հետզնված բաժնետոմսերի մեծությունը
- թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը
- չբաշխված շահույթի և նրա հաշվին ձևավորված պահուստների մեծությունը
- վերագնահատման պահուստների մեծությունը

Կապիտալի տարրերի հետ կապված այլ բացահայտումներ (բաժնետոմսերի տեսակ, անվանական արժեք, վճարված դիվիդենտներ և այլն) տրվում են կապիտալի փոփոխության վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպե՞ս է սահմանվում կապիտալը համաձայն հաշվառման միջազգային սկզբունքների:
2. Նկարագրել ընդհանուր կապիտալի տարրերը ըստ կարգավորման պահանջների:
3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի դիվիդենտների հաշվառումը:
4. Ինչպե՞ս են հաշվառվում հետզնված բաժնետոմսերը հաշվեկշռում:
5. Ի՞նչ բացահայտումներ են տրվում կապիտալի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում:

ԳԼՈՒԽ 18. ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացվում է դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակը, կառուցվածքը, առանձին տարրերի, հաշվետվության կազմման մեթոդների նկարագրությունը, ԶՀՀՅՍ թիվ 7 ստանդարտի պահանջները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա՝ հասկանալ դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակը, գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունից ստացված դրամական հոսքերի տարբերությունները, կազմել դրամական հոսքերի հաշվետվություն ուղղակի և անուղղակի մեթոդներով:

18.1. Ներածություն

Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության անմիջական նպատակը որոշակի ժամանակահատվածի համար դրամական մուտքերի և դրամական վճարումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին: Այդ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս նրանց գնահատել բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ վճարունակությունը, վարկեր տրամադրելու, շահաբաժիններ վճարելու կարողությունը, ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների նկատմամբ պահանջը և այլն:

Դրամական միջոցները ներառում են կանխիկը, կանխիկին հավասարեցված այլ միջոցները և թղթակցային հաշիվները բանկերում: Միջազգային պրակտիկայում կանխիկին հավասարեցված միջոցները ներառում են նաև կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները՝ պետական արժեթղթեր, վաճառքի համար մատչելի և առևտրական նպատակով պահվող արժեթղթեր և այլն:

ԶՀՀՅՍ թիվ 7 ստանդարտը մանրամասն ներկայացնում է դրամական միջոցների և նրանց համարժեքների սահմանումները, դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կառուցվածքը, համապատասխան տարրերի մեթոդաբանությունը, ծանոթագրությունների կարևորությունը:

18.2. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կառուցվածքը

Դրամական հոսքերի հաշվետվության պահանջվող կառուցվածքը հետևյալն է.

Բանկի անվանումը

Դրամական հոսքերի հաշվետվություն

31.12.20xx

հազ. դրամ

Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	xx
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	xx
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	xx
Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցների զուտ աճ (նվազում)	xx
(Ծանոթագրություն. հաջորդ երկու տողերը ներկայացված են կանխիկի մնացորդները ժամանակաշրջանի սկզբին և վերջին համեմատադրելու համար)	
Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցներ տարեսկզբին	xx
Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցներ տարեվերջին	xx

Գործառնական գործունեությունը բանկին եկամուտ բերող հիմնական գործունեությունն է: Այն ներառում է դրամական միջոցների հոսքերը.

- եկամտի և ծախսերի տարրերից (տոկոսային, ոչ տոկոսային)
- գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից, այդ թվում
- վաճառքի համար մատչելի և առևտրական նպատակով պահվող արժեթղթերի վաճառքից կամ գնումից
- վարկերի տրամադրումից կամ մայր գումարի մարումից
- ներգրավված կամ մարված ավանդներից
- հետգնման պայմանագրերով գործառնություններից և այլն

Ներդրումային գործունեությունը երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն է և օտարումը, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ:

Ներդրումային գործունեությունը ներառում է դրամական հոսքերը.

- ներդրումային արժեթղթերի գնումից, վաճառքից կամ մարումից
- այլ բանկերում տեղաբաշխված ավանդների տրամադրումից, մարումից
- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գնումից, վաճառքից
- այլ ակտիվների գնումից և վաճառքից:

Ֆինանսական գործունեությունը կապված է սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխությունների հետ:

- Ֆինանսական գործունեությունը ներառում է դրամական հոսքերը.
- բաժնետոմսերի թողարկումից
- շահաբաժինների վճարումից
- բանկերից ստացված վարկերի ներգրավումից, վերադարձից
- այլ փոխառությունների ներգրավումից, վերադարձից և այլն:

Բաժանման այս սկզբունքները ներառում են եկամուտների և ծախսերի հաշվետվության և հաշվեկշռի բոլոր տարրերը, բացառությամբ կուտակված ակտիվների և պարտավորությունների,

կանխավճարված եկամուտների և ծախսերի: Դրամական հոսքերի հաշվետվության նպատակը կուտակային սկզբունքից տվյալների փոխանցումն է կանխիկի սկզբունքին:

Դրամական հոսքերի հաշվետվությանը կից պարտադիր ներկայացվում են ծանոթագրություններ ոչ դրամական այն գործառնությունների վերաբերյալ, որոնք կապված չեն դրամական հոսքերի հետ, սակայն կրում են գործառնական, ներդրումային կամ ֆինանսական բնույթ: Այդպիսի գործառնություններ են համարվում, օրինակ, վարկերի մարումը գրավների տնօրինման միջոցով, ակտիվների ձեռքբերումը (վաճառքը) հետաձգված վճարումով, բանկի կողմից թողարկված պարտատոմսերի մարումը բաժնետոմսերի թողարկման հաշվին և այլն:

18.3. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության մոդելը

Կանխիկի մեթոդով հաշվապահական հաշվառման վարման դեպքում դրամական հոսքերի հաշվետվության կազմման կարիքը չի զգացվում, քանի որ կանխիկ հոսքերը երևում են հաշվեկշռում և եկամուտների ու ծախսերի հաշվետվությունում: Կուտակման սկզբունքով հաշվապահական հաշվառման դեպքում դրամական հոսքերի հաշվետվությունը կազմելու համար կիրառվում են եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ու հաշվեկշռում ներկայացված տվյալները: Այս մոտեցման քայլերը հետևյալներն են.

1. Եկամտի և ծախսի յուրաքանչյուր տարր կուտակային սկզբունքից բերել կանխիկի սկզբունքի՝ դրամական հոսքերի վրա նրանց ազդեցությունը որոշելու համար:
2. Վերլուծել հաշվեկշռի կանխիկից և 1-ին քայլում օգտագործված տարրերից տարբեր տարրերը՝ դրամական հոսքերի վրա դրանց ազդեցությունը պարզելու համար:

Հաշվապահական Հաշվառման հիմնական հավասարումը կարող է օգնել հասկանալու դրամական հոսքերի վերոհիշյալ մոդելը.

Կանխիկ = **Պարտավորություններ + (Կանոնադրական կապիտալ + Կապիտալի հավելավճար + Զբաղիչված շահույթ) – կանխիկից տարբեր ակտիվներ**

Քանի որ դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացվում է դրամական հոսքերի փոփոխությունը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, ապա նշված հավասարումը նույնպես պետք է դիտարկել փոփոխություններով:

ΔԿանխիկ = **ΔՊարտավորություններ + (ΔԿանոնադրական կապիտալ + ΔԿապիտալի հավելավճար + ΔԶբաղիչված շահույթ) - ΔԿանխիկից տարբեր ակտիվներ**

Այս հավասարումը կոչվում է դրամական հոսքերի հավասարում:

Զբաղիչված շահույթի փոփոխությունը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Չուտ եկամուտ – Վճարված դիվիդենտներ – Կապիտալի հավելավճարին փոխանցված գումարներ

Քանի որ չբաղիչված շահույթի փոփոխությունը ներառում է զուտ եկամուտը, ապա կանխիկ հաշիվների փոփոխության որոշման համար պետք է ուսումնասիրել եկամուտների և ծախսերի հաշվետվությունն ու հաշվեկշռի տարրերը:

18.4. Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կազմումը

Դրամական հոսքերի հաշվետվության կազմման համար նախորդ գլխում նշված դրամական հոսքերի հաշվարկման երկու քայլերն այժմ կքննարկվեն ավելի մանրամասն.

1. որոշել կանխիկի զուտ փոփոխությունը (հաշվետվության նպատակը)
2. որոշել գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքերը (ներառում է (1) քայլն ամբողջությամբ և (2) քայլը՝ մասամբ)
3. որոշել ներդրումային գործունեությունից ստացվող զուտ դրամական հոսքերը (ներառում է (2) քայլի մի մասը)
4. որոշել ֆինանսական գործունեությունից ստացվող զուտ դրամական հոսքերը (ներառում է (2) քայլի մի մասը):

Այս քայլերի իրագործման համար պահանջվող տվյալները վերցվում են համեմատական հաշվեկշռից և եկամուտների ու ծախսերի հաշվետվությունից: Քանի որ ֆինանսական հաշվետվությունների հաշիվների մնացորդները ներկայացնում են հաշիվների զուտ փոփոխությունը, ապա հաճախ հարկ է լինում լրացուցիչ տեղեկատվություն հավաքել այդ մնացորդները ձևավորող գործառնությունների վերաբերյալ:

Այդուսակներ 14 - 27-ում ներկայացվում են «Բ բանկի» 20x5 թ. տվյալները, որոնց հիման վրա պետք է կազմել դրամական հոսքերի հաշվետվությունը: Պարզության համար ենթադրվել է, որ բանկը 20x4թ. չի գործել, տոկոսները չեն կուտակվել օրական կտրվածքով և բանկն իրականացրել է հետևյալ գործառնությունները.

- Գործառնություն 1. 10 օգոստոսի, «Բ բանկը» թողարկել է 50,000 բաժնետոմս, յուրաքանչյուրը \$1 անվանական արժեքով, իրացվել է \$50,000 կանխիկով
- Գործառնություն 2. 24 օգոստոսի, ներգրավվել է \$40,000 կանխիկով ցապահանջ ավանդներ
- Գործառնություն 3. 30 օգոստոսի, ձեռք են բերվել համակարգիչներ՝ \$3,000 հետաձգված վճարումով
- Գործառնություն 4. 30 օգոստոսի, վճարվել է \$10,000 կանխիկով ներդրումային արժեթղթերի համար
- Գործառնություն 5. 01 սեպտեմբերի, ներգրավվել է \$60,000 կանխիկով միջբանկային վարկ
- Գործառնություն 6. 15 սեպտեմբերի, տրամադրվել է \$30,000 վարկ կանխիկով

Գործառնություն 7.	30 սեպտեմբերի, վճարվել է \$200 միջբանկային վարկի տոկոսավճար	
Գործառնություն 8.	15 նոյեմբերի, ստացվել է \$400 տոկոսավճար վարկի դիմաց իրականացվել են նաև ժամանակաշրջանի վերջին հետևյալ ճշգրտող գրանցումները.	
Գործառնություն 1.	31 դեկտեմբերի, հաշվեգրվել է \$700 տոկոսային եկամուտ	
Գործառնություն 2.	31 դեկտեմբերի, \$300 հատկացումներ են կատարվել վարկերի կորուստների պահուստին	
Գործառնություն 3.	31 դեկտեմբերի, հաշվարկվել է \$200 մաշվածության ծախս համակարգիչների գծով	
Ստորև ներկայացված են դրամական հոսքերի հաշվետվության կազմման չորս քայլերը:		
Քայլ 1. Որոշել կանխիկի զուտ փոփոխությունը		
Այս պարզ հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ.		
Կանխիկ և կանխիկին համարժեք միջոցներ տարեվերջին		110,200
Հանած կանխիկ և կանխիկին համարժեք միջոցներ տարեկազմին		0
Կանխիկ և կանխիկին համարժեք միջոցների զուտ ամ		110,200

Հաջորդ երեք քայլերը ցույց կտան, թե այդ գումարի որ մասն է ձևավորվել գործառնական, որը ներդրումային, և որը ֆինանսական գործունեություններից:

Քայլ 2. Գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշումը

Գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերը որոշելու երկու մեթոդ կա՝ (1) անուղղակի կամ համեմատագրման մեթոդ (Indirect Method), (2) ուղղակի կամ եկամուտների և ծախսերի հաշվետվության մեթոդ (Direct Method): Աղյուսակ 27-ն ընդհանրացնում է ուղղակի և անուղղակի մեթոդների տարբերությունները:

ՀՀ կենտրոնական բանկը նախընտրել է ուղղակի մեթոդը, որովհետև այն ապահովում է օգտակար տեղեկատվություն վարկավորման որոշումների կայացման համար: Բանկերի տարեկան ֆինանսական հաշվետվություններում սովորաբար առաջնայնություն է տրվում անուղղակի մեթոդին, որովհետև այն ապահովում է կապը եկամուտների հաշվետվության և հաշվեկշռի հետ, ծանոթ է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին և ընդհանուր առմամբ քիչ աշխատատար է: Ամեն դեպքում, եթե գործառնական գործունեությունից ձևավորված դրամական հոսքերը որոշելու համար կիրառվել է ուղղակի մեթոդը, ապա շահույթի և գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքերի համեմատագրումը (անուղղակի մեթոդի կողմից տրվող տեղեկատվություն) պետք է տրվի որպես լրացուցիչ ծանոթագրություն:

Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքերի որոշումն անուղղակի մեթոդով.

Անուղղակի մեթոդը շահույթը համեմատագրում է գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքերին: Դա կատարվում է հետևյալ քայլերի միջոցով.

1. զուտ եկամուտը (շահույթը) կուտակային բազայից վերածել կանխիկ բազայի
2. ավելացնել կորուստները և նվազեցնել օգուտները, որոնք չեն առաջացրել դրամական միջոցների ներհոսք (արտահոսք), սակայն հանդիսանում են գործառնական գործունեության տարր
3. ճշգրտել շահույթը գործառնական ակտիվներից և պարտավորություններից առաջացած զուտ դրամական հոսքերով

Քայլ 1. Չուտ եկամտի (շահույթի) կուտակային բազայից վերափոխումը կանխիկ բազայի:

«Բ բանկի» օրինակի վրա վերափոխման գործընթացը ներկայացված է աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17-ի (1) և (2) սյուները վերցված են «Բ բանկի» եկամուտների հաշվետվությունից: (3) սյունակի ինֆորմացիան ստացված է եկամուտների հաշվետվությունից և հաշվեկշռից: (4) սյունակը ստացվում է (2) և (3) սյունակների գումարից:

Վերափոխման գործընթացը ներկայացված է ստորև.

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ: «Հաշվեգրված ստացվելիք տոկոսները» ակտիվային հաշիվ է և փոխկապված է շահույթի հետ: Օրինակում հաշվեգրված տոկոսագումարների \$700 ավելացումը ստացվում է հետևյալ գործառնությամբ.

31 դեկտեմբերի 20x5

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	700	
Տոկոսային եկամուտ		700

Տարեվերջին կուտակված տոկոսները գրանցելու համար

Մատյանի գրանցումը ցույց է տալիս, որ շահույթն աճել է \$700 տոկոսային եկամտով, որի համապատասխան դրամական հոսքը չի եղել: Հետևաբար շահույթը պետք է նվազեցվի այդ գումարի չափով:

Շահույթը պետք է նվազեցվի «հաշվեգրված ստացվելիք տոկոսներ» հաշվի աճի չափով, որպեսզի այն կուտակայինից վերափոխվի կանխիկի:

«Հաշվեգրված ստացվելիք տոկոսները» կարող են նվազել, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կուտակված տոկոսները և ժամանակահատվածի սկզբի հաշվեգրումների մնացորդի որոշ մասն արդեն հավաքագրվել է: Այս դեպքում շահույթը պետք է ավելացվի «Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ» հաշվի նվազման գումարի չափով:

Հաշվեգրված վճարվելիք տոկոսներ: «Հաշվեգրված վճարվելիք տոկոսները» կուտակված պարտավորություններ են, որոնք փոխկապված են շահույթի հետ: «Բ բանկի» օրինակում կուտակված վճարվելիք տոկոսների հաշվում չկա մնացորդ, սակայն եթե մնան գրանցում լինել, ապա այն կուտենար հետևյալ տեսքը.

<i>Ամսաթիվ</i>		
Տոկոսային ծախս		xxx
Հաշվեգրված վճարվելիք տոկոսներ		xxx

Մատյանի այս գրանցումը ցույց է տալիս, որ շահույթը նվազեցվել է հաշվեգրված վճարվելիք գումարի չափով: Եթե դրան համապատասխան կանխիկի արտահոսք չի եղել, ապա շահույթը պետք է ավելացվի այդ գումարի չափով: Շահույթն ավելացվում է հաշվեկշռի «հաշվեգրված վճարվելիք տոկոսներ» աճի չափով, որպեսզի այն կուտակայինից վերափոխվի կանխիկի:

«Հաշվեգրված վճարվելիք տոկոսները» կարող են նվազել, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կուտակված տոկոսները և ժամանակահատվածի սկզբի հաշվեգրումների մնացորդի որոշ մասն արդեն վճարվել են: Այս դեպքում շահույթը պետք է նվազեցվի «հաշվեգրված վճարվելիք տոկոսներ» հաշվի նվազման գումարի չափով:

Քայլ 2. Ավելացնել կորուստները և նվազեցնել օգուտները, որոնք չեն առաջացրել դրամական միջոցների ներհոսք (արտահոսք), սակայն հանդիսանում են գործառնական գործունեության տարր:

Վարկերի կորուստների պահուստին հատկացումներ և մաշվածք: «Բ բանկի» օրինակում մատյանում կան հետևյալ երկու գրանցումները.

<i>31 դեկտեմբեր 20x5</i>		
Վարկերի կորուստների պահուստին հատկացումներ	300	
Վարկերի կորուստների պահուստ		300
Վարկերի կորուստների գծով ծախսերը գրանցելու համար (\$30,000 վարկի 1 տոկոսի չափով)		
<i>31 դեկտեմբեր 20x5</i>		
Մաշվածության ծախսեր	200	
Կուտակված մաշվածք		200

Համակարգիչների մաշվածքի գրանցման համար

Մատյանի գրանցումներից երևում է, որ շահույթը նվազեցվել է \$300 և \$200 գումարներով, սակայն կանխիկ միջոցների հոսք տեղի չի ունեցել: Հետևաբար, կուտակային սկզբունքով հաշվարկված շահույթը պետք է ավելացվի այդ գումարների չափով՝ այն կանխիկի սկզբունքին համաձայնեցնելու համար:

Շահույթը պետք է ավելացվի այն ծախսերի գումարի չափով, որոնք ոչ մի ազդեցություն չեն ունեցել կանխիկի վրա, որպեսզի այն կուտակայինից վերափոխվի կանխիկի:

Քայլ 3. Ճշգրտել շահույթը գործառնական ակտիվներից և պարտավորություններից առաջացած զուտ դրամական հոսքերով.

Սա անուղղակի մեթոդի վերջին քայլն է: **Չուտ դրամական հոսքը** նշանակում է, որ ներկայացվում է դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի տարբերությունը (զուտ մեծությունը): **Համախառն դրամական հոսքը** նշանակում է, որ միջոցների ներհոսքը և արտահոսքը պետք է ներկայացվեն առանձին-առանձին:

«Բ բանկի» հաշվեկշռից երևում է, որ տրամադրված վարկերի մնացորդը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում աճել է \$30,000, իսկ ներգրավված ավանդների մնացորդն աճել է \$40,000, որոնց չափով էլ պետք է կրճատվի շահույթը:

Անուղղակի մեթոդի նշված երեք քայլերից հետո կարելի է լրացնել դրամական հոսքերի հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքեր տողը, ինչպես ներկայացված է աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 19-ում ընդհանուր ներկայացված է դրամական հոսքերի անուղղակի մեթոդով հաշվարկի դեպքում շահույթի ճշգրտումը:

Գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերի որոշումը ուղղակի մեթոդով.

Ուղղակի մեթոդի քայլերն են.

1. եկամուտների և ծախսերի հաշվետվության յուրաքանչյուր տարր կուտակային սկզբունքից փոխարկել կանխիկի սկզբունքի
2. եկամուտների և ծախսերի հաշվետվությունում օգուտները և կորուստները նվազեցնել մինչև զրո
3. հաշվարկել գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից առաջացած դրամական հոսքերը:

Քայլ 1. Եկամուտների և ծախսերի հաշվետվության յուրաքանչյուր տարր կուտակային սկզբունքից փոխարկել կանխիկի սկզբունքի:

Ուղղակի մեթոդում կանխիկի սկզբունքի է փոխարկվում եկամուտների և ծախսերի յուրաքանչյուր տարր, այն դեպքում, երբ անուղղակի մեթոդի ժամանակ կանխիկի սկզբունքի էր փոխարկվում շահույթը: Փոխարկման գործընթացը ներկայացված է աղյուսակ 20-ում:

(1) և (2) սյունակները ուղղակիորեն վերցված են եկամուտների և ծախսերի հաշվետվությունից (աղյուսակ 15): (3) սյունակը նախատեսված է կուտակային սկզբունքից կանխիկի սկզբունքին անցման ճշգրտումներն իրականացնելու համար, որի տվյալները վերցված են եկամուտների և ծախսերի հաշվետվությունից և համեմատական հաշվեկշռից:

Տոկոսային եկամուտ: Խնդիրը կայանում է նրանում, որ որոշվի, թե \$1,100 տոկոսային եկամտի որ մասն է եղել դրամական ներհոսք (հավաքագրվել): «Հաշվեգրված ստացվելիք տոկոսները» ակտիվային հաշիվ է և փոխկապված է շահույթի հետ: Օրինակում հաշվեգրված տոկոսագումարների \$700 ավելացումը ստացվում է հետևյալ գործառնությամբ.

31 դեկտեմբերի 20x 5

Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ	700	
Տոկոսային եկամուտ		700

Տարեվերջին կուտակված տոկոսները գրանցելու համար

Մատյանի գրանցմանը նայելով կարելի է տեսնել, որ \$700 տոկոսային եկամտի համապատասխան դրամական հոսքը չի եղել: Հետևաբար, տոկոսային եկամուտը պետք է նվազեցվի այդ գումարի չափով:

Եկամուտների և ծախսերի հաշվետվության «տոկոսային եկամուտ» հաշիվը պետք է նվազեցվի հաշվեկշռի «հաշվեգրված ստացվելիք տոկոսներ» հաշվի աճի չափով, որպեսզի այն կուտակայինից վերափոխվի կանխիկի:

Համապատասխանաբար, «տոկոսային եկամուտը» պետք է աճի «հաշվեգրված ստացվելիք տոկոսներ» նվազման գումարի չափով:

Տոկոսային ծախսեր: Անհրաժեշտ է որոշել, թե \$200 տոկոսային ծախսերի որ մասն է դրամական արտահոսք եղել: «Հաշվեգրված վճարվելիք տոկոսները» կուտակված պարտավորություններ են, որոնք փոխկապված են շահույթի հետ: «Բ բանկի» օրինակում կուտակված վճարվելիք տոկոսների հաշվում չկա մնացորդ, սակայն եթե մնան գրանցում լինել, ապա այն կունենար հետևյալ տեսքը.

Ամսաթիվ

Տոկոսային ծախս	xxx	
Հաշվեգրված վճարվելիք տոկոսներ		xxx

Հաշվեգրված վճարվելիք տոկոսները գրանցելու համար

Մատյանի այս գրանցումը ցույց է տալիս, որ տոկոսային ծախսերն ավելացվել են հաշվեգրված վճարվելիք գումարի չափով, մինչդեռ դրան համապատասխան կանխիկի արտահոսք տեղի չի ունեցել: Հետևաբար տոկոսային ծախսը պետք է նվազեցվի այդ գումարի չափով:

Եկամուտների և ծախսերի հաշվետվության «տոկոսային ծախս» հաշիվը պետք է նվազեցվի հաշվեկշռի «հաշվեգրված վճարվելիք տոկոսներ» հաշվի աճի չափով, որպեսզի այն կուտակայինից վերափոխվի կանխիկի:

Համապատասխանաբար, «տոկոսային ծախսը» պետք է աճի «հաշվեգրված վճարվելիք տոկոսներ» նվազման գումարի չափով:

Վարկերի կորուստների պահուստին հատկացումներ և մաշվածք: Անհրաժեշտ է պարզել, թե \$300 և \$200 ծախսերի որ մասն է եղել դրամական միջոցների արտահոսք: «Բ բանկի» օրինակում մատյանում կան հետևյալ երկու գրանցումները.

31 դեկտեմբեր 20x5

Վարկերի կորուստների պահուստին հատկացումներ	300	
Վարկերի կորուստների պահուստ		300

Վարկերի կորուստների գծով ծախսերը գրանցելու համար (\$30,000 վարկի 1 տոկոսի չափով)

31 դեկտեմբեր 20x5

Մաշվածության ծախսեր	200	
Կուտակված մաշվածք		200

Համակարգիչների մաշվածքի գրանցման համար

Մատյանի գրանցումներից երևում է, որ \$300 և \$200 գումարներով կանխիկ միջոցների արտահոսք տեղի չի ունեցել:

Եկամուտների և ծախսերի հաշվետվությունում արտացոլված ծախսերը, որոնք ազդեցություն չեն ունեցել դրամական միջոցների շարժի վրա, պետք է զրոյացվեն, որպեսզի դրանք կուտակայինից վերափոխվեն կանխիկի:

Քայլ 2. Եկամուտների և ծախսերի հաշվետվությունում օգուտները և կորուստները նվազեցնել մինչև զրո:

«Բ բանկի» օրինակում մնան գործարքներ չկան: Եթե այդպիսիք լինեին, ապա դրանք պետք է ավելացվեին աղյուսակ 20-ում:

Քայլ 3. Հաշվարկել գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից առաջացած դրամական հոսքերը:

Վարկեր: «Բ բանկի» հաշվեկշռից երևում է, որ վարկերն աճել են \$30,000, իսկ վարկերի հնարավոր կորուստների պահուստը (կոնտրակտիվային հաշիվ) աճել է \$300-ով: Դրամական հոսքերի վրա ազդում է միայն վարկերի տրամադրման գործառնությունը և այն գրանցվում է որպես դրամական արտահոսք գործառնական գործունեությունից: Վարկերից դրամական հոսքերը

գրանցվում են զուտ մեծությամբ որպես «վարկային ներդրումներ» հաշվի զուտ փոփոխություն: Այս մեծությունը կարելի է վերցնել միայն հաշվեկշռից:

Ցայահանք ավանդներ: «Բ բանկի» համեմատական հաշվեկշռից երևում է, որ ցայահանք ավանդներն աճել են \$40,000, որը դրամական ներհոսք է: Այս գործառնություններից դրամական հոսքը հաշվետվությունում ներկայացվում է որպես ավանդային հաշիվների զուտ փոփոխություն:

Ուղղակի մեթոդի նշված երեք քայլերից հետո կարելի է լրացնել դրամական հոսքերի հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքեր տողը, ինչպես ներկայացված է աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 22-ում ներկայացված են գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքերի հաշվարկման ուղղակի մեթոդի քայլերը:

Քայլ 3. Որոշել ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի որոշումը

Ներդրումային գործունեությունը կապված է գործառնական գործունեությունում չներառված ակտիվների հետ: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է վերլուծել հաշվեգրված ակտիվներից և պարտավորություններից, կանխավճարված եկամուտներից և ծախսերից, գործառնական ակտիվներից և պարտավորություններից տարբեր ակտիվների ազդեցությունը դրամական հոսքերի վրա:

Ներդրումային գործառնություններին վերաբերվող հաշիվները «Բ բանկի» հաշվեկշռում ներդրումային արժեթղթերը և համակարգիչներն են:

Ներդրումային արժեթղթեր: «Բ բանկի» օրինակում ներդրումային արժեթղթերն աճել են \$10,000, որի հետևանքով տեղի է ունեցել դրամական միջոցների արտահոսք:

Համակարգիչներ: «Բ բանկի» հաշվեկշռից երևում է, որ համակարգիչներն աճել են \$3,000-ով, իսկ «կուտակված մաշվածություն» հաշիվը՝ \$200-ով: Քանի որ մաշվածության կուտակումը դրամական միջոցների հոսքի հետ չի առնչվում, իսկ համակարգիչները ձեռք են բերվել հետաձգված վճարումով, ապա դրամական միջոցների հոսք այս գործառնություններից տեղի չի ունեցել:

Աղյուսակ 23-ը ներկայացնում է Դրամական հոսքերի հաշվետվության «դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից» տարրը:

Քայլ 4. Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի որոշումը

Ֆինանսական գործունեություն են համարվում գործառնական գործունեությունում չներառված պարտավորություններին և բաժնետիրական կապիտալին վերաբերվող գործառնությունները: «Բ բանկի» օրինակում դրանք են կանոնադրական կապիտալը և միջբանկային վարկը:

Կանոնադրական կապիտալ: Համաձայն հաշվեկշռի, բանկի կանոնադրական կապիտալն աճել է \$50,000: Արդյունքում, բաժնետոմսերի թողարկումից բանկն ունեցել է \$50,000 դրամական ներհոսք: Կապիտալին վերաբերվող դրամական հոսքերը «դրամական միջոցների հոսքի» հաշվետվությունում ներկայացվում են համախառն մեծությամբ:

Բանկերից ներգրաված վարկեր: «Բ բանկի» համեմատական հաշվեկշռից երևում է, որ բանկերից ներգրաված վարկեր հաշիվն աճել է \$60,000, որը դրամական ներհոսք է: Այս գործառնություններից դրամական հոսքը հաշվետվությունում ներկայացվում է որպես ներգրաված վարկային հաշիվների զուտ փոփոխություն:

Աղյուսակ 24-ը ներկայացնում է «դրամական հոսքերի հաշվետվության» ֆինանսական գործունեության հատվածը:

Նախորդ աղյուսակները միավորվում են «Դրամական միջոցների հոսքի» ամփոփ հաշվետվության մեջ, որը ներկայացված է աղյուսակ 25-ում (անուղղակի մեթոդ) և աղյուսակ 26-ում (ուղղակի մեթոդ):

Ուշադրություն պետք է դարձնել, որ զուտ եկամտի համապատասխանեցումը գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքին կատարվում է, մույնիսկ, եթե գործառնական գործունեությունից դրամական հոսքերը ներկայացված են ուղղակի մեթոդով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է դրամական միջոցների հոսքը:
2. Ո՞րն է դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակը:
3. Թվարկել գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունից ստացված դրամական հոսքերի մեջ ընդգրկվող հոդվածները:
4. Ի՞նչ մեթոդներ են կիրառվում դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կազմման նպատակով, նշել դրանց տարբերությունները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք: Երևան, 26 դեկտեմբերի 2002 թ.
2. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (IAS).1997 թ.
3. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ: Երևան, 1998 թ.
4. Հաշվապահական հաշվառման ձեռնարկ, Երևան, Գիրք 2, Մովսիսյան Թաթուլ 2001թ., 264 էջ
5. Հաշվապահի համառոտ ուղեցույց, հատոր 3, Երևան, Մովսիսյան Թաթուլ, 2002թ., 224 էջ
6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, Երևան, 07 դեկտեմբերի 1997թ.
7. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենք, Երևան, 26 դեկտեմբերի 1997թ.
8. Валютные и финансовые операции. И.Я.Носкова. Учебник для вузов. – М.: Финансы, ЮНИТИ, 1998 г., 334 с.
9. Валютные расчеты: задачи и решения. В.Е.Черкасов – Производственное издание, М.: «Финансы и статистика», 1998 г., 128 с.
10. Зарубежные стандарты учета и отчетности. О.В.Соловьева - Учебное пособие, М.: Атлантика-Пресс, 1999 г., 288 с.
11. Организация бухучета в коммерческом банке. О.А.Антонюк, Г.М.Кирисюк – М.: АО «Столетие», 1998 г., 180 с.
12. Словарь банковских терминов. Дж.М.Розенберг - М.: Инфра-М, 1997 г., 360 с.
13. Ценные бумаги. В. И.Колесников. Учебник. - М.: «Финансы и статистика», 2001 г., 448 с.
14. Principles of Bank Accounting & Reporting. Edwards J.Don, Cynthia D.Heagy. - USA, American Bankers Association, 1991, 485 p.

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Հրապարակվող հաշվեկշիռ	14
Աղյուսակ 2. Հավելավճարով գնված արժեթղթի մաշվածք	41
Աղյուսակ 3. Ջեդչատոկոսի ամորտիզացիա	42
Աղյուսակ 4. Եկամտի գրանցման ընթացք	44
Աղյուսակ 5. Սպառողական վարկի ամորտիզացման կառուցվածքը	53
Աղյուսակ 6. Վարկերի պահուստի ճևարման քեսք	54
Աղյուսակ 7. Լիզինգի հաշվարկ	63
Աղյուսակ 8. Բարդ տոկոսի հաշվարկ (եռամսյակային)	70
Աղյուսակ 9. Բարդ տոկոսի հաշվարկ (ամսական)	70
Աղյուսակ 10. Պարզ և բարդ տոկոսի ազդեցությունը տարեկան եկամտաբերության վրա	70
Աղյուսակ 11. Հետաձգված հարկի հաշվարկ 1	86
Աղյուսակ 12. Հետաձգված հարկի հաշվարկ 2	86
Աղյուսակ 13. Ֆինանսական արդյունքների հաշվետվությունը 2000 – 2003թթ.	87

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա	Ի
Ակրեդիտիվ , 149	Իրական արժեք , 119
Անալիտիկ հաշիվներ, 32	
Անուղղակի կամ համեմատագրման մեթոդ, 184	Լ
Արժեկտրոն (Coupon Interest Rate), 72	Լոռո , 50
Արժեկտրոնային (Coupon Interest Rate) տոկոսադրույք, 72	
Արժուքային ածանցյալ գործիքներ, 68	Խ
Արտարժույթ , 61	Խնայողական դեպոզիտի հաշիվներ, 129
Արտարժույթի փոխակերպում, 62	
Արտհաշվեկշռային (հետհաշվեկշռային) հաշիվներ, 32	Կ
	Կանխավճարված եկամուտներ, 40
Բ	Կանխավճարված ծախսեր, 41
Բաժնետիրական կապիտալ , 174	Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր, 49
	Կապիտալ , 173
Բանկումատներ, 50	Կոնտրահաշիվներ (հակահաշիվներ), 43
Բարդ տոկոս, 136	Կրեդիտային քարտ, 143
	Կրոս - կուրս, 62
Գ	Կուտակային հաշվապահությունը և ժամանակաշրջանի պայմանը, 39
Գլխավոր գիրք , 36	Կուտակված (հաշվեգրված) ակտիվներ, 41
Գործառնական հաշիվներ, 128	Կուտակված (հաշվեգրված) պարտավորություններ, 42
Գործառնական վարձակալություն, 117	Կուտակման (հաշվեգրման) սկզբունք, 39
	Ղ
Դ	Ղամապատասխանեցման սկզբունքը, 39
Դերետային քարտ , 142	Ղաշվային պլան, 30
Դեպոզիտ, 127	Ղաշվապահական բանաձև, 37
Դիվիդենտներ (շահաբաժիններ), 176	Ղաշվապահական հաշվառում, 9
Դրամական հոսքերի հաշվետվություն, 179	Ղաշվապահական հաշվառման ստանդարտներ, 15
Դրամական շուկայի դեպոզիտների հաշիվ, 129	
Դրամական միջոցների հոսքերի էֆեկտիվ (արդյունավետ) տոկոսադրույք, 72	Ղաշվապահական հաշվեկշիռ , 46
Դրամագիտական արժեք, 58	Ղաշվապահական ցիկլ, 34
	Ղաշվետվական արժույթ, 61
Ե	Ղավելավճար, (Premium), 73
Եկամուտների ճանաչման սկզբունք, 39	Ղատուկ պահուստ, 104
Երաշխիք (երաշխավորություն), 151	Ղիմնական դեպոզիտներ, 130
	ՂԳ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը, 62
Զ	
Զեղչատոկոս , 72	Ծ
Զուտ եկամուտ , 44	Ծճգրտող հաշիվներ, 39
	Ծճգրտված փորձնական հաշվեկշիռ, 44
Ը	
Ընդհանուր պահուստ , 104	Ս
Ընթացիկ եկամտաբերություն, 74	Սատյան, 36
	Սշտական հաշիվներ, 45
Թ	
Թիվ 21 ստանդարտ, 61, 117	Ն
	Նոստրո հաշիվներ , 50
Ժ	Ներդրումային արժեթղթեր, 71
Ժամկետային ավանդի հաշիվ, 129	Ներկա արժեք, 73, 119
Ժամանակավոր կամ նոմինալ հաշիվներ, 44	
	Վ
Շ	Վավերապայմաններ, 35
Շուկայական տոկոսադրույք , 72	Վարկ , 98
	Վարկային գիծը և /կամ/ օվերդրաֆտ, 152
Ո	Վարձակալություն, 117
Ոչ գործառնական հաշիվներ, 128	Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ,
Ոչ ռեզիդենտներ, 61	

Չ

Չեկային հաշիվ, 128
Չբաշխված շահույթ, 44
Չճշգրտված փորձնական հաշվեկշիռ, 38

Պ

Պայմանական ակտիվ և Պայմանական պարտավորություն, 149
Պայմանական դեպքեր, 23, 153
Պարզ տոկոս, 135

Պարտադիր պահուստավորում, 120

Պարտքային արժեթղթեր, 72
Պլաստիկ քարտ, 142
Պոտենցիալ պարտավորություններ, 28, 153

Ռ

Ռեզիդենտներ, 61

Ս

Սինթետիկ հաշիվներ, 32
Սկզբնական հաշվառման փաստաթղթեր, 35
Ստանդարտներ, (ՀՀՀՀՍ), 15

(ԿՀԿՊ), 103

Տ

Տեղեկատվական ռիսկ, 10

Ց

Ցպահանջ դեպեզիտային հաշիվներ, 128
Ցպահանջ հաշիվներ, 128

ՈՒ

Ուղղակի կամ եկամուտների և ծախսերի հաշվետվության մեթոդ, 184

Փ

Փակող գրանցումներ, 44
Փոխանակման փոխարժեք, 61
Փոխարժեքային տարբերություններ, 62
Փոխառու, 128
Փոխատու, 128

Օ

Օվերդրաֆտ, 143

Ֆ

Ֆակտորինգ, 113
Ֆինանսական գործիք, 148
Ֆինանսական հաշվետվություններ, 10
Ֆինանսական պարտավորագրեր, 152
Ֆինանսական վարձակալություն, 117

NOW հաշիվներ, 128

Հ ա ս մ ի կ Խ ա չ ա տ ը յ ա ն
Գ ո հ ա թ Խ ա չ ա տ ը յ ա ն

Հ Ա Շ Վ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ա Ռ Ռ Մ Ը
Բ Ա Ն Կ Ե Ր ՈՒ Մ

Խմբագիր՝

Համակարգչային ձևավորող՝

Լարիսա Նադարյան

Աննա Գևորգյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ